

ՀԱԿՈՒՄ ՄԱՆԱՄԱՐՅԱՆ

ԱՄԵՏԱԲԵՇԻ ԹԵՂՈՒՑԸ

ԶՈՂԱՍԵՂԱՆԻՆ ԵՆ ԴՐՎԱԾ

ԼՈՌՎԱ ՄԱՐԶԻ

ԹԵՂՈՒՑ

ԵՎ ՇԵՆՈՂ ԳՅՈՒՂԵՐԸ

ԻՐԵՆՑ ՆԱՐԱԿԻՑ

ԱՆՏԱՌՆԵՐՈՎ

ԱՂԵՏԱԲԵՐ ԹԵՂՈՒՏԸ

ՋՈՐԱՍԵՂԱՆԻՆ ԵՆ ԴՐՎԱԾ
ԼՈՌՎԱ ՄԱՐԶԻ
ԹԵՂՈՒՏ
ԵՎ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԵՐԸ
ԻՐԵՆՑ ՀԱՐԱԿԻՑ
ԱՆՏԱՌՆԵՐՈՎ

ԸՆԴԵՐՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Անհատները հարստանում են, հայ ժողովուրդը կորցնում է կյանքի հենարանները

Վերջին տարիներին մեր երկրում կտրուկ փոխվել է ընդերքի նկատմամբ պետական վերաբերմունքը: Անընդունելիորեն պարզեցվել ու հեշտացվել է ընդերքի ուսումնասիրության արտոնագիր ու շահագործման թույլտվություն ստանալը: Տասնամյակ առաջ այդպիսի թույլտվություններ ստանալու համար ներկայացված նախագծերը մանրագին ուսումնասիրվում էին պետականորեն հատուկ լիազորված գերատեսչություններում, իսկ յուրաքանչյուր գերատեսչության եզրակացությունն էլ հենվում էր մասնագիտական ստորաբաժանումների եզրակացությունների վրա: Կարևորվում էին Գիտությունների ակադեմիայի տեսակետը և հասարակայնության կարծիքը: Ճիշտ է, այդ ժամանակներում էլ կամայական որոշումներ էին կայացվում, սակայն չկար այսօրվա համատարած կամայականություններն ու երկրորդ կարծիքը արհամարհելու մթնոլորտը և օգտագործվում էր երկրի մասնագիտական ներուժը: Դրա հետ մեկտեղ հանքահանությունը «հանուն օտարերկրյա ընկերությունների» և անտառածածկ տարածքները հանքահանության տակ դնելը խստիվ արգելված էին:

Ներկայումս, համաշխարհային Նոր կարգերի գաղափարներին համապատասխան (ՀՀ-ն այդ խնդրում ամենաառաջատար երկրներից է) օտարվում-փոշիացվում են պետությանը՝ ժողովրդին պատկանող հարստությունները: Ազգային պետության հիմքերը քայքայող, հետևաբար և, հակաժողովրդական այդ գաղափարը խորացնելու և անդարձելի դարձնելու նպատակով ընդունվել են դրսից թելադրված նոր օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Պարզեցվել-արագացվել է մեր երկրում իրականացվելիք նախագծերի, այդ թվում նաև ընդերքօգտագործման նախագծերի ընթացակարգը, իսկ պարզեցման ու արագացման անվան տակ ուղղակի քայքայել-ամայացրել է նախկին ընթացակարգը:

Այժմ վերը նշված ուսումնասիրություններին փոխարինում է մեկական ներկայացուցիչներով կազմված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը, որով և հիշյալ ծրագրերին ընթացք է տրվում: Այդտեղ որոշումները կայացվում են առանց լուրջ քննարկումների, իսկ քվեարկության արդյունքի վճռորոշը, թերևս հանձնաժողովի նախագահի տրամադրվածությունն է: Փաստորեն նշված հանձնաժողովը զուտ ձևական է, երբեմն էլ՝ քաղաքականացված:

Առանձին դեպքերում էլ հանձնաժողովներ են ստեղծվում իբրև պետության և ժողովրդի շահերի պաշտպանության, սակայն իրականում՝ օրինականության պատրանք ստեղծելու նպատակով: Օրինակ, Քաջարանի հանքավայրի-կոմբինատի վաճառքի նպատակահարմարության և մյուս խնդիրները վեր հանելու նպատակով ստեղծված պետական հանձնաժողովը մեկուսացված էր առք ու վաճառքի գործընթացից:

Ասածին պետք է ավելացվի, որ 2005թ. բնապահպանության նախարարը լուծարեց իր ղեկավարած գերատեսչության երկրաբանական վարչության գիտական խորհուրդը, որը համակարգում ու ամփոփում էր երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվությունները և հանքավայրերի շահագործման խնդրում ուներ իր վճռորոշ ձայնը: Նախարարը լուծարեց նաև բնապահպանության նախարարության պետական էկոլոգիական փորձաքննական վարչության հանձնաժողովը, որը ամփոփում էր իրականացվելիք նախագծերի մասնագիտական ու անկախ փորձագետների եզրակացությունները և հաստատման ներկայացնում իր եզրակացությունը: Անտեսվում է նաև Գիտությունների ակադեմիայի և հասարակայնության տեսակետը:

Այժմ ընդերքի հարստությունների ուսումնասիրության (հետագա շահագործման նպատակով) արտոնագիրը տալիս է ՀՀ բնապահպանության նախարարությունը (գործընթացը ցույց է տալիս, որ նախարարության փոխարեն վճիռը կայացնում է նախարարը, իսկ նա էլ կատարում է իր վերադասի թելադրանքը, Այդպիսի գործելակերպը բնորոշ է նաև մյուս նախարարությունների համար): Նույն բնապահպանության նախարարությունը ընդունում և հաստատում է նշված ուսումնասիրությունները և իրականացնում դրանց հիման վրա ստեղծված շահագործվելիք հանքավայրերի նախագծերի էկոլոգիական փորձաքննությունը և տալիս՝ փորձագիտական եզրակացություն:

Դժբախտությունը միայն այդքանով չի սահմանափակվում: Մեր երկրում գերատեսչությունները գլխավորում են հիմնականում տվյալ ոլորտի ոչ մասնագետները, որոնք գերատեսչություններում առկա մասնագիտական ներուժը օգտագործելու փոխարեն հիմնականում, գործում են վարչահրամայական եղանակով: Հավանաբար նաև այդ պատճառով է, որ պետականորեն այնպիսի ծրագրեր են իրականացվում կամ նախատեսում են իրականացնել, որոնք նույնիսկ ուղղված են հայ ժողովրդի ու հայոց պետականության դեմ:

Ներկայումս աննախադեպ մեծ ակտիվություն է տիրում Հայաստանի ընդերքի հետազոտման, գնահատման, վերաբաշխման ու շահագործման խնդիրներում: Հայաստանի ընդերքի հարստություններին տիրանալու ուղղությամբ առանձնահատուկ հետաքրքրվածություն են դրսևորում օտարերկրյա ընկերությունները, ինչը պայմանավորված է այն բանով, որ մեր երկրում առկա են հանքավայրերը այլևայլ ճանապարհներով ձեռք բերելու, օրինականությունը շրջանցելով գերշահույթ ստանալու և անպատիժ մնալու լայն հնարավորություններ:

Հայտնի է, որ ոչ միայն հանքարդյունաբերության, այլև ջրի, հաղորդակցության միջոցների, էներգետիկայի և այլ ոլորտներին տիրանալու և ներդրումներ կատարելու ձգտում ունեցող ընկերություններն աշխատում են խուսափել ուժեղ պետական կառավարման համակարգ ու հստակ գործող օրենքներ ունեցող երկրներից և իրենց այսպես կոչված ներդրումները կատարում են նշված հարցերում թույլ երկրներում: Թույլ երկրներում որևէ ոլորտի արդյունավետ ու անվտանգ կառավարման, նոր աշխատատեղերի ստեղծման, սոցիալական, առողջապահական ու էկոլոգիական իրավիճակների բարելավման պատրվակներով առանձին ոլորտների տիրացած ընկերություններն իրենց խոստումների ու պարտավորումների ճիշտ հակառակն են անում: Նրանք ներդրումներ կատարելու փոխարեն, հիմնականում չարաշահում են տվյալ ոլորտի կարողությունները, բարձրացնում են ապրանքների ու ծառայությունների գները, գիշատչորեն են շահագործում բնական պաշարները (օրինակ, հանքարդյունաբերության ոլորտում վերամշակում են հիմնականում մետաղների բարձր պարունակությամբ հանքանյութերը, ոչ արդյունավետ են օգտագործում մետաղների կորզումը...), կոպտորեն ոտնահարում մարդու իրավունքները:

Նշված ընկերությունները թույլ երկրներում տրամաբանությանն ու բարոյականությանը չհամապատասխանող գերշահույթներ են ստանում: Օրինակ, 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Քաջարանի մոլիբդենի հանքավայրի շահագործումից սեփականատերը (ընկերությունը) 190 մլն դոլարի եկամուտ է ունեցել, որից մաքուր շահույթը կազմել է 120 մլն դոլար...

Հանքարդյունաբերության ոլորտում ՀՀ պետական լիազորված մարմինների ղեկավարների գործունեությունից կարելի է անել այն տխուր հետևությունը, որ կարծես հայ ժողովրդի ապագան նրանց առանձնապես չի հուզում կամ հայ ժողովրդի լինել-չլինելու վճիռ են կայացրել և ղեկավարվում են հակազգային-հակամարդկային այն մտայնությամբ, թե միևնույն է, այդ հանքերը ապագայում կարող է շահագործվեն, ուրեմն թող շահագործվեն հենց իրենց իշխանության օրոք: Գուցե այդպիսի մտածելակերպն է պատճառը, որ ցանկանում են մեր երկրում ուրանի հանքահանություն իրականացնել, ինչպես նաև անտառատարածքները հանքահանման տակ դնել, ինչը չէր արվում ոչ ցարիզմի և ոչ էլ բոլշևիզմի օրոք:

Ոչ մասնագետ և անձնական շահ փնտրող բարձրաստիճան որոշ պաշտոնյաներից, երկրում տիրող կաշառառության և անպատժելիության պայմաններում հնարավոր է սպասել այնպիսի խոշորածավալ ավերածություններ ու անդառնալի կորուստներ, որոնց իրականացման համար մեր ոխերին թշնամիները պետք է որ հարյուրավոր միլիարդներ ծախսեին: Գիտության ու տեխնիկայի այսօրվա բարձր զարգացածության պայմաններում պարզից էլ պարզ է, որ պետականությունն ու երկիրը կարելի է կորցնել առանց պատերազմում պարտվելու:

Մեր Հանրապետությունում բացակայում է այն հայեցակարգը, թե, ո՞ր հանքավայրերը ընդհանրապես չի կարելի շահագործել, ո՞ր հանքավայրերը պետք է պահպանվեն ապագա սերունդների համար կամ առկա յուրաքանչյուր հանածո հարստությունից տարեկան ի՞նչ քանակություն կարելի է օգտագործել (չկա նույն հանքատեսակի տարեկան օգտագործման չափաբաժնի սահմանումը):

Հանքավայրերի միաժամանակյա և հապճեպ օգտագործելու այսօրվա քաղաքականության ու ապօրինությունների և կամայականությունների պայմաններում, նաև նկատի ունենալով հանքահանման բնագավառում առկա նորագույն հզոր տեխնիկան, չի կարելի բացառել, որ Հայաստանի հանածո հարստությունները հաշված տարիների ընթացքում կսպառվեն, սակայն չափավոր օգտագործման պարագայում դրանցից մի քանիսը կարելի է հարյուրավոր տարիներ շահագործել: Օրինակ, Խորհրդային իշխանության տարիներին Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործվում էր տարեկան 7-8 մլն տոննա ծավալով, սակայն այժմ ցանկանում են տարեկան օգտագործել 20-25, հեռանկարում՝ նույնիսկ 40-45 մլն տոննա հանքաքար, երբ տասնամյակներ առաջ ծրագրված էր այդ հանքավայրը շահագործել 300-350 տարիների ընթացքում:

Զբավարարվելով աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկի՝ Քաջարանի և մի քանի այլ պղնձամոլիբդենային հանքավայրերի շահագործումով, այժմ բազմաթիվ ընկերություններ արտոնագրեր են ձեռք բերել լրացուցիչ ուսումնասիրելու և շահագործելու Թեղուտի, Նոր Գետիկի, Հանքավանի, Արմանիսի, Թուխ մանուկի և պղնձամոլիբդենային այլ հանքավայրերը:

ՀՀ բնապահպանության նախարարությունը միայն 2004-2006թթ. մի շարք ընկերությունների («ՄՀԱ», «Մեզո գոլդ», «Բեյզ մեթըլս», «Արմենիան ինթերնեյշնլ», «ԱԴՀԳ», «Արմենիակ», «Աթելիա ինվեստմենթ», «Հեմատիտ», «Նիկելի սար», «ԱՍՍԱԹ», «Սագամար», «Ինտերիեր», «Վարդանի զարթոնք», «Էյ Սի բրիջ», «Ակտիվ լեռնագործ», «Գրեյդ Ռեդմետ») (Սյունիքի մարզ՝ Մարջանի-Թոնդրիզեթի-Վարդանաձորի-Զրկապի-Մազրայի-Ցլաքարի, Արագածոտնի մարզ՝ Թուխմանուկի-Սիփանի, Լոռու մարզ՝ Մարցի-Արջուտի-Դեղին և Սև գետերի-Քարաբերդի-Արմանիսի-Ֆիոլետովոյի, Գեղարքունիքի մարզ՝ Ծարասարի-Գետիկի, Վայոց Ձորի մարզ՝ Ազատեկի-Թերպի-Սոֆի-Ենգիջայի-Ազատեկի, Շիրակի մարզ՝ Արջիձորի, Կոտայքի մարզ՝ Բացատի-Սառնաղբյուրի-Ցիցքարի-Պավլեյի-Չառի-Արջասարի-Նորի, Տավուշի մարզ՝ Լալիգյուղի հանքավայրերը) ոսկու 27 հանքավայրերում ուսումնասիրություններ կատարելու (հետագայում շահագործելու նպատակով) արտոնագրեր է տրվել: Արտոնագրեր են տրվում ոչ միայն անտառածածկ տարածքներում, այլև արգելոցներում:

Այսքանը միայն երեք տարիներին ոսկու հանքավայրերին տված արտոնագրերն են: Եթե դրան ավելացվի բազմամետաղային և այլ հանքավայրերին՝ վերջին 5-6 տարիներին տված արտոնագրերը (այսինքն նրանց շահագործման նախապատրաստելը), արդեն շահագործվողները և ոչ մետաղային հանքավայրերի ցանկը, ապա պարզ կդառնա, թե ինչ գիշատչային արագությամբ է հոշոտվելու Հայաստանի Հանրապետության օրգանիզմը (Վերջին 15 տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում արտադրվող գյուղատնտեսական մթերքները իրենց համային, բուրմունքի և որոկական այլ հատկանիշներով գերազանցում են շատ և շատ երկրներում արտադրվածներին: Ակնհայտ է, որ

լայնածավալ հանքարդյունաբերությունը գյուղատնտեսական մթերքը կդարձնի օգտագործման համար ոչ պիտանի):

Համարելով բարեկեցության հիմք և սերունդների գանձ, հայ ժողովուրդը հպարտացել է իր ընդերքի հարստություններով, սակայն ներկայումս, երբ համաժողովրդական այդ հարստությունը հիմնականում բաժին է հասնում սահմանափակ թվով մարդկանց, այն էլ՝ օտարներին, և միաժամանակ մահաթույն նյութերով աղտոտվում է միջավայրը՝ երկրի բնական հարստությունները բարեկեցության երաշխիքից ուղղակի վերածվում են համազգային չարիքի:

Հանքահանությունը օգտակար ու տանելի է իր չափի մեջ: Հանածո հարստությունները միաժամանակյա ու խոշոր ծավալներով շահագործումը նաև բազում անլուծելի խնդիրներ է առաջացնում: Ընդամենը մոտ 30 հազար քառ. կմ տարածք ունեցող Հայաստանը միաժամանակ չի կարող երաշխավորել համընդհանուր ու հապճեպ հանքահանություն և մարդու կյանքի համար տանելի պայմաններ: Արդյոք բացատրելու կարիք ունի՞ այն, որ մոտ ապագայում կտրականապես նվազելու են ավանդական երկրագործության մշտակայուն աշխատատեղերը, նվազելու է հողի բերրիությունը, կտրուկ խորանալու է աղբատությունը...

Այսօրվա հանքարդյունաբերության տրամաբանությունը հետևյալն է՝ հանք շահագործողները գերշահույթներ են ստանում և հանքանյութը սպառվելուց հետո վերադառնում են իրենց երկրները, որոշ իշխանավորներ և միջնորդներ հարստանում են, իսկ հայ ժողովրդին բաժին են հասնում՝ դատարկ հանքախորշեր, անառողջ ու բզկտված, իսկ երբեմն էլ մահ սփռող միջավայր, հազարամյակներ շարունակ ավերման ու կենդանի աշխարհին վտանգ սպառնացող հանքարդյունաբերական թափոններ, ինչպես նաև ոչնչացված գետերի, կիրճերի, անտառների, վարելահողերի, արոտավայրերի ու մշակութային օբյեկտների հուշեր:

Մի խոսքով՝ շահույթը անհատներին, իսկ ավերված ու կայուն աղտոտված բնական համակարգերը՝ հայ ժողովրդին:

Ահա թե ուր է տանում ոչ մասնագիտական պետական կառավարման համակարգը, օրենքների անտեսումը, դրսի թելադրանքով՝ բնության ավերման, սակայն ընկերություններին հարստացնող օրենքների ընդունումը, անձնական հարստություն կուտակելու մոլուցքը և տնտեսական ու քաղաքական խնդիրներում տհաս լինելը: Որոշ պաշտոնյաների անհեռատեսությունն այն աստիճան է, որ ամեն կարգի ներդրումը շահեկան է համարվում: Նրանք նաև չեն ցանկանում ընդունել, որ օրինակ, հանքարդյունաբերության ոլորտում նոր, ժամանակավոր աշխատատեղերի ստեղծմամբ, հիմնականում ոչնչացվում են մշտական աշխատատեղերը:

Հետագա զարգացումներում պետք է նկատի ունենալ, որ օրեցօր դեպի սպառում են գնում բնական չվերականգնվող, այդ թվում՝ մետաղային հանքերը, թռիչքաձև բարձրանում են մետաղների գները: Ահա թե ինչու, այժմ արդեն սկսել են շահագործել մետաղների ցածր պարունակությամբ հանքավայրերը: Իսկ Հայաստանի Հանրապետությունը բարձր լեռնային, հրաբխային երկիր է, հետևաբար և մեր ընդերքը, հիմնականում բազմամետաղային հանածո հարստություններ է պարունակում: Եթե չփոխվի մեր երկրում ընդերքի նկատմամբ վարվող քաղաքականությունը և չհամապատասխանեցվի հայ ժողովրդի ու հայոց պետականության շահերին, ապա ամենևին չի բացառվում, որ մոտ ապագայում մեր երկիրը մի ընդհանրական հանքավայր դառնա:

«Ազգ», 13.06.2007թ.

**ՋՈՐԱՍԵՂԱՆԻՆ ԵՆ ԴՐՎԱԾ ԼՈՌՎԱ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ
ԵՎ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԵՐՆ ԻՐԵՆՑ ՅԱՐԱԿԻՑ ԱՆՏԱՌՆԵՐՈՎ**

ՀՀ բնապահպանության նախարարության տված արտոնագրով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը արտոնվել է լրացուցիչ ուսումնասիրել և նպատակահարմարության դեպքում շահագործել Լոռվա մարզի Թումանյանի շրջանում գտնվող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը: Ըստ ընկերության ներկայացրած նախագծի. հանքավայրի ռելիեֆը բարդ է, կտրտված չորս կիրճով, որոնցով հոսող Շնող, Կռունկ, Պակասաջուր (Խառատաձոր), Դուքանաձոր գետերը մշտական ջրհոսք ունեն:

Ուսումնասիրության նպատակով ընկերությանը տրամադրվել է 1970 հա, որից 1589,6-ը՝ անտառային ֆոնդի, իսկ 380,4-ը՝ համայնքային հողեր են: Հանքարդյունաբերության տակ դրվելիք, ոչնչացվելիք տարածքը բնության հրաշալիքներից է: Այդտեղի անտառը, թերևս, մեր հանրապետության ամենալավ պահպանված ու ամենահարուստ կենսաբազմազանություն ունեցող հատվածն է: Կենդանիներից այդտեղ առկա են միջատների ..., սողունների 10, երկկենցաղների 2, թռչունների 86, ձկների 5, կաթնասունների 55 տեսակներ: Այդ կենդանիներից շատերը գրանցված են Հայաստանի և Միջազգային Կարմիր գրքերում: Այդ տարածքում կան հնագույն և այլ ժամանակաշրջանների հնագիտական ու պատմամշակութային բազում հուշարձաններ:

Թեղուտ և Շնող գյուղերի խմելու և ոռոգման ջրի մատակարարման միակ աղբյուրը Շնող գետն է, իսկ դրա վտակները սնվում են հանքահանման համար նախատեսվող տարածքներից:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության բաժնետոմսերի 81 տոկոսը պատկանում է Լիխտենշտեյնում գրանցված Vallex F. M. Establishment ընկերությանը, իսկ 19-ը՝ Ռուսաստանի քաղաքացի Վալերի Մեջլումյանին:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կողմից ներկայացված Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծը կազմվել է ՀՀ օրենքների կոպիտ խախտումներով: Չնայած դրան, ՀՀ բնապահպանության նախարարությունը փորձաքննության է ընդունել այդ նախագիծը և, առանց փորձաքննություն իրականացնելու, նախագծին դրական եզրակացություն է տվել:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը 2005թ. կազմել և ՀՀ բնապահպանության նախարարություն փորձաքննության է հանձնել «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը» (հետայսու՝ «Գնահատում»), իսկ 2006թ.՝ «Աշխատանքային նախագիծը»:

Հենց սկզբից ասենք, որ «Գնահատումը» և «Աշխատանքային նախագիծը» չեն ներառում ծրագրի բոլոր գործողությունները:

Ըստ այդ փաստաթղթերի՝ հանքահանում-հանքավերամշակումը տևելու է 25 տարի, և այդ ժամանակահատվածի համար բերվում են հանքաքարի, մակաբացման ապարների, արտադրական ու կենցաղային թափոնների, ծախսվելիք ջրի, կորզվելիք պղնձի, մոլիբդենի և ուղեկից մետաղների ծավալները, սակայն հողի խախտման-ոչնչացման, բուսականությանը, կենդանական աշխարհին, ջրային բնական օբյեկտներին, համայնքների հողերին հասցվելիք վնասները ներկայացվում են միայն 8 տարվա հաշվով:

Ընկերության պաշտոնատար անձինք խնդրին վերաբերող քննարկումներում, չնկատելու տալով ՀՀ օրենքների բացահայտ խախտումները, հավաստում են, որ հանքահանման առաջին փուլի՝ 8 տարիների աշխատանքներին զուգահեռ կկազմվեն ու համապատասխան մարմիններին կներկայացվեն մնացած 17 տարիներին հողին ու բուսակենդանական աշխարհին հասցվելիք վնասների վերջնական ծավալները:

Նախագծի գլխավոր բաղադրիչների՝ հողին, բուսակենդանական աշխարհին հասցվելիք վնասի իրական ծավալների ժամանակավոր կոծկումը, նախագիծը մաս-

մաս ներկայացնելու գործելակերպն անօրինական ու նրբորեն մշակված քայլեր են: Եթե իրականանա հանքավայրի նախագծային փաստաթղթերը երկու փուլով ներկայացնելու ընկերության նպատակը, և նա ստանա հանքավայրի առաջին փուլի շահագործման թույլտվությունն ու սկսի աշխատանքները, ապա գործընթացը կդառնա անկասելի: Քանի որ տարիներ անց, երբ նշված տարածքն արդեն վերածված կլինի արտադրական հրապարակի՝ շուրջօրյա աշխատանք, հորատումներ, պայթեցումներ, ծանր տեխնիկայի հռնոյուն, հանքաքարի հանման-մանրացման-աղալու-վերամշակման ընթացքում առաջացած մեծածավալ թափոններ և, ի վերջո, բզկտված-հոշոտված բնություն, մարդիկ ստիպված կլինեն հաշտվել այդ դժբախտության, որպես արդեն կատարված փաստի հետ (Ուսումնասիրողները նկարագրում են, որ, օրինակ, այժեղջերուն սովորաբար ինքնամոռաց հետապնդում է իր հորթին ճանկած գիշատչին, քանի դեռ հորթը կենդանության նշաններ է ցուցաբերում, սակայն երբ տեսնում է, որ հորթն արդեն մահացած է, ու գիշատիչը խժռում է նրան, այժեղջերուն թողնում է հետապնդումը և սկսում է հանգիստ արածել):

«Գնահատումը» և «Աշխատանքային նախագիծը», որպես հակաիրավական փաստաթղթեր, պետք է որ շրջանառությունից հանվեին, սակայն դրանք ոչ միայն շրջանառությունից չեն հանվել, այլև ՀՀ բնապահպանության նախարարությունը նախագծին դրական եզրակացություն է տվել, իսկ նախարարն էլ դարձել է այդ հանքավայրի շահագործման ջատագովը:

Ահա թե ինչն է պարտադրում անդրադառնալ անօրինական փաստաթղթերին:

Լեռնային աշխատանքներ

Այդտեղ ասվում է. «*Հանքավայրի բարենպաստ լեռնա-տեխնիկական պայմանները կանխորոշում են նրա բաց լեռնային աշխատանքներով մշակելու նպատակահարմարությունը: Բացհանքի վերջնական եզրագծում հանքաքարի պաշարները՝ 175 մլն տոննա, մակարացման ապարները՝ 91,5 մլն խմ: Տարեկան վերամշակվելու է 7 մլն տոննա հանքաքար: Հանքաքարում պղնձի պարունակությունը 0,355, իսկ մոլիբդենինը 0,0215 տոկոս է: Կիրառվելիք տեխնոլոգիայով հնարավոր է պղնձը կորզել 85, իսկ մոլիբդենը՝ 77 տոկոսով: 1991թ. Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում հաստատվել է 453,8 մլն տոննա հանքապաշար: 2001թ. հրավիրվել է կանադական «Strathkona Mineral Services Ltd» ընկերությունը: Այդ ընկերության հաշվետվությամբ՝ հանքաքարի պաշարները կարող են լինել նախկինում հաստատված պաշարներից 15 տոկոսով ավելին, իսկ պղնձի պարունակությունը 19 և մոլիբդենինը՝ 26 տոկոսով ավելին են: Ձեռնարկությունը թույլ կտա ստեղծել տարածաշրջանում նոր աշխատատեղեր, պատրաստել տարբեր բնագավառի մասնագետներ, աշխատողների թիվը շինարարության ժամանակ կկազմի 900, իսկ շահագործման ընթացքում 1100 մարդ: Հանքաքարի մշակումը նախատեսվում է մասամբ հորատա-պայթեցմամբ, մասամբ մեխանիկական փխրեցումով: Պայթուցիկ նյութերի պահպանման համար նախատեսված է 120 տ տարողությամբ հիմքային (նաև ծախսային) պահեստ: Բացհանքի աշխատանքային ռեժիմը կապված է հարստացման ֆաբրիկայի ռեժիմի հետ՝ 345 աշխատանքային օր, 3 հերթափոխ, 8-ժամյա տևողությամբ» (էջ 94-99):*

Անհրաժեշտ է հենց սկզբից ասել, որ այս ծրագրի իրականացմամբ ամբողջովին ոչնչանալու է հողի, ջրի, բուսականդանական աշխարհի համար հիմք ծառայող երկրաձևաբանական կառուցվածքը: Նախ, այսօր կյանք շնչող, կյանք պարզևող տարածքում կտրելու են ծառերն ու թփերը, հողի հետ մեկտեղ ոչնչացվելու են մյուս բուսատեսակները և բազմաթիվ կենդանիներ: Արդեն մերկացած սարալանջերից հեռացվելու են մետաղներ չպարունակող կամ քիչ քանակություն պարունակող ապարները, դրանք լցվելու են Դուքանաձոր և Կռունկ գետերի կիրճերը: Հանքաքարը հանելուց հետո մանրացնելու-աղալու են, ապա սղկելով՝ փոշի են դարձնելու, որից և

կորզելու են մետաղները, իսկ ջրախառն այդ փոշին, որը պարունակում է շատ բարձր խտություններով ծանր մետաղներ և կյանքի համար խիստ վտանգավոր այլ նյութեր և հայտնի է «պոչանք» անվամբ, լցնելու են Պակասաջուր գետի կիրճը, հենց՝ գետի հունը:

Ըստ նախագծի, բացահանքի հանքախոռոչը մոտ 600 մետր խորություն է ունենալու: Անորոշ է մնում դրանից տեղումների և մակերեսային ջրերը հեռացնելու խնդիրը, քանզի դրանք կարող են թափանցել ստորգետնյա ջրերի մեջ և իրենց մեջ լուծված ծանր մետաղների աղերով վարակել ստորգետնյա ջրերը: Չանդրադառնալով այդ հավանական հանքաերախից սպառնալիք մյուս վտանգներին, միայն ասենք, որ դրա հատակից բարձր նիշերում մոտակա տարածքներում գտնվող անտառները դժվար թե ապագա ունենան, հասկանալի է՝ ջրազրկման պատճառով:

ՀՀ-ում պղինձ ու մոլիբդեն կորզվում են այլ հանքավայրերում, այն էլ մեծ ծավալներով: Ո՞ր ենք շտապում: Ինչո՞ւ ենք մեզանից հետո եկող սերունդներին զրկում հանածո հարստություններից օգտվելու հնարավորություններից: Նաև, գուցե թեղուտի հանքավայրի խնդրում սպասենք մինչև բնությանը քիչ վնաս հասցնող և ավելի արդյունավետ տեխնոլոգիաների ի հայտ գալը: Առավել ևս, որ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը սահմանում է. *«Ընդերքի պահպանության հիմնական պահանջներն են ... օտակար հանածոների պաշարների լիակատար կորզումը և հիմնական ու համատեղ օտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի արդյունավետ օտաործումը»* (հոդված 51):

Պարզ չէ, թե ստեղծվելիք 900-1100 ժամանակավոր (25 տարվա տևողությամբ) աշխատատեղերը արդյո՞ք համարժեք են այսօր առկա այն աշխատատեղերին, ինչն ապահովում է ավանդական երկրագործությունը: Մարդիկ հենց այսօր պետք է գիտակցեն, որ եթե իրականանա հանքավայրի շահագործումը, ապա պետք է ընդհանրապես մոռանալ այդ և մոտակա վայրերում գյուղատնտեսական մաքուր սննդամթերք և անասնակեր արտադրելու մասին:

Նշված հանքավայրի շահագործման դեպքում թեղուտ և Շնող գյուղերը կկորցնեն նաև արոտավայրեր, հանգստի ու առողջական գոտիներ, զգալիորեն կնվազեն և վերջնականապես կվերանան խմելու և ոռոգման ջրերը:

Փաստաթղթերում ոչինչ չի ասվում, թե այդ գյուղերի բնակիչներից քանիսն են ընդգրկվելու նախատեսվող հանքարդյունաբերական աշխատանքներում և ինչ աշխատավարձերով: Մեծ հավանականությամբ, թեղուտի հանքարդյունաբերական աշխատանքներում կարող է ընդգրկվել նաև օտարերկրյա աշխատուժ:

Նույնիսկ, եթե ընդունենք, որ նշված 1100 կամ ըստ «Աշխատանքային նախագծի» 1432 աշխատատեղերը զբաղեցնելու է միայն տեղի համայնքը (պարզ է, որ մասնագիտական և այլ առումներով դա ուղղակի անհնար է), ապա հանքարդյունաբերության ավարտից հետո այդ նույն աշխատողներն ինչո՞վ են զբաղվելու և ինչպե՞ս են ապահովվելու իրենց գոյությունը, երբ արդեն այսօրվա ավանդական երկրագործության իրական հնարավորություններն արդեն սահմանափակված ու վերացված են լինելու: Բացի այդ, երկար տարիներ հանքարդյունաբերությամբ զբաղված բանվորներն արդեն օտարացած կլինեն ավանդական երկրագործությունից:

Ակնհայտ է, որ ժամանակավոր ենթադրյալ 1100 նոր աշխատատեղերի ստեղծմամբ կկորչեն ավանդական երկրագործության մշտակայուն աշխատատեղեր: Նաև պարզից էլ պարզ է, որ թեղուտ և Շնող գյուղերի հողամասերում հետագայում արտադրվելիք գյուղատնտեսական մթերքները, հանքարդյունաբերության հետևանքով աղտոտված միջավայրի պայմաններում, կկորցնեն քանակական ու որակական հատկանիշները: Նույնը կարելի է ասել նաև անտառի բարիքների՝ մրգերի, հատապտուղների, ուտելի բույսերի ու սնկերի մասին:

Փաստաթղթում ասվում է, որ հանքահանող ձեռնարկությունը պատրաստելու է *տարբեր բնաավառի մասնատներ*, սակայն չի ասվում, թե ձեռնարկության

փակվելուց հետո նրանք որտե՞ղ են դրսևորելու իրենց մասնագիտական կարողությունները: Պարզ չէ՞, որ դա ոչ թե բարեգործություն է, այլ սեփական ծրագրերի իրականացման գործիք: Այդ մասնագետները նաև ակամա մասնակից են լինելու անզուգական բնական համակարգի՝ իրենց իսկ կյանքի հենարանի ոչնչացմանը:

Ըստ նախագծի, մակաբացման ապարները լցվելու են Դուբանաձոր գետի հուն-կիրճը, սակայն բացակայում են այդ գետի հունի տեղափոխման միջոցառումների ծրագրերը: Նույնը կարելի է ասել նաև Կռունկ գետի մասին:

Չնայած այն բանին, որ «Գնահատման» 133-րդ էջում ասվում է., որ *«պայթուցիկ նյութերի պահեստը պետք է լինի այնպիսի հեռավորության վրա, որպեսզի պայթուցիկ նյութի ամբողջ պաշարի պայթյունի դեպքում հողի տատանումները լինեն անվտանգ մոտակա շենքերի և շինությունների համար»*, սակայն «Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի օբյեկտների տեղաբաշխման նախնական սխեմայում» պայթուցիկ նյութերի պահեստը տեղադրված է երկրորդ հերթի պոչամբարից ընդամենը 200, իսկ առաջին հերթի պոչամբարից՝ 900 մետր հեռավորության վրա, այսինքն՝ պոչամբարների անմիջական հարևանությամբ: Թեղուտ գյուղը այդ պահեստից հեռու է 900, իսկ Շնող գյուղը՝ 2600 մետր (ուղիղ գծով):

Նաև նշվում է, որ *«պայթուցիկ նյութերի պահեստը պետք է լինի ցանկապատված, ունենա երկու ելք և առանձին պահակակետ, պահեստը պետք է ունենա շանթարձեղ, պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից, քրունտային ջրերի ներկայությունից և արևի ուղիղ ճառագայթումից»*: Ջարմանալիորեն դա ներկայացվում է որպես հակավթարային միջոցառում, այն դեպքում, երբ թվարկվածները ոչ այլ ինչ են, քան այդ կարգի շինությունների համար նորմատիվային պարտադիր պայմաններ: Հետաքրքիր է, ո՞ւմ մտքով կարող է անցնել՝ պայթուցիկ նյութերի պահեստը կառուցել առանց տանիքի, շանթարձեղի և առանց հսկողության շահագործել:

Ելնելով նշված սխեմայից, կարելի է ասել, որ պայթուցիկ նյութերի պահեստի տեղի ընտրությունը կատարված է առանց հաշվի առնելու դրանից սպառնացող վտանգի հետևանքները: Օրինակ, միայն պոչամբարի հավանական ավերումն արդեն դժոխային իրավիճակ կստեղծի ոչ միայն Լոռվա մարզում, այլ նաև Դեբեդ գետի հովտում:

Նշված երկու փաստաթղթերում խոսք չկա նաև տարածաշրջանի բնակավայրերին հարող ճանապարհներով պայթուցիկ նյութերի տեղափոխման անվտանգության խնդիրների մասին:

Ընդհանրապես, եթե խոսվում է պահեստի հավանական պայթյունի մասին, ապա պետք է իրավիճակային վերլուծություն կատարվի և ասածը ամրապնդվի ուսումնասիրություններով և դրանց վրա արված գիտական կանխատեսումներով: Բացարձակորեն անորոշ է մնում, թե 120 տոննա պայթուցիկ նյութի միաժամանակյա պայթյունը ինչպես է ազդելու հարակից բնակավայրերի և թերևս ամենաաղետաբերի՝ պոչամբարի վրա: Չի կարելի բացառել նաև այն հավանականությունը, որ այդպիսի պայթյուն կարող է տեղի ունենալ հանքավայրի շահագործման վերջին տարիներին, երբ պոչամբարում արդեն կուտակված կլինի հարյուրավոր միլիոն տոննա պոչանք:

Փաստաթղթերում բացակայում է նաև պայթեցումների հետևանքով սպասվելիք բացասական հետևանքների վերլուծությունը: Նշվում է, որ յուրաքանչյուր պայթեցման համար օգտագործվելու է 26 տոննա պայթուցիկ նյութ, սակայն չի ասվում, թե այդ պայթյուններն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ շինությունների ու մարդկանց առողջության վրա: Ով թեկուզ մեկ-երկու օր անցկացրել է շահագործվող հանքավայրերի հարևանությամբ բնակավայրերում, օրինակ, Քաջարանում, հասկացել է, թե ինչպիսի ստրեսային վիճակում են հայտնվում այդ

վայրերի բնակիչները, որոնք ցանկացած գործողություն կատարելիս մտածում են հերթական պայթեցման մասին և տագնապով սպասում դրան:

Պայթեցումների հետ կապված մեկ այլ սպառնալիք: Հայտնի է, որ Հայաստանում փոքր ուժգնության երկրաշարժեր շատ հաճախ են լինում: Արդյո՞ք բացառվում է պայթեցումների և նշված երկրաշարժերից որևէ մեկի ալիքների ամպլիտուդաների համընկնումը և դրա հետևանքով ավերածությունների առաջացումը, այդ թվում՝ պոչամբարի:

Նախագծի տեքստում նշվում է, որ Թեղուտի հանքավայրում հաստատվել է 459 մլն տոննա հանքապաշար («Հաշվեկշռային պաշարների բնութագիրը» աղյուսակում այն 453,8 մլն տոննա է), որը կանադացի մասնագետների լրացուցիչ գնահատմամբ կազմում է 528 մլն տոննա: Ընկերության գործադիր տնօրեն Գագիկ Արզումանյանի հավաստմամբ, ձեռնարկության գործունեության երկրորդ փուլում տարեկան վերամշակվելու է 14 մլն տոննա և ապա՝ 21 մլն տոննա հանքաքար, այսինքն՝ երկրորդ փուլում կվերամշակվի 357 մլն տոննա հանքաքար: Փաստորեն տարածաշրջանը դառնալու է աղետի գոտի, այն էլ՝ մշտապես:

Պոչային տնտեսություն

«Գնահատման» մեջ ասվում է. «Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի տեղադրման տարածքի ընտրությունը կատարված է մի քանի տարբերակների համեմատությունից հետո: Բոլոր նշված տարբերակներում տեղադրվող ծավալները անհամեմատ ավելի փոքր են, քան վերամշակվող հանքաքարի ծավալները: ...դիտարկված տարբերակներից ամենահարմարը Պակասաջուր օետի հովտում կազմակերպվելիք պոչամբարն է: Հակառակ դեպքում աղտոտման կենթարկվեին մի քանի վտակների ծորակներ: Պոչամբարը կազմակերպվելու է Պակասաջուր օետի հովտում, որը հնարավորություն կտա տեղադրելու **180 մլն խմ պոչեր**: Պահանջվող տարածքը պոչամբարի և նրան հարակից կառուցվածքների համար կազմում է 170-180 հեկտար: Պոչամբարի տակ, օետի հունով նախատեսվում է կառուցել ջրհեռ կոլեկտոր՝ կազմված մետաղական խողովակից և վերցված երկաթբետոնե պատյանի մեջ, իր վրա ունենալով 20 մ բարձրությամբ երկաթբետոնե ջրընդունիչ հորեր: **Պոչամբարից ներքև նախատեսվում է կառուցել պահպանիչ հողային պատնեշ**: Պատնեշը և ստեղծված մակերեսը լրիվ մեկուսացվում է **կալի շերտով, թույլ չտալով, որ պոչամբարից ներծծված ջրերը աղտոտեն իրենից ներքև գտնվող ջրերը և հողատարածքը**: Ստեղծված ծավալի չափսը ընտրված է ելնելով այն պայմանից, որ պոչամբարի չնախատեսված վթարի դեպքում տեղավորի նրանից արտահոսվող պոչերի քանակը: Պակասաջուր օետի ջրերի հեռացման համար դիտարկված են երկու տարբերակ՝ օետի ջրերի հեռացումը ձախափնյա թունելով կամ պոչամբարի նախաօծային միջերից վերև բաց ջրանցքով: Անկախ այն բանից, թե ինչպես կկազմակերպվի **գետի ջրերի հեռացումը՝ թունելով թե բաց ջրատարով**, առաջ էր օալիս անհրաժեշտություն օետի ձախ ավտում օտնվող վտակների ջրերի համար կառուցել բաց ջրանցք, ճիշտ է, ավելի փոքր չափսերի: Նախաօծում ընդունված է օետի ջրերի հեռացումը կատարել բաց ջրանցքի միջոցով: Համաձայն հիդրոկենսաբանների եզրակացության, **բաց ջրանցքը հնարավորություն կտա մի քանի տարվա ընթացքում հիմնականում վերականգնել ջրակենսաբազմազանությունը այդ հատվածում և վերականգնել ձկների պաշարները**: Գետի ջրերի հեռացման համար նախատեսվում է պոչամբարի վերնամասում երկու վտակների հատման կետում կառուցել բետոնե պատվար: Ջրհեռ ջրանցքը նախատեսվում է կառուցել օետի ձախ լանջով, նա իր ճանապարհին ընդունելու է բոլոր ձախափնյա վտակների ջրերը: Նա, անցնելով ամբողջ պոչամբարի երկայնքով ավարտվելու է պոչամբարից ներքև Շնող օետի հովտում: Ջրանցքը երեսպատվելու է բետոնով և երկաթբետոնով» (էջ 99-101):

Անհրաժեշտ է նշել, որ նախատեսվող պոչամբարի տեղանքը ընտրված է բնակավայրերից բարձրադիր վայրում, ջրագոյացման-ջրամատակարարման

հանգույցում, անտառածածկ-բարեբեր վայրում, բարձր թեքությունների վրա և գետի հունում: Թվարկածներից յուրաքանչյուրն արդեն բացառում է այդ վայրում պոչամբարի կառուցումը:

Այն հավաստումը, թե պոչամբարի տեղի ընտրությունը կատարվել է լուրջ ուսումնասիրություններից հետո, կարծում ենք, այդպես չէ: Առկա կիրճերից ընտրվել է մեծ ծավալ ունեցողը:

Փորձագետ Ա. Թարվերոյանի՝ Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքային նախագծի փորձաքննական եզրակացությունն (11.08.2006թ.) արդեն հիմք է տալիս մտածել, որ պոչամբարի տեղը ընտրելիս հաշվի չեն առնվել անգամ հայտնի փաստերը: Այդտեղ ասվում է. «Հաշվի առնելով, որ **(պոչամբարի) բետոնե պատվարի հիմքը գտնվում է ճաքճքված, փշրված դիրքիտների և պորֆիրիտների վրա**, պատվարի անվտանգությունն ապահովելու համար, անհրաժեշտ է հիմքում նախատեսել քայքայված ապարների ցեմենտացիա»: Նույն թվականի հունվարի 30-ին հեղինակի տված մեկ այլ եզրակացության մեջ նշվում է. «Աշխատությունում (նախագծում) բավական մանրամասն ուսումնասիրված են հանքաջրերը, նրանց բաղադրությունն ու քանակը, սակայն բացակայում են ուսումնասիրության տվյալներ **խառատանոց գետի ջրավազանում**, որտեղ նախատեսվում է կառուցել պոչամբարը, ստորգետնյա ջրերի և նրանց վրա պոչամբարի ազդեցության գնահատման վերաբերյալ:

Դատարկ ապարների լցակույտի առաջին հերթը նախատեսվում է իրականացնել Դուքանաձոր գետի ջրավազանում: Աշխատությունում բացակայում են միջոցառումներ լցակույտի տարածքից Դուքանաձոր գետի ջրերի հեռացման և Շնող գյուղի անվտանգության ապահովման վերաբերյալ»:

«Գնահատման» 133 էջում որպես բնապահպանական միջոցառում է ներկայացվում *պոչանքների ինքնահոս տեղափոխումը*, այն դեպքում, երբ դա բխում է նախատեսվող ֆաբրիկայի և պոչամբարի միջերի տարբերությունից: Չի բացառվում, որ գովաբանվող այդ պոչատարն իր շահագործման 25 տարիների ընթացքում կարող է վթարի ենթարկվել և կայուն աղտոտիչներով ապականել շրջակա տարածքը: Եթե այստեղ պոչամբարի և հարակից կառուցվածքների համար պահանջվող տարածքը կազմում է 170-180 հա («Աշխատանքային նախագծում»՝ 214 հա), ապա 139 էջում պոչամբարի տակ դրվելիք տարածքը ներկայացվում է ընդամենը 53,5 հա, հասկանալի է, տնտեսական վնասը ամբողջությամբ չներկայացնելու միտումով:

Պոչամբարի առումով բազում հարցեր են առկախվում.

ա. Պոչամբարի ներքևում կառուցվելիք հողային պահպանիչ պատնեշը և նրանով ստեղծվելիք ծավալի մակերեսի կավային շերտը արդյո՞ք մշտապես մնալու են կայուն, թե՞ ժամանակի ընթացքում խաթարվելու-քայքայվելու են, կամ ինչպիսի՞ն է լինելու նշված կավային շերտի ջրամեկուսացման ունակությունը: Արդյո՞ք պոչամբարի վթարի դեպքում դրանից մեծ արագությամբ արտահոսող խյուսը չի պատռելու այդ պատնեշը: Հայտնի է, որ ջրիկացած (հեղեղկած, խյուս դարձած) պոչանքի հոսքը ունի մեծ ավերիչ ուժ: Եթե անգամ ընդունենք, որ այդ պատվարն ու կավի շերտը հավերժորեն կայուն-անխաթար են մնալու, և պոչամբարից ներծծված ջրերն էլ այդտեղից չեն հեռանալու, ապա արդյոք այդ տարածքում, օրինակ, կարելի է արածեցում կատարել կամ այդտեղ աճած խոտը օգտագործել որպես անասնակեր, կամ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվելու, որ հարյուրավոր տարիներ շարունակ կանխվի գյուղատնտեսական նպատակներով այդ տարածքի օգտագործումը:

Մեծ թեքությունների և միլիոնավոր տոննա պոչանքի ճնշման պայմաններում պատվարի ու կավի շերտի կայունության ապահովման երաշխիքները հիմնագուրկ ու ծիծաղելի են: Այդտեղ, մեծ հավանականությամբ, օրինակ, սողանքներն ու փլուզումները կդառնան շարունակական երևույթներ:

Տազնապ հարուցող ևս մի խնդիր: Եթե ընկերությունը հետագայում որոշի օգտագործել առկա ամբողջ պաշարը՝ 528 մլն տոննա հանքաքարը, ապա այդ դեպքում պոչանքի գումարային ծավալը կկազմի մոտ 521 մլն տոննա: Մեր կարծիքով, փաստաթղթում ներկայացված միջոցառումը («Ստեղծված ծավալի չափսը ընտրված է ելնելով այն պայմանից, որ պոչանքարի չնախատեսված վթարի դեպքում տեղավորի նրանից արտահոսվող պոչերի քանակը») ստեղծվելիք ծավալը, հավանաբար, հենց երկրորդ պոչանքարն է: Այդ վարկածի օգտին է խոսում նաև այն, որ ձեռնարկության օբյեկտների տեղադրման ուրվագծում նշված ծավալը ներկայացվում է որպես **երկրորդ հերթի պոչանքար**, որի զբաղեցրած տարածքը ավելի քան կրկնակի մեծ է, քան առաջին պոչանքարինը:

Հանքավայրին՝ հակաիրավական ու զարտուղի ճանապարհով տիրանալու փորձերն ակնառու են նաև հանքավայրին վերաբերող մյուս հարցերում:

բ. Նախատեսվում է փոխել Պակասաջուր գետի հունը: Ըստ այդմ, գետի ջրերը պետք է անցնեն կիրճի լանջում կառուցվելիք ջրատարով, արհեստական ջրանցքով: Ինչպես է ապահովվելու այդ ջրատարը նորոգ վիճակում պահելն ու անխափան գործունեությունը: Ջրանցքի նորոգման ու վերակառուցման ի՞նչ ծրագիր կա, կամ այդ աշխատանքները կատարելու ընթացքում ծագելիք խնդիրները լուծելու նպատակով արդյոք չի՞ նախատեսվում զուգահեռ երկրորդ ջրատարի կառուցումը: Նաև հարյուր կամ հազար տարվա հաշվով ի՞նչ քանակությամբ ֆինանսական միջոցներ են պետք այդ ջրատարը նորոգ ու գործուն վիճակում պահելու համար: «Գնահատում» և «Աշխատանքային նախագիծ» փաստաթղթերում այդ մասին որևէ խոսք չկա: Այժմ դժվար չէ կանխատեսել, որ հանքարդյունաբերության 25 տարիներից կապահովվի ջրատարի գործուն վիճակը, իսկ հանքը սպառվելուց-փակվելուց հետո և դրանից տարիներ անց այն աստիճանաբար կքայքայվի և գետը բնականաբար «կհիշի» ու կվերադառնա իր իսկական հունը, սակայն, այս անգամ գետը իր բնական հունով կհոսի արդեն պոչանքարի մարմինը ճեղքելով, ինչը աղետաբեր կլինի նաև Դեբեդ գետի հովտի համար:

Ջրատարի կարճաժամկետ և երկարաժամկետ անվտանգությունն ապահովող ծրագրեր ու երաշխիքներ չկան:

գ. Գիտական գրականությունից հայտնի է, որ տարածքի ինտենսիվ շահագործումը, օրինակ, խոշորածավալ պոչանքարների կառուցումը, տվյալ տարածքում ակտիվացնում է երկրաբանական տարաբնույթ գործոնների ի հայտ գալը՝ կարստագոյացում (լուծվող ապարների արդյունքում խոռոչների առաջացում), նստվածքային երևույթներ, սողանքներ, փլուզումներ, հեղեղումներ և այլն:

Արդյո՞ք մանրագնին ուսումնասիրված են նախատեսվող պոչանքարի հատակը և հարակից տարածքները: Կառուցվելիք պոչանքարի առկայությունը արդյո՞ք կարող է հանգեցնել վերը թվարկած գործոններից թեկուզ մեկի առաջացումը:

դ. Հայտնի է, որ պոչանքարի վթարների պատճառ կարող են հանդիսանալ տարերային աղետները, տեղի ոչ ճիշտ ընտրությունը, կառուցման անբարեխիղճ աշխատանքները, ինչպես նաև այդ տարածքում երկնային մարմինների, այդ թվում ինքնաթիռների անկումը, պատերազմական իրավիճակում պատահական կամ նպատակային ռմբակոծումը, դիվերսիան և այլն: Օրինակ, 1965թ. երկրաշարժը Չիլիում ավերել է պղնձահանքերի մի շարք պոչանքարներ: Մի քանի ռուպեների ընթացքում զոհվել է ավելի քան 200 մարդ: Բոլոր դեպքերում էլ ավերածությունները կատարվել են շատ արագ և պայմանավորված են եղել պոչանքարի թեքությունների սողանքով և պոչանքների ջրիկացմամբ: Որոշ դեպքերում ավերումներն ուղեկցվել են յուրահատուկ երևույթներով՝ ալիքի և ձայների, ինչպես նաև պոչանքի արտանետման հետևանքով ջրիկացած պոչանքի մակերեսին ձագարանման խորանքների առաջացմամբ:

Թվարկածների նկատմամբ ի՞նչպիսի պաշտպանվածություն ու անվտանգության երաշխիքներ ունի կառուցվելիք պոչամբարը:

ե. Պոչամբարի և մակաբացման ապարների կույտերի վերին գոտիներում ձևավորված հավանական հեղեղումները (սելավները) ի՞նչ վտանգ կարող են ներկայացնել այդ օբյեկտների համար: Հանքահանման ավարտից հետո պոչամբարի և մակաբացման ապարների կույտերի անվտանգությունը ապահովելու համար ի՞նչ ժամանակահատվածում դեռևս անհրաժեշտ կլինի ֆինանսներ ծախսել, օրինակ՝ 10, 100, 1000 տարիների ընթացքում և ի՞նչ քանակությամբ:

զ. Կառուցվելիք պոչամբարի մակերեսից և լճակի ափերից տարեկան քանի՞ տոննա փոշի (այն պարունակում է մեծ քանակություններով ծանր մետաղներ և կյանքի համար վտանգավոր այլ նյութեր) կարող է մթնոլորտ արտանետվել և դա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ տարածաշրջանի, մանավանդ Թեղուտ և Շնող գյուղերի համար: Համենատուրյան համար ասենք, որ Թեղուտում նախատեսվածից մոտ 20 անգամ փոքր ծավալով Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարի մակերեսից տարեկան մթնոլորտ է արտանետվում 431,5 տոննա փոշի:

է. Գիտական գրականությունից հայտնի է, որ պոչամբարում փոշու առաջացումը զգալի է, երբ պոչամբարի լճակի ափերն ու պատվարները բարձրանում են շրջակա ռելիեֆից վեր և ընկնում մթնոլորտի շիթային հոսքերի գոտիներում: Եղանակային որոշ պայմաններում պոչամբարների վրա առաջանում են փոշու հզոր ամպեր, որոնք քանու ազդեցությամբ տարածվում են մեծ հեռավորություններ, հաճախ ծածկելով բնակավայրերը և մեծ վնաս պատճառում:

Հետաքրքիր է իմանալ. Թեղուտում կառուցվելիք պոչամբարի լճակի ափերն ու պատվարները, տեղի ռելիեֆի համենատուրյամբ ի՞նչ բարձրություն են ունենալու: Այդ պոչամբարի փոշին, կախված քանու ուղղությունից ու հզորությունից, կարո՞ղ է աղտոտել նաև պոչամբարից բարձր նիշերում գտնվող վայրերը, այդ թվում՝ ջրագոյացման օբյեկտները:

ը. Կառուցվելիք պոչամբարի և մակաբացման ապարների կույտերի տարածքներում ի՞նչ մակարդակներում են գտնվում գրունտային և արտեզյան ջրերը և այդ օբյեկտներից քանվող կեղտաջրերով, ծանր մետաղներով, աղտոտվելու-վարակվելու ի՞նչ հավանականություն կա:

թ. Հայտնի է, որ չվերամշակված հանքաքարի համենատուրյամբ, պոչանքներում և հանքարդյունաբերության մյուս թափոններում զգալիորեն նվազում են արժեքավոր բաղադրիչները, սակայն նրանց տեսակարար մակերեսը մեծանում է տաս հազարից մինչև հարյուր հազար, իսկ քամման (ֆիլտրացման) գործակիցը՝ տասից մինչև հարյուր անգամ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում նրանց արտազատման համար, քանի որ նշված թափոնների քամման գրադիենտը զգալիորեն բարձր է (պոչանքում՝ 30 անգամ), քան բնական պայմաններում: Բացի դրանից, մթնոլորտային տեղումները և մանավանդ պոչամբարում խյուսի ջրիկ ֆազան զգալիորեն մեծ քանակությամբ թթվածին ու ածխաթթու գազ են պարունակում, քան գրունտային ջրերը: Վերը թվարկված գործոնների գումարային ազդեցությունը հարյուրավոր ու հազարավոր անգամ մեծացնում են դրանցով քանվող ջրում ծանր մետաղների աղերի պարունակությունը: Պոչամբարներում ջրիկ խյուսի անընդհատ լցվելը, ինչպես նաև հատակում հակաքամման էկրանների և շրջափակող պատվարների բացակայությունը բերում են 40-70 տոկոսով ջրի կորստի, որի հետևանքով ինտենսիվ հեղեղման են ենթարկվում շրջակա տարածքները, իսկ ստորգետնյա ջրերը աղտոտվում են ծանր մետաղների աղերով:

Պարզ է, որ թվարկած վտանգավոր երևույթները կարող են ի հայտ գալ նաև Թեղուտի հավանական կառուցվելիք պոչամբարի պարագայում, իհարկե, եթե կամայականորեն իրականացվի տվյալ հանքավայրի շահագործման խելահեղ ու կործանարար ծրագիրը:

Ժ. Պոչանքները բույսերի համար սնուցման տարրեր (ազոտ, ֆոսֆոր, կալիում) չեն պարունակում, կամ ոչ բավարար քանակով են պարունակում: Պոչանքի մեջ գործնականում բացակայում են հողային միկրոօրգանիզմներ, սակայն հաճախ դրանք պարունակում են հավելյալ քանակությամբ ջրում լուծվող աղեր և ծանր մետաղներ: Հաճախ դրանք ունենում են բուսաթունավոր (ֆիտոտոքսիկ) հատկություն:

Արդյո՞ք արված են գիտական կանխատեսումներ տարածաշրջանի երկրագործությանը հավանական հանքարդյունաբերության կողմից սպառնացող վտանգի ծավալների գնահատման, նաև հողի բերրիության անկման առումով, քանզի անխուսափելի կլինի հողի բերրիության կտրուկ անկումը նաև քննարկվող տարածաշրջանում:

Այստեղ հիմնականում օգտագործվել են՝ Л. А. Манукян, Безопасная эксплуатация хвостохранилищ горных предприятий Армении, Ереван, 2003:

Арзуманян С. С. Эколого-экономическая оценка хвостохранилищ обогатительных фабрик цветной металлургии Армении, «Вестник» (МАНЭБ), С. Петербург, 2000, N7 (31), с. 29-32.

Թեղուտ, Շնող և Դեբեդ գետի հովտի բնակավայրերով և, ընդհանրապես, այդ տարածքներով մտահոգ անձինք, եթե ցանկանում են կանխատեսել, թե Թեղուտի հանքավայրի շահագործմամբ ինչ իրավիճակում կհայտնվեն այդ վայրերը, պետք է այցելեն Նազիկ գետի կիրճը և տեսնեն, թե ինչ անտանելի իրավիճակ է ստեղծել այնտեղ կառուցված և այսօր շահագործվող Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի պոչամբարը, որտեղ պոչանքի ծավալը չի գերազանցում 1 մլն խմ: Նույնը կարելի է ասել դրա հարևանությամբ՝ Նահատակ կիրճում կառուցված պոչամբարի մասին: Համեմատության համար ասենք, որ Թեղուտի հանքավայրի մասնակի և լրիվ շահագործման դեպքում պոչանքը կկազմի համապատասխանաբար՝ 180 և 540 մլն խմ:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղի բնակիչների 17 տարի առաջ գրած (27.04.1989թ.) նամակը՝ ուղղված ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիային, Շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտեին, Առողջապահության նախարարությանը և Ղափանի շրջկոմին, երբ այդ ժամանակ ընդամենը 10 տարի էր, ինչ շահագործվում էր Արծվանիկի տարածքում տեղադրված Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարը, որը 22 կմ հեռու է հանքավերամշակման արտադրությունից:

Նամակում ասվում է.

«Եկոլոգիական ընդհանուր վատթարագույն վիճակում Արծվանիկ գյուղի պրոբլեմը առաջին հայացքից աննշան կթվա, բայց նա հանդիսանում է ընդհանուր վիճակի կործանարար արդյունքներից մեկը: Եվ մենք՝ գյուղի բնակիչներս, դարձել ենք մեր կործանման ականա հանդիսատեսներ:

Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի Արծվանիկի պոչուկամբարը (պոչամբարը), որը տնօրինում է Ղափան քաղաքի բարձունքները, իր հրեշավոր ճանկերի մեջ է առել Արծվանիկի սովխոզի ամենաբարեբեր վարելահողերը և տնամերձ հողերը: Տասը տարվա արդյունքով մենք ականատես ենք լինում շրջակա միջավայրի (նկատմամբ) այնպիսի բռնության, որի հետ համակերպվելը հանցագործություն է մեր և մեր սերունդների նկատմամբ:

Այսօրվա վիճակով, գիտակցելուց զատ, հնարավորություն է ընձեռված ցույց տալու մեր վերաբերմունքը և նպաստելու կարգավորմանը:

Արդեն ակնհայտորեն նվազել է սովխոզի վարելահողերի և այգիների բերքատվությունը, բացարձակորեն այն նկատվում է թափոնները շրջապատող տնամերձ հողամասերում:

Աճել են անասունների հիվանդությունները և՛ սովխոզում, և՛ անհատ սեկտորում (լեյկոզ, թունավորումներ և այլ ախտահարումներ): Չորանում է պոչամբարին հարող անտառաշերտը: Կլիմայական կտրուկ փոփոխության է ենթարկվել (տեղի) ամբողջ բնությունը: Իսկ ի՞նչ այլափոխությունների է ենթարկվում մարդկանց առողջությունը: Առանց հետազոտությունների արդեն բացահայտ է աղետամոքսային, հիպերտոնիկ, շնչուղիների, խոցային հիվանդությունների աճը: ...Քանի որ մինչև այժմ հրապարակի վրա չկան շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցության համակարգված հետազոտություններ, ուստի օրվա հրամայական պահանջ ենք համարում միջոցներ ձեռնարկել պոչամբարի հետագա ծավալումը Արծվանիկի ձորում դադարեցնելու և ռեկուլտիվացիան արագացնելու համար: Խնդրում ենք նաև ընդհանրացնել կատարված հետազոտությունները տարբեր գերատեսչություններում (բիոքիմիայի ինստիտուտ, գունավոր մետալուրգիայի գ/ա վարչություն և այլն) և միջոցներ ձեռնարկել բնապահպանական ընդհանուր շեղումները վեր հանելու նպատակով...»:

Անտառ

«Գնահատման» մեջ ասվում է. *«խախտվող տարածքը □ տնվում է Լալվարի անտառտնտեսության արևելյան մասում: Այդտեղ առկա են բոխի, կաղնի, թխկի, սոճի, հացենի, հաճարենի, լորենի, դաժի, ընկուզենի, խնձորենի, տանձենի և այլ ծառատեսակներ, թփերից՝ հոն, մասրենի, սզնի, գլեռենի, մոշենի ևն: Հազվա□յուտ (անտառային) ծառատեսակներից առկա են ընկուզենի, տանձենի, խնձորենի: Ուսումնասիրություններից պարզվել է, որ խախտվող տարածքի 50 տոկոսից ավելի տարածքում առկա է բնական վերած 1 հա-ում 2000-3000 հատ քանակով, որը կարող է ծառայել տնկանյութ»* (էջ 30-31): *«Հատման կենթարկվի մոտավորապես 127000 ծառ՝ 60400 խմ փայտանյութի մասսայով, 10-20 սմ կոճղի տրամա□ծով 32332 հատ, 21-30 սմ – 67437 հատ, 31-40 սմ – 20982 հատ և 41 սմ և ավելի կոճղի տրամա□ծով – 7000 հատ ծառ»* (էջ140):

Արդեն ասվել է, որ ընկերությանը ուսումնասիրության նպատակով հատկացված հողատարածքը 1970 հեկտար է, որից 1589,6 հեկտարը անտառային ֆոնդի հողերն են, սակայն «Գնահատում» փաստաթղթում նշվում է, որ ուսումնասիրվել է միայն 600-ը (էջ 31):

Նշված 1589,6 հեկտարը պատկանում է Շնողի անտառտնտեսությանը, որի ամբողջ տարածքը կազմում է ընդամենը 6619,4 հա: Փաստորեն, բնաջնջման տակ է դրվում անտառտնտեսության ամբողջ տարածքի մոտ 24 տոկոսը: Այդտեղ պետականորեն վերջին ուսումնասիրությունները կատարվել են 1987թ.: Ըստ այդ ուսումնասիրությունների, այն լավ պահպանված և բնական վերածն ապահովող անտառ է, ուր մեկ հեկտարի հաշվով փայտանյութի տարեկան վերածը կազմում է 1,5 խմ, իսկ 1589,6 հեկտարի փայտանյութի պաշարը, ուսումնասիրություններ կատարելու ժամանակ գնահատվել է 186 հազար խմ:

Տեսականորեն այժմ այդ տարածքում փայտանյութը կարող էր կազմել մոտ 230 հազար խմ: Այդ թիվը պետք է ճշտվի: Այս անտառներում, ի պատիվ տեղի բնակչության ու անտառապահների, ճգնաժամային տարիներին անհամեմատ քիչ հատումներ են կատարվել, քան հանրապետության մյուս անտառներում, և այսօր այդ անտառը գտնվում է շատ լավ վիճակում:

Փաստաթղթի 107-րդ էջում ասվում է, որ *խախտվող տարածքի 50 տոկոսից ավելի տարածքում առկա է բնական վերած 1 հա-ում 2000-3000 հատ քանակով, որը կարող է ծառայել որպես տնկանյութ*, սակայն ինչպես մյուս հարցերում, այստեղ նույնպես բաց է մնում խնդրի լուծումը, թե ո՞ր կազմակերպությունն է զբաղվելու այդ

գործով, անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցները ո՞վ է հատկացնելու, ինչպե՞ս են ապահովվելու դրանց տնկման, խնամքի, պահպանության, պաշտպանության և այլ հարցերը (մեկ այլ տեղ, էջ 129, ասվում է, որ նշված տնկանյութի մի մասը նույնպես կարող է հատվել):

Մեր նախնական գնահատմամբ, բնական վերած ապահովող է այդ անտառատարածքի մոտ 85 տոկոսը: Այդ դեպքում, 1-5 տարեկան տնկանյութի քանակը կկազմի մոտավորապես 2,6-3,9 մլն: Անգամ եթե վերածն ապահովող տարածքը հաշվենք 50 տոկոսով, ինչպես ասված է «Գնահատումում», ապա այսօր այդ անտառահատվածում (1589,6 հա) կարող է լինել մոտավորապես 1,6-2,4 մլն մատղաշ ծառ:

Չնայած «Գնահատման» տեքստում ասվում է, որ հանքավայրի առաջին հերթի շահագործման ընթացքում հատվելու է 127000 կամ 127700 ծառ (տես՝ էջ 140 և 129), սակայն նույն փաստաթղթում բերված համապատասխան աղյուսակների հաշվարկներից պարզվում է, որ հատվելու է 170833 ծառ, այսինքն՝ 43133-43833 ծառով ավելի, քան գրված է նույն փաստաթղթի տեքստերում: Ընկերությունն ավելի քան 43 հազար ծառ պակաս ցույց տալով, բերում է փայտանյութի նույն ծավալը, ինչ 127000 ծառի դեպքում էր՝ 60400 խմ: Այստեղ նույնպես տեքստում բերված տվյալները չեն համապատասխանում աղյուսակներին: Տեքստում նշված 60400-ի փոխարեն աղյուսակների զուևարային հաշվարկը կազմում է 60859 խմ, այսինքն՝ 459-ով ավելի, քան տեքստում է:

Հարց է առաջանում՝ հավատալ տեքստի՞ն, թե՞ աղյուսակներին:

«Աշխատանքային նախագծում» հատման ենթակա ծառերի թիվը 158618 է (բնափայտը՝ 42616 խմ): Այդտեղ անտեսված է «Գնահատում» փաստաթղթում առկա «Երկրորդ հերթի դատարկ ապարների լցակույտի տակ հատկացված տարածքի ծառահատումների հաշվեգնահատման ամփոփագիր» աղյուսակը, ուր ներկայացված է 12466 ծառ, փայտանյութը՝ 18553 խմ:

Հիշյալ աղյուսակներից տեղեկանում ենք, որ 16 սմ տրամագիծ ունեցող մեկ կաղնու հատումից հասցվելիք վնասը կազմում է ընդամենը 10000 դրամ, սոճու՝ 10 սմ- 7500 դրամ, հացենու՝ 22 սմ- 17500 դրամ, հաճարենու՝ 24 սմ- 17530 դրամ, լորենու՝ 30 սմ-24100 դրամ, թխկենու՝ 32 սմ- 20910 դրամ, ընկուզենու՝ 14 սմ- 30000 դրամ, խնձորենու՝ 26 սմ- 13500 դրամ, տանձենու՝ 32 սմ- 25500 դրամ, 36 սմ- 1000 դրամ և այլն:

Նշված աղյուսակներում ներկայացված հատվելիք ամենահաստաբուն ծառերի կոճղի տրամագիծը չի անցնում 50 սմ-ի սահմանը: Նախնական դիտարկումներով, այդտեղ կան մոտ մեկ մետր կոճղի տրամագիծ ունեցող ծառեր:

Միայն երկու դեպքում է, երբ 2 սմ տրամագիծ ունեցող ծառերը տեղ են գտել նշված աղյուսակներում: Մյուս ծառատեսակների 10 սմ-ից պակաս կոճղի տրամագիծ ունեցող ծառերն ընդհանրապես անտեսված են:

Չնայած այդ նույն «Գնահատման» մեջ տանձենին համարվում է հազվագյուտ ծառատեսակ, սակայն 36 սմ կոճղի տրամագծով 23 տանձենու (20 խմ բնափայտ) հատման վնասը գնահատվել է 23 հազար դրամ (Աղյուսակ 8.4.4, էջ 41): Այսինքն, յուրաքանչյուր ծառի հաշվով՝ 1000 դրամ, իսկ մեկ խմ տանձենու բնափայտի արժեքը՝ 1150 դրամ: Համեմատության համար ասենք, որ վառելափայտի մեկ խորանարդ մետրի շուկայական արժեքը այժմ կազմում է 18-22 հազար դրամ:

Ինչպես տեսնում ենք, հազվագյուտ ու մեծ արժեք ներկայացնող ծառերի հատումից գոյացվելիք բնափայտի արժեքը անհամեմատ ցածր է գնահատվել, քան չորուկների բնափայտինն է:

Ըստ 8.4.7 աղյուսակի տվյալների, հատվելու է 53333 խնձորենի, որից, 10 հազարը՝ 2 սմ և 43333-ը՝ 26 սմ կոճղի տրամագծով, սակայն աղյուսակում անգամ մեկ խորանարդ մետր բնափայտ չի նշված: Անտեսված է մատղաշ ծառերի և թփերի (*հոն, մասրենի, սզնի, զկեռենի, մոշենի և այլն*) ոչնչացումից սպասվելիք տնտեսական վնասը: Անտեսված է նաև կենդանի-աճող ծառի՝ հետագա տարիների

բնափայտի վերաճը, նրա դերը ջրագոյացման, հողապահպանման և բազում այլ խնդիրներում:

«Գնահատման» մեջ անտառահատումների ընդհանուր տնտեսական վնասը կազմում է 2,35 մլրդ դրամ (եջ 143), իսկ ճշգրտված տարբերակում՝ 1,925 մլրդ դրամ (եջ 75):

Քննարկվող փաստաթղթերում ասվում է, որ շահագործվելիք տարածքում հազվագյուտ ծառատեսակներից առկա են ընկուզենի՝ 403, տանձենի՝ 1070, խնձորենի՝ 53333 ծառ, արժեքավոր ծառատեսակներից կաղնի՝ 9872, հաճարենի՝ 24382, լորենի՝ 1622, թխկի՝ 2756, սոճի՝ 6500 ծառ, սակայն ՀՀ բնապահպանության նախարարը այլ կարծիք ունի. «*Բնապահպանության նախարար Վարդան Այվազյանի ասելով, եթե ինքը չի սխալվում, Թեղուտի անտառում չկան Կարմիր օրքում օրանցված ծառեր, չկա ընկուզենի, իսկ արժեքավոր ծառատեսակները քիչ են*» (Հայոց աշխարհ», 22.11.2005թ.):

Տպավորություն է ստեղծվում, որ նախարարը՝ 55 հազար հազվագյուտ և 45 հազար արժեքավոր ծառերի ոչնչացումը առանձնապես կորուստ չի համարում: Ըստ մասնագետների, այդ տարածքում կա կովկասյան խուրմա ծառատեսակը, որը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

Մի կողմ թողնելով ընկերության կողմից ներկայացրած նախագծում առկա օրինախախտումները, կեղծիքներն ու մյուս լուրջ թերությունները, անհրաժեշտ ենք համարում ասել, որ այս խնդրում գլխավոր մեղավորը ՀՀ համապատասխան բնագավառների հատուկ լիազորված պետական մարմիններն են:

Վերջապես պետք է հաշվի առնել այն, որ մեր երկրի անտառածածկ տարածքներում, դժբախտաբար, առկա են գունավոր մետաղների հանքավայրեր, իսկ ինչպես հայտնի է այդ անտառները սահմանափակ են և հանդիսանում են հատուկ նշանակության անտառներ:

Պետք է գիտակցել, որ Թեղուտի հանքավայրի շահագործմամբ հիմք է դրվելու նախադեպը չունեցող մի գործընթացի, որը կրերի Հայաստանի Հանրապետության անտառների բնաջնջման և լիովին վերացման:

Հայաստանի անտառների առանձին հատվածներ, ճիշտ է, հանքահանման հետևանքով վնասներ են կրել, սակայն մինչև օրս, թե՛ ցարիզմի և թե՛ խորհրդային իշխանության օրոք, չի եղել մի դեպք, որ հանքահանման տակ դրվի բնական անտառածածկ տարածքը: Հարց է առաջանում: Ընդունենք, Սևանա լճի հատակի ապարները պարունակում են ոսկի և հազվագյուտ այլ մետաղներ, ինչ է, Սևանա լիճը պետք է ոչնչացվի՞:

Եթե գործընթացը չկասեցվի, ապա մեծ հավանականությամբ, մոտազատարիներին սակավանտառ Հայաստանի Հանրապետությունը կդառնա անտառազուրկ, անապատացած երկիր:

Քուսական աշխարհ

«Գնահատում» փաստաթղթում ասվում է. «*2005թ. վե՞տտացիոն շրջանի (սկսած ապրիլի կեսից մինչև սեպտեմբերը) ընթացքում բուսաբան փորձա՞ետների կողմից կազմակերպվել են արշավներ Թեղուտում կառուցվող լեռնահարստացման համալիրի ենթադրվող տարածք: Արշավի ընթացքում հետազոտվել է մոտ 600 հա տարածք, որը նախատեսվում է հատկացնել ֆաբրիկայի, բացահանքի, թափոնակույտի, պոչամբարի և տրանսպորտային ցանցի շինարարության համար, այսինքն՝ բնական տարածքներ, որոնց բնական էկոհամակար՞երը կենթարկվեն ոչնչացման կամ զ՞ալի կերպափոխության: Հիմնական ուշադրությունը դարձվել է ապա՞ա բացահանքին և պոչամբարին, որտեղ բուսածածկույթը օրեթե լիովին պետք է ոչնչացվի: Ընդհանուր առմամբ, ապա՞ա բացահանքի շրջակայքի անտառային բուսականությունը օտմվում է բավականին լավ վիճակում: Թեղուտի «ժննդավայրի» շրջանում կոմբինատի շինարարությունը անպայման կրերի բնական բուսածածկույթի խախտման: Մեծ է որոշ հազվա՞յուտ և Հայաստանի Կարմիր օրքում ընդօրկված*

բույսերի տեսակների անհետացման հավանականությունը: Բացի այդ, կոչնչացվեն դեղաբույսերի և ուտելի բույսերի որոշ պոպուլյացիաներ» (էջ 30-40): «Բույսերի հազվաձյուտ, էնդեմիկ և Կարմիր լրջում լրանցված բոլոր տեսակների, որոնք հայտնաբերվել են ապաձա ձեռնարկության արտհրապարակների տարածքներում, մի մասը կտեղափոխվի, իսկ մյուս մասի համար կկազմակերպվի սերմերի հավաք, պահպանում և և ցանք շրջակա տարածքում» (էջ 107):

«Գնահատման» մեջ բերվում է 197 բուսատեսակ: Որտե՞ղ են տեղափոխվելու այդ բույսերի «մի մասը», արդյոք տեղափոխվելիք վայրերում դրանք կաճե՞ն կամ այդտեղ կապահովվի՞ նրանց վերարտադրությունը, ո՞վ է սերմերի ցանքը կազմակերպելու և ֆինանսավորելու...

Թվարկված միջոցառումների մասին ոչ թե պետք է ի միջի այլոց հայտարարություններ արվեն, այլ դրանք պետք է ամրակայված լինեն փաստաթղթերով, այդ թվում՝ ծրագրի իրականացման պատասխանատու կողմերի միջև կնքված պայմանագրերով: Ուրեմն, վերոհիշյալ հավաստումները զուտ աչքակապություն են:

Մյուս կողմից, մինչև հազվագյուտ ու էնդեմիկ բույսերի սերմերը խոսքերով շրջակա տարածքներում «ցանելը», նախ անհրաժեշտ է գիտակցել, որ սահմանափակ թվով մարդկանց շահերին ծառայող այդ հանքահանում-հանքավերանշակումը բազմահրաշք այդ տարածքը բառիս բուն իմաստով կվերածի իսկական մահվան վայրի, նեկրոպոլի:

Կենդանական աշխարհ

Այդ բաժնում ասվում է. «Ուսումնասիրված շրջանը լրտնվում է Լոռու մարզի Թեղուտ լրտղի շրջակայքում և բաժանված է հինձ հատվածների՝ Խառատաձոր, Դուքանաձոր, Պիջուտ, Շնող լրտերի ձորակները և հանքավայրի տարածքը: Ուսումնասիրված տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է հիմնականում տիպիկ անտառային ֆաունիստական էլեմենտներով: Միջատների ֆաունան ներկայացված է հիմնականում կարծրաթևերով (231 կարձարանական միավոր) և թեփուկաթևերով (29 կարձարանական միավոր): Ընդ որում, կարծրաթևերի 231 կարձարանական միավորներից 11-ը հանդիսանում են Կովկասի, 4-ը՝ Հարավային Կովկասի, 2-ը՝ Հայաստանի էնդեմիկներ, իսկ մեկը լրանցված է Բնության Պահպանության Միջազձային Միության Կարմիր Գրքում: Թեփուկավորների 29 տեսակներից մեկը նույնպես լրանցված է Բնության Պահպանության Միջազձային Միության Կարմիր Գրքում: Քանի որ միջատների ճնշող մեծամասնությունը ներկայացված է թևավոր տեսակներով, բնորոշել միջատների անվանացանկը, որոնք լրանցված են Թեղուտ-հյուսիս-արևելյան Դիլիջան տարածքում ընդհանրապես» (էջ 40-52):

«Գնահատման» և «Աշխատանքային նախագծի» մեջ բերված 260 տեսակի միջատները վերաբերում են ոչ թե Լոռվա Թեղուտի հանքավայրի, այլ՝ Տավուշի մարզի Թեղուտ գյուղի մոտակայքում գտնվող անտառներին:

Զնայած միջատներին վերաբերող համապատասխան աղյուսակը վերնագրված է՝ «Թեղուտ - հյուսիս արևելյան Դիլիջան տարածքում գրանցված միջատների տեսակները (ըստ Մ. Քալաշյանի)», սակայն հեռախոսագրույցում Մարկ Քալաշյանն ինձ տեղեկացրեց, որ ինքը 2005 թվականին Համաշխարհային բանկի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի պատվերով, «Տավուշի մարզի բնական ռեսուրսների կառավարման և աղքատության նվազեցման ծրագրի» շրջանակներում ուսումնասիրել է Դիլիջանի Թեղուտ գյուղին (որ տասնյակ կիլոմետրերով հեռու է Թումանյանի շրջանի Թեղուտ գյուղից) հարող անտառների միջատները և աշխատանքի արդյունքները հանձնել է պատվիրատուին: Նա նաև ասաց, որ երկար տարիներ է, ինչ Լոռվա մարզի Թեղուտի անտառատարածքում չի եղել:

Փաստորեն, Դիլիջանի անտառների տվյալները մտցրել են Թումանյանի շրջանի Թեղուտ հանքահանման նախագծի մեջ, իբրև այդ տարածքի անտառներում միջատների ուսումնասիրության արդյունք:

Կեղծիքն ակնառու է:

Նույն բաժնում կարդում ենք. «Նախկին ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել է փոքրասիական տրիտոնի (*Triturus vittatus*) պոպուլացիա, որը միակն է հանրապետությունում և օրանցված է Հայաստանի Կարմիր օրքում: Հետազոտված տարածքում դիտարկված սողունների 10 տեսակներից երկուսը՝ *Testudo graeca* և *Elaphe hohengeri* ընդօրկված են Հայաստանի Կարմիր օրքում: Հետաօա ուսումնասիրությունների արդյունքում այդ ցուցակը լրացվեց և հետազոտվող տարածքում հանդիպող թռչունների տեսակների քանակությունը հասավ 86-ի: Դրանցից 7-ը ընդօրկված են Հայաստանի Կարմիր օրքում: Հետազոտված տարածքում, ըստ մեր դիտարկումների և օրական տվյալների, հանդիպում են կաթնասունների 55 տեսակներ, որոնցից 7-ը օրանցված են Հայաստանի Կարմիր օրքում, իսկ 14-ը նախատեսվում է ընդօրկել հաջորդ հրատարակության մեջ» (էջ 59-63):

Նշված 55 կաթնասուններից՝ ականջեղ ոգնին (*Erinaceus auritus*), լայնականջ ծալքաշուրթը (*Tadarida terniotes*), շեկ նապաստակը (*Lepus europeus*), կովկասյան ջրասամույրը (*Lutra lutra meridionalis*), գորշ արջը (*Ursus arctos*), անտառային կատուն (*Felis silvestris caucasica*), առաջավորասիական ընձառյուծը (*Panthera pardus tullianus*), լուսանը (*Felis lynx*) գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (ՀՀ-ում հայտնաբերված են 84 տեսակի կաթնասուններ):

Գիշտ է, «Գնահատման» մեջ ափսոսանք է հայտնվում դրանց բնակավայրի կորստի և կենդանիների որոշ տեսակների տարածման սահմանների սահմանափակման համար, բայց դա կարելի է կեղծավորություն համարել, քանզի կենդանիներից միայն ձկներն են, որ արժանացել են Ընկերության ուշադրությանը: Միայն ձկների կորստի համար է տնտեսական վնաս ներկայացված, այն էլ՝ ընդամենը... 175 հազար դրամ: Նույն փաստաթղթի 143-րդ էջում կարդում ենք. «Հաշվարկները ցույց են տալիս, որ հատակային կենդանիների միջին կենսազանօվածը հավասար է մոտ 7,5 օ/քմ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ Շնող օետի և նրա վտակների տարածքում մոտ 130 կօ ապրանքային ձուկ 175 հազար դրամ ընդհանուր արժողությամբ»:

Դրանք ի՞նչ գիտական-իրավական հիմքերի վրա արված հաշվարկներ են: Նախատեսվում է ոչնչացնել ջրային ավազանն իր կենդանական աշխարհով և այնտեղի կենդանիների միայն ապրանքային արտադրության արժեքն է հատուցվում...

Առանձին ուսումնասիրության առարկա պետք է դառնա, թե գլխավորապես ո՞ր կենդանիների բնակավայրերն ու տեղաշարժման ուղիներն են ոչնչանալու կամ խաթարվելու: Բացի այդ, հանքավայրի 25 տարիների շահագործումը՝ տարեկան 345 շուրջօրյա աշխատանք, շարունակաբար իրականացվելիք պայթեցումներ, ծանր տեխնիկայի հռնդյուն, ցնցումներ, աղմուկ, վիբրացիա, գիշերային լուսարձակումներ ևն: Պարզ է, թե այդ ամենը ինչ ազդեցություն կարող է ունենալ հանքավայրի հարակից տարածքների կենդանիների վրա:

«Գնահատման» մեջ կենդանիների նկատմամբ «հոգատարությունը» լիովին անտեսված չէ. «Կոմբինատի տարածքում անտառազանօվածի պահպանված հատվածները կարող են հանդիսանալ թռչունների որոշ տեսակների, մանր կաթնասունների, սողունների, երկկենցաղների և միջատների բնակության համար պիտանի կղզյակներ» (էջ 107): Կամ. «Տնտեսական օործունեությունը՝ ծառահատումը, խառատածոր օետի հունի փոխումը, պայթեցումները և ծանր բեռնատար ավտոտրանսպորտի շահաօործումը անխուսափելիորեն կբերեն անտառային գօայուն կենսացենոզի ձևափոխմանը և մասամբ ոչնչացմանը (հիմնականում կրծողների կոլոնիաները), էջ 129):

Ծիծաղ հարուցող աճապարարություն:

«Գնահատման» 85-րդ էջում նշվում է. «Մեր հետազոտությունների ընթացքում Շնող օետում և նրա վտակներում օրանցվել են այս օետավազանում ամենատարածված երեք ձկնատեսակները՝ Կարմրախայտ (Salmo trutta morfa fario), Քուռի բեղլու (Barbus lacerta cyri), Քուռի կողակ կամ կապույտ (Varicorhinus capoeta capoeta): Այս տեսակները արաօախոս, քարքարոտ հատակով օետերի բնակիչներ են: Այդպիսին են Շնող օետը և նրա վտակները: Համաձայն օրական տվյալների, բացի վերը նշված տեսակներից, Դեբեդի ջրհավաք ավազանի քարքարոտ և ավազոտ հատակով օետակներում հանդիպում են նաև Քուռի լերկածուկը (Nemachilus brandti) և Հայկական տառեխիկը (Alburnoides bipunctatus armeniensis): Այսպիսով, իրականացված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հետազոտված օետակներն ունեն բարձրորակ ջուր, անողնաշարավոր կենդանիների բավական հարուստ բազմազանություն, տեղական նշանակություն ունեցող ձկնային արդյունաօործական պաշարներ» (էջ 85):

Սակայն, ինչպես արդեն ասվել է, ոչնչացվելիք ձկնաշխարհին հասցվելիք վնասը գնահատվել է 130 կգ և ընդամենը... 175 հազար դրամ: Պետք է նկատի ունենալ, որ հանքարդյունաբերության հետևանքով կենդանական աշխարհին հասցվելիք վնասը սահմանափակվում է այդ 175 հազար դրամով:

Ահա և ՀՀ օրենքներով, Միջազգային կոնվենցիաներով և իրավական այլ ակտերով երաշխավորված վայրի կենդանիների պաշտպանության ու պահպանության իրական պատկերը:

Հնագիտական հուշարձաններ

«Գնահատում» փաստաթղթում նշվում է. «Լոռին անհիշելի ժամանակներից հայտնի է պատմաճարտարապետական հուշարձանների խիտ ցանցով, մասնավորապես հնաօույն բնակատեղիներով և դամբարանադաշտերով, որոնք կարևոր պատմական նշանակություն ունեն ոչ միայն այդ տարածաշրջանի, այլև մեր երկրի ու համաշխարհային մշակույթի պատմության համար: Այդ է պատճառը, որ մասնաօետների կողմից Շնող և Թեղուտ օյուղերի տարածաշրջանում պղնձամուլիբդենային հանքավայրի շահաօործման տեղամասերի, ինչպես նաև այդ նպատակով կառուցվող կոմունիկացիաների ու ճանապարհների օոտիներում կատարվեցին հետախուզարոնողական աշխատանքներ: Նշված տարածաշրջանում հայտնաբերվել են հետևյալ հուշարձանները և հուշահամալիրները՝

- Հուսանց այօիների տարածքում կա բրոնզեդարյան և միջնադարյան բնակատեղի և դամբարանադաշտ;
- Ղարաքոթուկի հուշարձան. օյուղատեղի, հին պաշտամունքային կառույցի ավերակներ, հնաօույն և միջնադարյան շրջանի տաճարի ավերակներ և հայերեն արձանաօրությամբ քարեր;
- մեր թվաօրությունից առաջ 4-2 դար հուշարձան և դամբարանադաշտ;
- դամբարանադաշտ, որտեղ հայտնաբերված են բրոնզե դաշույն, սուր, նետասլաքներ, քանդակազարդ լայն օոտի, մեծ թվով խեցե ամանեղեն և աօաթե և սարդիոնե ուլունքներ և այլն:
- Չորիօեղ բնակատեղի: Տարածքում կան բրոնզեդարյան դամբարաններ, սակայն միջնադարյան նյութերը օերակշռում են: Այնտեղ է օտնվում Սանարևի 11-12-րդ դարերին վերաբերող վանքը: ...Հայտնաբերվել է կավակերտ երկու սարկոֆաօ, սալարկղաձև երկու դաօաղ: Այնտեղ կա նաև Գառնիի հանրահայտ խճանկարե հատակով բաղնիքի նման կառույց և այլ հուշարձաններ:
- Դուքանաձորի հուշարձան: Այն հայտնի է որպես մետաղամշակման վայր, ...
- Բովերում, անմիջապես Խառատանոցին հարող տարածքում, կան միջնադարյան երկու պաշտամունքային կառույցներ, հայտնաբերվել են դամբարաններ, բրոնզեդարյան նյութեր... Բովերում կան հին հանքախորշեր, մետաղահալոցներ, խարամի մնացորդներ: Խառատանոցում եղել են մետաղամշակման արհեստանոցներ:

- Հանքավայրի շահաօործման օրոտում հատուկենտ բացվել են բրոնզեդարյան դամբարաններ, որոնք մեր կարծիքով էական չեն» (էջ 85-86):

Կարծում ենք, բացատրությունների անհրաժեշտություն չկա:

Ձեռնարկության գործունեության արդյունքում առաջացող թափոնները

Այդ բաժնում ասվում է. «7 մլն տոննա տարեկան արտադրողականության դեպքում 3,78 մլն խմ դատարկ ապար կտեղափոխվի թափոնակույտեր: Ընդհանուր թափոնների (դատարկ ապարների) ծավալը 25 տարի շահաօործման դեպքում կկազմի 91,7 մլն խմ պինդ մարմնում: Հանքահարստացման պրոցեսում խտանյութի ընդհանուր ելքը (պղնձի և մոլիբդենի) կազմում է 1,58 տոկոս, մնացած 98,42 տոկոսը պոչեր են, որոնք պահեստավորվելու են պոչամբարում (Աշխատանքային նախագծում՝ կոնցենտրատներ 1,25%, պոչանք՝ 98,75%): **Պոչերը հրդեհավտանգ չեն:** Ձեռնարկության շահաօործման ընթացքում տեխնիկայի, սարքավորումների, նրանց տարրեր հանօույցների մաշվածության, ջարդման պատճառով առաջանում են սև մետաղի ջարդոններ, որոնք կուտակվում են այդ նպատակով հատուկ առանձնացված հարթակներում և ըստ կուտակման երկաթուղային տրանսպորտով տեղափոխվում սև մետաղների մշակման գործարան: Տարեկան մեկ անօամ ավտոդողերի փոխանակման դեպքում մաշված ավտոդողերի քաշը կկազմի 300-360 տ: Դրանք պետք է պահեստավորվեն հատուկ հատկացված հարթակներում: Ռետինատեխնիկական թափոնները վերաբերում են ոչ թունավոր դասին և ըստ կուտակման երկաթուղով կտեղափոխվեն վերամշակման: Ձեռնարկությունում տարեկան կկուտակվի 800-850տ աշխատած յուղ: Դրանք հավաքվելու են տակառածև տարաներում և կտեղափոխվեն նավթամթերքների պահեստում առանձնացված հարթակ: Այստեղից նրանք պարբերաբար կուղարկվեն նավթամթերքների վերականգնման գործարան: Պինդ կենցաղային թափոններին պատկանում են թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, ապակին, պլաստմասսան և այլն, որոնք թունավոր նյութեր չեն: Ըստ կուտակման պինդ կենցաղային թափոնները և շինարարական աղբը կոմբինատի տարածքից տեղափոխվելու են հատուկ պոլիօոններ, որոնց տեղանքը համաձայնեցվելու է տեղական կառավարման մարմինների հետ» (էջ 108-109):

Նախ, պոչանքի, այսինքն՝ ջարդած-մանրացրած-աղացած-սղկելով փոշի դարձրած հանքաքարի հրդեհավտանգ չլինելու մասին: Եթե այդ հանքաքարը հրդեհավտանգ լիներ, ապա միլիոնավոր տարիներ առաջ արդեն հրդեհված-վառված-գոլորշիացած կլիներ և այսօր, իր անտառածածկ-բուսածածկ գորգով ու հարուստ կենսաբազմազանությամբ զոհասեղանին չէր դրվի, որպեսզի առավել հարստացնի միայն մի խումբ մարդկանց:

Եվ ապա, ինչպես տեսնում ենք, պոչամբարի տակ դրվելիք, այսինքն՝ հավերժորեն ոչնչացվելիք, տարածքը ներկայացվում է **170-180** հա, սակայն նույն փաստաթղթում (էջ 139), ուր բերվում է տնտեսական վնասի գնահատումը, պոչամբարի տարածքը արդեն ներկայացվում է ընդամենը 53,5 հա (տնտեսական վնասը՝ 13482000 դրամ), դատարկ ապարների զբաղեցնելիք տարածքը՝ 70 հա (5827500 դրամ), բաց հանքինը՝ 46 հա (1449000 դրամ):

«Աշխատանքային նախագծում»՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի արդյունաբերական հրապարակների և կառուցվածքների զբաղեցրած տարածքները» աղյուսակում (էջ 71-72) նշվում է, որ բացահանքի ընդհանուր մակերեսը կազմելու է 240 հա, իսկ առաջին փուլում՝ 8 տարիների ընթացքում՝ 65 հա, լցակույտերինը՝ 107,4 և 52,4 հա, պոչամբարինը՝ **214** և 54 հա:

Ինչպես պարզ երևում է, բացահանքի, դատարկ ապարների լցակույտերի և պոչամբարի տակ դրվելիք տարածքները առաջին 8 տարիների ընթացքում,

վերջնականի համեմատությամբ, կազմում են համապատասխանաբար՝ 27 տոկոս, 49 տոկոս և 25 տոկոս:

Ինչ վերաբերում է մետաղի ջարդոնները գործարան, ռետինատեխնիկական թափոնները վերանշակման, աշխատած յուղը՝ նավթամթերքների վերականգնման գործարան, պինդ կենցաղային թափոնները և շինարարական աղբը՝ հատուկ տարածքներ տեղափոխվելուն, ապա դրանք հիմնավորված չեն համապատասխան փաստաթղթերով, և թվարկած միջոցառումները զուտ հայտարարություն են: Հարկ է նշել, որ նշված միջոցառումների ծրագրերը և դրանց իրականացնող համապատասխան կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի պատճենները պարտադրաբար պետք է կցված լինեին նախագծին, որից հետո միայն նախագիծը կարելի կլիներ ներկայացնել էկոլոգիական փորձաքննության:

Նախագծում ասվում է, որ ձեռնարկությունում տարեկան կկուտակվի 800-850տ աշխատած յուղ, սակայն ծախսվելիք նյութերի ցանկում յուղը բացակայում է :

Ռեկուլտիվացում և կոնսերվացում

Այս բաժնում ասվում է. «Պոչամբարի և լցակույտի տարածքի շրջակա հողերի աղտոտումը կանխելու, ինչպես նաև այս տարածքները ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Բացահանքի և լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի շինարարության ժամանակ այդ տարածքներից տեղափոխվելու է բերրի հող (մոտ 50 սմ հզորությամբ): Վերջինս անհրաժեշտ է տեղափոխել համապատասխան տարածքներ և պահպանել 3 մետրի հասնող բլուրների տեսքով: Հետո՝ այս հողը կօժտործվի պոչամբարի և լցակույտի տարածքի մակերեսը մինչև 15 սմ հզորությամբ հողաշերտով ծածկելու համար: Սա կկանխարգելի ծանր մետաղներով հարուստ հանքանյութի հողմնահարումը և քամու միջոցով շրջակա տարածքներ տարածումը:

2. Առաջարկվող ռեկուլտիվացման հաջորդ տարբերակը՝ տարածքը պարբերաբար ջրել պոլիակրիլամիդի ջրային լուծույթով: Վերջինս հիդրոլիզվելով առաջացնում է պոլիակրիլաթթվի ամոնիակային աղ, որը ամրացնում է հողի մակերևութային շերտը՝ միաժամանակ թողնելով այն թափանցիկ ջրի և օդի համար:

Կոմբինատում աշխատանքների դադարեցումից հետո նախատեսվում է բոլոր այն սարքավորումները, որոնք անմիջապես շփվել են թունավոր նյութերի հետ, պետք է վնասագերծվեն,

թունավոր թափոնները, որոնք կուտակվել են ձեռնարկության տարածքում, վարակված հողի շերտը պետք է տեղափոխվեն պոչամբար և թաղվեն,

չենքերն ու շինությունները՝

Տարբերակ 1. Սարքավորումները, շենքերը և շինությունները կապամոնտաժվեն, հիմքերը կհավասարեցվեն հողին, կվերականգնվի բնական դրենաժը: Ծանապարհները և մերձատար **ծանապարհները կքանդվեն**, տարածքը պետք է մաքրել, վարել և **վերականգնել նախկին լանդշաֆտը**:

Տարբերակ 2. Տարածքը ջարդոնից, թափոններից մաքրումից և վնասագերծումից հետո շենքերը և շինությունները կարող են վաճառվել կամ **վարձակալվել այն պայմանով, որ նոր գործունեությունը չի հակասի ՀՀ սանիտարական և էկոլոգիական պահանջներին**» (էջ 110-111):

Այստեղ առաջացած հարցերից են՝

ա. Հողի մակերևութային շերտն ամրացնող «Պոլիակրիլաթթվի ամոնիակային աղը արդյո՞ք որևէ բացասական հետևանք չի թողնելու՝ հողի, բուսականության, ջրերի և կենդանիների վրա:

բ. Արդյո՞ք հնարավոր է վերականգնել նախկին լանդշաֆտը և ինչպե՞ս:

գ. ճանապարհները քանդվելու են, չէ՞ որ ճանապարհներ կառուցելը նախագծում համարվում է բարեկեցության և էկոլոգիական իրավիճակի բարելավման երաշխիք. «Ապա՞ա ձեռնարկության բնապահպանական օրո՞ծողության կարևոր կետերից մեկը ճանապարհային ցանցի կառուցումն է և բարեկեցությունը: Համաշխարհային և հանրապետության փորձից քաջ հայտնի է, որ ծանրաքաշ տրանսպորտի երթևեկությունը անբարենպաստ ճանապարհներով գձալի վնաս է հասցնում շրջակա էկոհամակարձին» (էջ 107):

դ. Բարոյակա՞ն են, արդյոք, հրաշագեղ բնությունը ոչնչացնել ցանկացողի՝ ուրիշներին ուղղված, սանիտարական և էկոլոգիական նորմերի պահանջների կատարման հորդորները, նաև նկատի ունենալով Ալավերդի քաղաքում բնակչության առուղջությունն ու էկոլոգիական նորմերն անտեսելը:

Բնապահպանական, առողջական, սոցիալական խնդիրներ

«Գնահատում» փաստաթղթում կարդում ենք. «Ընկերության կողմից տարվող քաղաքականության շրջանակներում մեծ դեր է հատկացվում բնապահպանական հարցերին» (էջ 95): «Անշուշտ Թեղուտի հանքավայրի մշակումը կունենա իր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, սակայն անհամեմատ կբարելավվի շրջանի սոցիալ-տնտեսական վիճակը, կաճի բնակչության եկամուտը» (էջ 148): «Նախա՞ծի իրականացումը կբարելավի սոցիալ-տնտեսական վիճակը, կգարձանան կից ձեռնարկությունները և տարածաշրջանի ինֆրակառուցվածքը, կաշխուժանա առևտուրը» (էջ 130):

Սակայն նախագծի հավանական իրականացումը բացարձակորեն այլ բան է խոստանում: Այն է՝ բնական համակարգերի ոչնչացում, բնական պաշարների ոչ արդյունավետ օգտագործում, ՀՀ օրենքների և միջազգային պայմանագրերի ոտնահարում, տեղի բնակչության առողջության սպառնալիքներ, հանքահանումից հետո նրա սոցիալական վիճակի կտրուկ անկում, իրավունքների ոտնահարում և օրինական շահերի կորուստ, կյանքի համար վտանգավոր շրջակա միջավայր:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության պաշտոնյաների ելույթներում հաճախ են հնչում Հայաստանի բնության պահպանության կարևորությունը, ինչպես նաև բնակչության առողջական վիճակի բարելավման մտահոգություններն ու իրավիճակի բարելավման խոստումները: Սակայն... տարիներ շարունակ Ալավերդի քաղաքի բնակչությանը, բառիս բուն իմաստով, շնչահեղձ են անում: Օրինակ, իրենց իսկ շահագործած կոմբինատից, 2005թ. պաշտոնական տվյալներով, Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդ է արտանետվել. ծծմբային անհիդրիդ՝ 24186 տոննա, արսեն՝ 7,18 տ, փոշի՝ 145 տ, կապար՝ 1,7 տ, ցինկ՝ 24,5 տ (այստեղ չենք խոսի պինդ և հեղուկ թափոնների մասին): Ըստ նույն տվյալների, վերջին երկու տարիներին այդ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի տարեկան միջին պարունակությունը 11,4 անգամ գերազանցում է սահմանային թույլատրելի նորմային: 2005թ. «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության մուծած հարկերն ու տուրքերը կազմում են 345 մլն դրամ, որից 83,5 միլիոնը այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարումներ են, ներառյալ մթնոլորտ արտանետած ծծմբային անհիդրիդի վճարը՝ մեկ տոննայի համար 1800 դրամ, այն դեպքում, երբ, օրինակ, Շվեդիայում՝ 2046 դոլար է :

Մարդիկ տարիներ շարունակ ապրում են այդ դժոխային պայմաններում: ...Ինձ տվեք ձեր հարստությունը, առողջությունը, և ես մի քանի օր կկերակրեմ ձեզ...

Արդյո՞ք նշված արտադրության իրական տերերը և գլխավորապես առանց թունավոր նյութերի որսմամբ դրա շահագործումը թույլատրող ՀՀ պետական պաշտոնյաները կցանկանային, որ, օրինակ, իրենց կանայք այդ միջավայրում ծննդաբերեին, և իրենց զավակներն էլ այդ նույն պայմաններում հաճախեին մանկապարտեզ, դպրոց, քնեին խեղդող գազերով լցված ննջարաններում...

Ալավերդի քաղաքի բնակչության նկատմամբ դրսևորած դաժան վերաբերմունքը, եթե կատարվեր իրավական նորմերը և մարդու ապրելու իրավունքը հարգող որևէ երկրում, ապա այդ խնդրում գլխավոր մեղավորները՝ պետական պաշտոնյաներն ու ձեռնարկության սեփականատերը, դժվար թե խուսափեին դատական պատասխանատվությունից:

Անհրաժեշտ ենք համարում որոշ տվյալներ բերել վերը հիշյալ նյութերի վտանգավոր ազդեցությունների մասին:

Մոլիբդենը արգելակում է սաղմի ոսկորների ձևավորումը: Մոլիբդենով հարուստ արոտավայրերում արածեցված անասունների մոտ հայտնաբերվել են էնդեմիկ հիվանդություններ՝ աճի ուշացում, ատաքսիա, բրդի կոշտացում, աղեստամոքսային խանգարումներ, սակավարյունություն, իմունոկենսաբանական ցուցանիշների նվազում, կմախքի փոփոխություն:

Մոլիբդենային հանքերում 418 աշխատողների 44,9 տոկոսը գանգատվել է հողերի և մկանների ցավերից, 75 տոկոսի արյան մեջ հայտնաբերվել է միզաթթվի բարձր պարունակություն: Բոլոր հետազոտվածների մոտ նկատվել է կատալազայի ակտիվության և գլոբուլինների մակարդակի նվազում, սիճուկում ընդհանուր գլուտատիոնի ցերուլոպլազմինի պարունակության բարձրացում: Մարսողական օրգանների հիվանդություններից ամենաշատ տարածվածներից են գաստրիտը, խրոնիկական խոլեցիստիդը: Դիտվել է լյարդի ֆունկցիոնալ կարողության խախտում: 64 տոկոսի մոտ հայտնաբերվել է ատամների ոսկրափուտ (կարիես): Նկատվել են ցերեբրալային անուժություն, վեգետոդիստենիա, հիպերտոնիա, սրտի բաբախման ֆունկցիայի խանգարումներ, գինեկոլոգիական հիվանդությունների բարձր մակարդակ: Մոլիբդենի օքսիդի աերոզոլի ազդեցության ենթարկված բանվորները բողբոլում են հազից ու շնչուղիների չորությունից (Вредные химические вещества, Ленинград, 1989, с. 313-324):

Ծծումբը և նրա միացությունները, բարձր կոնցենտրացիաներում բերում են հողի բերրիության անկման, բույսերի աճի ու վերարտադրության կանխման, մուտագեն են, խախտում են ջրային կենդանիների մի շարք կարևորագույն ֆերմենտային համակարգերի գործունեությունը, պատճառ դառնում թթվային անձրևների...

Դրանց առաջացրած հիվանդություններից թվարկենք մի քանիսը. նյարդային, լյարդի, երիկամների, թոքերի, սրտանոթային, ատամների, աղեստամոքսային, շնչառական ուղիների հիվանդություններ, ընդհանուր թուլություն, գլխացավ, գլխապտույտ, արցունքահոսություն, հազ, լուսավախություն, գրգռվածություն, շնչահեղձություն, քթի ցավ ու արյունահոսություն, խռպոտություն, շրթունքների կապտախտ, սրտխառնոց և այլն (նույն տեղ, էջ 170-256):

Սկնդեղը (արսենը) և նրա միացությունները առաջացնում են հյուսվածքային շնչառության խախտում, նվազեցնում բջիջների էներգետիկ պաշարները, ընդհանուր ազդող, օրգանիզմի ջրազրկում, արյունալուծում (հեմոլիզ), սակավարյունություն, հյուսվածքների դեգեներացման ու մահացման ախտահարում, սաղմնաթունավորություն, հրեշածնություն, մաշկի քաղցկեղ, փսիխոզ, հիշողության և խոսքի խախտում, մատների թմրածություն, քթի արյունահոսություն, խռպոտություն, թուլություն, գլխացավ, սրտխառնոց, գլխապտույտ... (նույն տեղ, էջ 82-102):

Պղնձի և նրա միացությունների մեծ քանակությունները թունավոր ազդեցություն են գործում բուսակենդանական աշխարհի վրա: Հողում դրանց մեծ քանակությունների առկայության պայմաններում խաթարվում է հողի հստակ կառուցվածքը, խախտվում է ջրաթափանցելիությունը և վատանում՝ ջրային և օդային ռեժիմները: Այդ նյութերն առանձնապես թունավոր են հողի միկրոֆլորայի համար:

Դրանցով հողը մշակելու դեպքում հողում ընդհանուր միկրոօրգանիզմների թիվը նվազում է 21-72, իսկ սպորային միկրոօրգանիզմների քանակությունը՝ 23-92 տոկոսով, որը հանգեցնում է բերրիության անկման:

Պղնձի միացությունները խիստ թունավոր են ջրային բույսերի և կենդանիների համար: Պղնձի որոշ աղեր օգտագործվում են որպես միջոց ջրային բույսերը ոչնչացնելու համար: Այդ նյութերի նկատմամբ առավել զգայուն են ձկները:

Պղինձը, սահմանային թույլատրելից բարձր խտությունների դեպքում, մարդկանց մոտ առաջացնում է լորձաթաղանթի գրգռվածություն, գլխացավ, թուլություն, սրտխառնոց, մկանային ցավ, դող, ջերմության բարձրացում, թոքերի այտուց, թոքաբորբ, նյարդային համակարգի, լյարդի և երիկամների ֆունկցիոնալ խանգարում, անցքեր՝ քթի միջնապատում և այլ հիվանդություններ (Вредные химические вещества, Ленинград, 1988, с. 61-81):

Ցինկը և նրա միացությունները հողում նվազեցնում են միկրոօրգանիզմների քանակությունը... Մարդու մոտ առաջացնում են հոգեճնշվածություն, չոր հազ, սրտխառնոց, աղմուկ՝ ականջներում, գրգռվածություն, անքնություն, հիշողության ու լսողության վատացում, թոքերի ծավալի հիվանդոտ մեծացում, շնչուղիների, թոքերի, աղեստամոքսային և այլ հիվանդություններ (նույն տեղ, էջ 146-159):

Կապարը և նրա միացությունները հողում նվազեցնում են միկրոօրգանիզմների քանակությունը և բույսերի աճը: Առաջացնում են գլխացավ, գլխապտույտ, քնի խանգարում, խոսքի և տեսողության խախտում, գիտակցության մթազում, հիշողության վատացում, ծնելիության ֆունկցիայի խախտում, վիժումներ, մեռելածնություն... (նույն տեղ, էջ 415-436):

Տնտեսական վնասի գնահատում

Այդ բաժնուն (էջ 134-146)՝ ձեռնարկության գործունեության հետևանքով մթնոլորտային օդին հասցրած ընդհանուր վնասը ներկայացվում է 6465400 դրամ, հողերի խախտումից հասցվելիք վնասը՝ 21917250 դրամ, հողերի օտարացումից՝ 2475425000 դրամ, ընդերքի խախտումից՝ 3709.500 դրամ:

Եվ այսպես, շրջակա միջավայրին հասցվելիք գումարային վնասը կազմում է 2,508 մլրդ դրամ: Նաև վճար է նախատեսվում որոշ միացությունների թույլատրելի նորմատիվները գերազանցելու համար՝ 1699000 դրամ:

Թվարկածների բաղադրիչներն են՝

ա. Մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներից են՝ հորատումը, պայթեցումը, հանքահանում-բեռնումը, հանքաքարի և դատարկ ապարների տեղափոխումը, թափոնակույտերը, հանքաքարի ջարդումը, հանքաքարի պահեստը, ռեազենտների պատրաստման արտադրությունը, մոլիբդենի խտանյութի չորացման արտադրությունը, կաթսայատունը, տրանսպորտը:

բ. Հողերի խախտման օբյեկտներն են՝ բացհանքը, թափոնակույտերը, պոչամբարը, ֆաբրիկայի արտհարթակը, պոչատարը, ջրանցքը, օժանդակ կառույցների հարթակը, ճանապարհները, պայթուցիկ նյութերի պահեստը, կեղտաջրերի մաքրման կայանը, խմելու ջրի մաքրման կայանը, պոմպակայանը, թարմ և շրջանառու ջրերի ամբարները, ենթակայանը, արհեստական լճակը:

Հարկ է նշել, որ թվարկածներից՝ բացհանքի տարածքը ներկայացվում է (աղյուսակ 8.4.1) միայն 46 հա, որի տնտեսական վնասը՝ 1449000 դրամ (1 հեկտարի հաշվով՝ 31500 դրամ), դատարկ ապարների լցակույտերի տարածքը՝ 70 հա, վնասը՝ 5827500 դրամ (1հա՝ 83250 դրամ), պոչամբարի տարածքը՝ 53,5 հա, վնասը՝

13482000 դրամ (1հա` 252000 դրամ), արհեստական լճակինը` 5 հա, վնասը` 45000 դրամ (1 հա` 9000 դրամ): Աղյուսակում մյուս օբյեկտների տարածքը կազմում է 82,5 հա, տնտեսական վնասը` 1113750 դրամ (1 հա` 13500 դրամ):

«Աշխատանքային նախագծում» «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի արդյունաբերական հրապարակների և կառուցվածքների զբաղեցրած տարածքները» աղյուսակում (էջ 71-72) նշվում է, որ բացահանքի ընդհանուր մակերեսը կազմելու է 240 հա, իսկ առաջին փուլում` 8 տարիների ընթացքում` 65 հա, հասցվելիք տնտեսական վնասը` 1820000 դրամ, դատարկ ապարների լցակույտերի տարածքը` 107,4 հա, առաջին փուլում` 52,4 հա, տնտեսական վնասը` 3877600 դրամ, պոչամբարինը` **214 հա**, առաջին փուլում` 54 հա, տնտեսական վնասը` 12096000 դրամ:

«Հողերի խախտումից հասցված վնասի հաշվարկ» աղյուսակում բաղադրիչների գումարային տնտեսական վնասը կազմում է 19129600 դրամ, սակայն գրված է 12129600 դրամ, այսինքն` 7 մլն դրամով պակաս: «Գնահատման» «Աշխատանքային նախագծի» նույն վերնագիրը կրող աղյուսակների համեմատումը տարակուսանք է առաջացնում: Օրինակ, «Գնահատման» աղյուսակում պոչամբարին հատկացվելիք հողատարածքը 53,5 հա է, մեկ հեկտարի հաշվով «տեսակարար» վնասը` 560 ռուբլի, տնտեսական վնասը` 13482000 դրամ, սակայն «Աշխատանքային նախագծում» չնայած տեսակարար վնասը նույն 560 ռուբլին է և տարածքն էլ 0,5 հա-ով մեծացած, այդուհանդերձ տնտեսական վնասը ներկայացվում է 12096000 դրամ, այսինքն` 1386000 դրամով պակաս:

գ. Հողերի օտարումը ներառում է` գյուղատնտեսական հանդակներին (վարելահող- 57 հա, խոտհարք- 48 հա և այգիներ- 5 հա) հասցվելիք տնտեսական վնասը կազմում է 123800000, անտառային հանդակներինը` 2351450000 և ձկնատնտեսական նշանակություն ունեցող ջրավազանների խախտման պատճառով հասցված վնասը` 175000 դրամ: Դրանց գումարային տնտեսական վնասը կազմում է 2475425000 դրամ, իսկ «Աշխատանքային նախագծում»` 2048857000 դրամ:

Թվարկեմք նաև մյուս վնասների հատուցումները`

Շնող գետից տարեկան վերցվելու է 69000 խմ, իսկ Դեբեդից` 7350000 խմ ջուր, որի տնտեսական վնասը ներկայացվում է 3709500 դրամ:

«Գնահատման» մեջ շրջակա միջավայրին հասցվելիք գումարային տնտեսական վնասը կազմում է **2,508 մլրդ**, իսկ «Աշխատանքային նախագծում»` **2,078 մլրդ դրամ**:

Ոչնչացվելու են տարածքի երկրաբանական հիմքերը` սարերը (մանրացվելու են, փոշի են դառնալու), գետերն իրենց հուններով, բուսականությունը, կենդանական աշխարհը, մշակութային հուշարձանները, անտառային ու համայնքային հողերը, միջավայրը դառնալու է կայուն թունավոր նյութերով վարակված վայր, բազմակողմանիորեն մեծանալու են բնակչության առողջությանը և կյանքի անվտանգությանը սպառնացող գործոնները... և առաջարկվում է որպես փոխհատուցում` 2,078 մլրդ դրամ:

Պարզից էլ պարզ է, որ եթե հայոց հողն իր հարստություններով այսպես են գնահատում, ապա միջին կարողությունների տեր որևէ օտարերկրացի կարող է գնել ՀՀ ամբողջ տարածքը, մանավանդ բացարձակ ազատականացման ու ամեն ինչը օտարելու-վաճառելու քաղաքականության առկայության պայմաններում:

Իրավական խնդիրներ

«Գնահատում» և «Աշխատանքային նախագիծ» փաստաթղթերում, ինչպես արդեն ցույց է տրվել, կոծկված է Թեղուտի հանքավայրի հավանական շահագործման հետևանքով հողին, ջրային պաշարներին, բուսակենդանական աշխարհին,

համայնքային սեփականություն հանդիսացող վարելահողերին, այգիներին, արոտավայրերին հասցվելիք վնասների ծավալները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և դրանից բխող բազմաթիվ օրենքներին, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերին:

«Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներում» ասվում է. «Արժեվում է նախաձեռնի մշակումն ու իրականացումը, որոնք կարող են խախտել բնական հավասարակշռությունն ու էկոլոգիական համակարգերը, ոչնչացնել բույսերի և կենդանիների թեմատիկ ֆոնդը կամ մարդու առողջության և բնական միջավայրի համար առաջացնել այլ անուղղելի հետևանքներ» (հոդված 14):

«Գնահատում» և «Աշխատանքային նախագիծ» փաստաթղթերի ուսումնասիրողը հեշտությամբ կհամոզվի, որ Թեղուտի հանքավայրի շահագործման դեպքում կոտնահարվի նշված հոդվածն ամբողջությամբ՝ ոչնչացվելու է բնական համակարգն իր հարուստ կենսաբազմազանությամբ, բույսերի ու կենդանիների գենետիկ ֆոնդերը, երկրաբանական կառուցվածքը, ջրագոյացման բնական օբյեկտները, փոխվելու է գետերի հունը, մարդու առողջությանը սպառնալու են՝ աղմուկը, վիբրացիան, ցնցումները, հանքանյութի տոքսիկ փոշին, աղտոտվելիք գյուղատնտեսական մթերքները և անտառի բարիքը, իսկ պոչամբարներից սպասվող վտանգների մասին արդեն ասվել է:

«Հողային օրենսգիրքը» սահմանում է. «Հողամասի թույլատրված օտաործումը կարող է պարունակել պահանջներ, որոնք ուղղված են՝ հողամասի օտաործման միջոցների և դրանց այն մասի արժեքները, որոնք հանդեսում են հողի որակի ու բերրիության անկմանը կամ շրջակա բնական միջավայրի վատթարացմանը, մարդու առողջության վրա վնասակար ազդեցություն թողնող կամ դրա վտանգի մեծացման հետ կապված հողօտաործման ձևերին...» (հոդված 8):

Միայն նշենք, որ պոչամբարներում և դրանով աղտոտված հողի բերրիությունը նվազում է մինչև 95, իսկ պղնձի ու մոլիբդենի մեծ պարունակություններով հողերինը՝ մինչև 75 տոկոսով:

Նույն հոդվածում նաև ասվում է. «Պատմական և մշակութային հողամասերի վրա արժեքները և դրանց նպատակային և օրծառնական նշանակությանը հակասող ցանկացած օրծունեություն»:

Ըստ նախագծի, ոչնչացվելու են հնադարյան և այլ ժամանակաշրջանների բազմաթիվ հուշարձաններ, դամբարանադաշտեր:

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում նշվում է. «**Մարդու առողջությունը, ազգային անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու նպատակով ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումը կարող է սահմանափակվել կամ արգելվել ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով**» (հոդված 8): Նույն օրենսգրքից մեկ այլ սահմանում. «Ընդերքօտաործողները պարտավոր են ապահովել՝ ... ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների, ... բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքի օտաործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից» (հոդված 42): ՀՀ «Անտառային օրենսգրքի» սահմանումներից է. «Պետական և համայնքային սեփականություն համարվող անտառների կամ անտառային հողերից տրամադրված կամ այլ հիմքերով ձեռք բերված անտառների կամ անտառային հողերի նկատմամբ օտաործողների իրավունքները կարող են սահմանափակվել՝ 4. անտառային հողերի նպատակային օտաործման փոփոխման արժեքով, 5. բնապահպանական պահանջների պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ կենդանական աշխարհը, հողաշերտերը, հազվադեպ բույսերը, բնության, պատմության ու մշակույթի հուշարձանները, հնաբանական օբյեկտները պահպանելու պայմանով, 7.

վայրի կենդանիների □ոյության, բնական միջավայրի և մի□րացիայի ուղիների պահպանման պայմանով» (հոդված 46): «Անտառային օրենսդրության խախտման դեպքերն են՝ ... անտառային հողերում ծառեր ու թփեր հատելը և արմատախիլ անելը, անտառները... արտադրական կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, արտադրական թափոններով աղտոտելը» (հոդված 60):

Նախագծի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը չի բխում մեր ազգային շահերից և հակոտնյա է ազգային ու էկոլոգիական անվտանգությանը, սպառնում է բնակչության առողջությանը: Նաև փոխվելու է անտառային հողերի նպատակային օգտագործումը, ոչնչանալու են բուսականության և տարատեսակները, վայրի կենդանիների բնական միջավայրը և միգրացիայի ուղիները, պատմամշակութային հուշարձանները ևն:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում գրված է. «Ար□ելվում է ցանկացած □ործունեություն, որը հան□եցնելու է ՀՀ բույսերի կարմիր □րքում □րանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը» (հոդված 17): Իսկ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում՝ «Ար□ելվում է ցանկացած □ործունեություն, որը կհան□եցնի ՀՀ կարմիր □րքում □րանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրի վատթարացմանը» (հոդված 18):

Կարելի է սահմանումներ բերել նաև «Պատմության ու մշակութային անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» և ՀՀ այլ օրենքներից, որոնք արգելում են Թեղուտի հանքավայրի նման տարածքները հանքահանման տակ դնելը: Այդպիսի դրույթներ կան ՀՀ կողմից վավերացված միջազգային մի շարք պայմանագրերում (կոնվենցիաներում), օրինակ, մշակույթի ու բնության ժառանգությունների, անապատացման դեմ պայքարի, կենսաբազմազանության, լանդշաֆտների, կլիմայի փոփոխության մասին ևն:

Բնապահպանության նախարարության կողմից տրված եզրակացություն

Հայաստանի բնության պահպանության խնդիրներում մտահոգ անձինք, երբ տեղեկանում են, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն արդեն Թեղուտի հանքավայրի շահագործման վերաբերյալ դրական եզրակացություն է տվել, առավել հուսահատ են դառնում, հիմնականում ասելով. «Վերջ, այլևս ոչինչ հնարավոր չէ անել»:

Չի բացառվում, որ հանքավայրը շահագործելուն շահագրգիռ ուժերը, նկատի ունենալով հայ մարդու հոգեկերտվածքն ու բնավորությունը (չհիմնավորված հուսահատվելու, հեշտությամբ նահանջելու, կորստի հետ հաշտվելու...), հավանաբար հենց այդ նկատառումով, հապճեպորեն ձեռք են բերել այդ տխրահռչակ եզրակացությունը, որը և մի յուրահատուկ դրոշ են դարձրել, այն դեպքում, երբ այդ եզրակացությունը գիտական ու իրավական հիմքերից զուրկ կեղծիք է:

Բացատրենք, թե ինչն է այդպիսի գնահատման պատճառը:

Փորձագիտական, այն էլ՝ էկոլոգիական փորձաքննության եզրակացություն ասելով հասկացվում է, որ ծրագիրը բազմակողմանի ու մանրագնին ուսումնասիրվել է, կատարվել է իրավիճակային անալիզ՝ ծրագրի բոլոր բաղադրամասերի խորը զննմամբ, ի հայտ են բերվել հնարավոր բոլոր խնդիրները և նշվածների փոխկապվածությունն ու հնարավոր փոխազդեցությունը, ինչպես նաև դրանց հետևանքները մոտակա և հեռավոր տարիների առումով: Ի վերջո, օգուտ-վնասների և վերը թվարկվածների համեմատական վերլուծության արդյունքում դրական կամ բացասական եզրակացություն է տրվում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի բազում դրույթներ, որոնք պետք է որ ուղենիշ հանդիսանային փորձաքննություն իրականացնողների համար, դժբախտաբար անտեսված են: Օրինակ, նշված օրենքում կարդում ենք. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության խնդիրներն են ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող օրոժուներության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունը՝ ինչպես շահագործման և իրականացման, այնպես էլ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ...» (հոդված 3): Կամ, «Մասնագիտական եզրակացությունը մշակելիս փորձաքննության են ենթարկվում փաստաթղթերի լիարժեքությունը, հասարակության, ազդակիր համայնքի և պետական շահագործման մարմինների կարծիքները...» (հոդված 9):

Սակայն... Թեղուտի հանքավայրին վերաբերող եզրակացությունը բացարձակորեն այլ բովանդակություն ունի: Պարզ երևում է, որ պատվեր է կատարվել կամ շահագիտական գործողություն է:

Այժմ եզրակացության բովանդակության մասին:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված եզրակացությունը ամփոփված է 7 էջում, որի առաջին 6-ում բառացիորեն՝ սեղմագրված (կոնսպեկտավորված) է 150 էջանոց «Գնահատում» փաստաթուղթը (որոշ տվյալներ վերցված են նաև «Աշխատանքային նախագծից»), իսկ վերջին՝ 7-րդ էջում, այսպես կոչված, փորձաքննական պահանջներն են՝

1. Մինչև օրոժուներության իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (ներառյալ ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի օրոժառնական նշանակության փոփոխության վերաբերյալ):

2. Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել՝

- հանքավայրի սահմաններում տեղակայված Թեղուտի փիրուզի հանքարդյունահանման ծրագիրը,

- ենթակառուցվածքների և Թեղուտ օյուղի տարածքում հանստյան օտու (արհեստական լճակ, քոթեջներ և այլն) նախագծային փաստաթղթերը,

- Հանքավայրի երկրորդ հերթի շահագործման նախագծային փաստաթղթերը,

- տարածքի (հանքավայր, լցակույտ, պոչամբար և այլն) ռեկուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը:

3. Անհրաժեշտ է կազմել և շահագործման մարմինների հետ համաձայնեցնել անտառի վերականգնմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

4. Անտառահատումները իրականացնել աստիճանաբար՝ լեռնային աշխատանքների զարգացման ծրագրին համընթաց:

5. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագործման մարմիններին և հասարակայնությանը:

Եզրակացություն

ՀՀ բնապահպանության նախարարությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տվող և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը հաստատող հանձնաժողովի» որոշմամբ «Արմենիան Քափրր Փրոգրամ» ՓԲԸ կողմից

ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի առաջին հերթի (8 տարի) շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով»:

Փորձենք որոշ պարզաբանումներ տալ.

ա. Փորձաքննական պահանջների առաջին կետում ասվում է, որ մինչև գործունեության իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, սակայն չի նշվում, թե դրանք ինչ համաձայնություններ ու թույլտվություններ են, հավանաբար այն պարզ պատճառով, որ դրանց ցանկը բերելով շատերի համար հասկանալի կդառնա, որ ընկերությունը դրանք պետք է նախօրոք ստացած լինել և նախագծի հետ միասին հանձներ փորձաքննության: Իսկ առանց նշված փաստաթղթերի նախագիծը փորձաքննության ընդունելն անթույլատրելի է:

Փորձաքննություն իրականացնողները, նախ, օրենքով սահմանված կարգով, պետք է պահանջեին, որ նախագծի հետ մեկտեղ ներկայացվեն մի շարք գերատեսչությունների, այդ թվում՝ առողջապահության, գյուղատնտեսության, մշակույթի, քաղաքաշինության նախարարությունների, «Հայանտառի» համաձայնությունները: Սակայն, ինչպես տեսնում ենք, ընկերությունը նախագիծը ներկայացրել է առանց նշված փաստաթղթերի, իսկ փորձաքննություն իրականացնող կազմակերպությունն էլ իր հերթին շրջանցել է օրենքը և, նախագիծը ետ վերադարձնելու փոխարեն, ընդունել և նույնիսկ դրական եզրակացություն է տվել:

բ. Երկրորդ կետում թվարկված պահանջները բխում են օրենքից և առանց այդ պահանջների կատարման իրականացվելիք նախագծի շինարարական և բանկային գործողությունների թույլտվություն չի տրվում: Այսինքն, նախագիծը փորձաքննության ենթարկելու փոխարեն խորհուրդներ են տալիս, որ հանկարծ ընկերությունը այդ մասին չմոռանա:

գ. Հանքավայրի երկրորդ հերթի շահագործման նախագծային փաստաթղթերը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնելու պահանջով՝ եզրակացության հեղինակներն ու հաստատողը փաստորեն օրինական են համարում նախագիծը մաս-մաս ներկայացնելու հակահրավակական գործողությունը, և ապա, կարծես իրոք փորձաքննության են ենթարկել նախագծի առաջին փուլի փաստաթղթերը, երբ իրականում կատարվել է միայն դրանց սեղմագրումը (կոնսպեկտավորում): Այստեղից կարելի է անել հետևություն, որ նրանք պատրաստակամություն են հայտնում կոնսպեկտավորել նաև հանքավայրի երկրորդ հերթի փաստաթղթերը և այն կոչել՝ էկոլոգիական փորձաքննություն:

Ընկերությունը հանքահանման-հանքավերամշակման նախագիծը, բացի հողի ոչնչացման-խախտման և անտառահատումների, մյուս բոլոր բաղադրիչներով ներկայացրել է 25 տարվա հաշվով: Այսինքն, հողին ու բուսականությանը, այդ թվում ծառահատումների իրական ծավալները կոծկելու, ավելի ճիշտ՝ շղարշավորելու փորձ է կատարել:

դ. Երրորդ կետի պահանջը պետք է արդեն կատարված լինել մինչև նախագիծը փորձաքննության հանձնելը:

ե. Չորրորդ պահանջը ապօրինի գործողությունների համար ճանապարհ է հարթում:

զ. Հինգերորդ կետը ձևական հայտարարություն է:

... Արհամարհված է ՀՀ բնապահպանության պետական տեսչության պետ Ա. Ավագյանի կարծիքը (023/Ն-1402, 11.09.2006թ.)՝ ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Սանթրոսյանին: Այդ փաստաթղթում մասնավորապես ասվում է. «Ըստ աշխատանքային նախագծի, տարածքը հիմնականում անտառածածկ է: Հատման ենթակա է 127700 ծառ: Բացի այդ, նշված տարածքը հարուստ է օգտակար բուսականությամբ, առաջին հերթին, եզակի դեղաբույսերով... Նշված տարածքի կենդանական աշխարհը հարուստ է իր բազմազանությամբ... Նշված անտառի վերացումը անդառնալի է... Գտնում ենք, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացրած աշխատանքային նախագիծը բացասական ազդեցություն կունենա բուսական և կենդանական աշխարհի վրա, որն իր հերթին բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի և տվյալ տարածքի էկոլոգիական հավասարակշռության վրա: Ելնելով վերը նշվածից, Բնապահպանական Պետական Տեսչությունը «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքային նախագծի վերաբերյալ **տալիս է բացասական կարծիք»:**

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Թեղուտի հանքավայրի նախագիծը փորձաքննության է ընդունվել օրենքի կոպիտ խախտումներով և, առանց որևէ փորձաքննություն իրականացնելու, դրան տրվել է դրական եզրակացություն: Այսինքն, այն գիտական ու իրավական հիմքերից զուրկ մի թղթի կտոր է:

Հետաքրքիր է իմանալ, ՀՀ բնապահպանության նախարարության տեսանկյունից ո՞րն է նախագծին տված դրական եզրակացության հիմքը:

Ձարմանալիորեն համահունչ են «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության և ՀՀ բնապահպանության նախարարության գործելակերպերը՝ երկուսն էլ չեն ցանկանում ճանաչել մեր երկրում գործող օրենքները: Ընկերությունը ներկայացրել է ՀՀ օրենքներին ու միջազգային պայմանագրերին հակասող, թերի, կոծկումներ ու կեղծիքներ պարունակող նախագիծ, իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ նշված օրենքների խախտումով ընդունել է այդ նախագիծը և, առանց փորձաքննություն իրականացնելու, տվել է դրական եզրակացություն: Նախարարությունը դրանով, փաստորեն, փորձում է ապօրինաբար բնության ավերումը, բնական համակարգի ոչնչացումը ծածկել կեղծ օրինականության շղարշով:

Ամփոփում

- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կազմած և բնապահպանական փորձաքննության ներկայացրած «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը» և «Աշխատանքային նախագիծը» ստեղծվել են օրենքի կոպիտ խախտումներով և կեղծիքներ ու անճշտություններ են պարունակում:

- ՀՀ բնապահպանության նախարարությունը Նախագիծը օրինախախտմամբ ընդունվել է փորձաքննության և, առանց փորձաքննություն կատարելու, նախագծին տվել է դրական եզրակացություն:

- Երկրում էկոլոգիական քաղաքականություն իրականացնելու առաքելությամբ ստեղծված գերատեսչությունը, փաստորեն որդեգրել է բնական պաշարները հապճեպորեն օգտագործելու-չարաշահելու և բնական համակարգերը ավերելու-ոչնչացնելու քաղաքականություն:

- Թեղուտի հանքավայրի շահագործումը կործանարար կլինի ողջ տարածաշրջանի համար: Այն կաղքատացնի մեր հանրապետության կենսաբազմազանությունը, կոչնչացնի անկրկնելի մի բնական համակարգ իր

սարերով, կիրճերով, բուսականությամբ, ջրագոյացման ու ջրաբաշխման բնական օբյեկտներով, պատմամշակութային հուշարձաններով և անգամ շրջակա տարածքներում անհնար կդարձնի գյուղատնտեսական անվտանգ մթերքի արտադրությունն ու մարդու նորմալ կյանքը:

- Այժմ արդեն Ալավերդու, Շամլուղի, Ախթալայի հանքարդյունաբերության թափոնները ծանր կացություն են ստեղծել տարածաշրջանի բնակչության համար, իսկ Թեղուտի հանքավայրի շահագործմամբ՝ հիշյալ բնակչությունը, փաստորեն կհայտնվի ... օղակի մեջ:

- Հիմնավորված չեն տեղի համայնքի և տարածաշրջանի սոցիալական վիճակի բարելավման խոստումները: Հակառակը, այդ ծրագրի իրականացումից հետո կտրուկ վատթարանալու են սոցիալական և էկոլոգիական իրավիճակները և մեծ հավանականությամբ այդ տարածքը կդառնա անմարդաբնակ:

- Նախագծի իրականացումը բխում է սահմանափակ թվով մարդկանց, գլխավորապես օտարերկրյա ընկերությունների շահերից և հակասում է մեր ազգի ու պետականության շահերին:

«Գարուն», 2007թ., N3-4, էջ 33-50:

Թեղուտ, Երևան, 2007թ., 54 էջ:

Յ.Գ. Անհրաժեշտ համարեցի հակիրճ անդրադառնալ «Գնահատում» և մասնակիորեն «Աշխատանքային նախագիծ» փաստաթղթերին, նաև այն նպատակով, որ կատարված վերլուծությունը, որպես հակիրճ տեղեկություն, գուցե և, օգտակար լինի պետական պաշտոնյաների, մասնագետների, լրագրողների և առանձին անհատների համար, որպեսզի յուրաքանչյուրն իր կարողությունների սահմաններում հնարավորինս խորությամբ ուսումնասիրի քննարկվող խնդիրը և բանական լուծման ճանապարհ առաջարկի:

Опасные игры

Отклик на статью "Под Ереваном надо построить искусственное море", опубликованную в номере 25 (29.06.2007) "ДЭ".

Казалось, после Ильфа и Петрова таких талантливых авторов больше не будет, но фантазии генерального директора компании "АСР", Валерия Меджлумяна, о парусных гонках с участием королей и принцев крови на новом Ереванском море почище, чем Нью-Васюки с его галактическим шахматным чемпионатом. Кстати, идея строительства нового Ереванского моря смахивает на блеф наподобие того, как после Спитакского землетрясения разные "благотворители" обещали построить в Армении экополисы. На вопрос корреспондента: «А если проект не получит одобрения со стороны властей?», господин Меджлумян отвечает: «На сегодняшний день проект находится на такой стадии прохождения экспертиз, что я полагаю, серьезных препятствий не будет. Кроме того, презентация проекта проходила в Доме правительства и со стороны премьер-министра Армении Сержа Саркисяна были высказаны слова одобрения проекту. Ясно, что организация подобного проекта находится в русле интересов руководства Армении». Вызывает сожаление, что премьер-министр Армении дал одобрение проекту, в то время, как уже третий год техутская проблема очень активно и остро обсуждается на всех уровнях и, независимыми экспертами доказано, что проект имеет очень серьезные недостатки, нарушает международные конвенции и национальное законодательство. А

выданное Министерством охраны природы Армении положительное решение экологической экспертизы Техутского проекта является фикцией (экспертизы по существу не было, в качестве таковой представлен конспект проекта). Следовательно, этот документ не имеет ни научной, ни правовой основы. Что касается высказывания о нахождении проекта в русле интересов руководства Армении, мне кажется, что проект должен находиться в русле интересов нашего народа и государственности. На мой взгляд, реализация проекта будет противоречить этим интересам.

На вопрос почему "Валлекс груп" желает сотрудничать с Внешторгбаком (ВТБ), господин Меджлумян ответил: "Если бы нас финансировал другой, не российский банк, то мы должны были бы использовать более широкий круг документов, включая международную классификацию и международные бизнес-планы, которые в некотором смысле потребовали бы переделки документов...". Хотелось бы знать, какие документы пришлось бы переделывать? Может, потребовалось бы соблюдать международные и национальные законодательные нормы? Вызывает удивление фраза господина Меджлумяна о том, что они с председателем правления ВТБ господином Костиным приняли политическое (!) решение о финансировании Техутского проекта. Насколько мне известно, принятие политических решений является прерогативой Национального Собрания и президента РА.

Что касается приоритетных отраслей, названных господином Меджлумяном в интервью, то для такой маленькой страны, как Армения выводить на первый план в качестве приоритетной отрасли горно-добывающую промышленность совершенно недопустимо и даже преступно..

На вопрос корреспондента: "Если положить на одну чашу весов потерю Техутского леса, а на другую - экономическую мощь страны, то превышает второе?", господин Меджлумян ответил, что: "до сих пор идет массовая воровская рубка лесов - до 2 тыс.га в год, а в Техуте будет за 50 лет вырублено всего 350-360 га леса". Господин Меджлумян сравнивает несравнимое: на месте незаконных вырубок можно восстановить лес, т.к. там не разрушается геологическая основа, ущелья рек не превращаются в хранилища ядовитых отходов, лес сохраняет способность к самовосстановлению, как это было в течение тысячелетий после лесных пожаров и других катастроф. Что касается Техутского проекта, потеря леса - это только незначительная часть потерь, к которым приведет его реализация. Образование в результате разработки месторождения огромного карьера станет причиной не только распространения пыли, содержащей тяжелые металлы, но и высыхания оставшихся поблизости лесов, так как будет нарушен водный баланс. Очевидно, что карьер заполнится грунтовыми водами и осадками, которые в карьере растворят в себе соли тяжелых металлов, которые могут просочиться в другие водные системы. Однако потеря леса и загрязнение водной системы ничто в сравнении с присутствием на этой территории хвостохранилища, которое сделает невозможным проживание населения в прилегающих районах, ведение сельского хозяйства и в итоге навсегда превратит ее в зону экологического бедствия.

Компания "АСР" активно продвигает необходимость эксплуатации Техутского месторождения, связывая с ней перспективу улучшения экологической ситуации г. Алаверды. Мне кажется, что это искусственно созданный узел, так как 12 лет назад, когда восстанавливался Алавердский медно-литейный комбинат вопрос Техутского месторождения никак не связывался с деятельностью комбината и, вообще, техутская проблема не обсуждалась.

С другой стороны, обычно, когда компания искренне заинтересована в улучшении экологической ситуации, развитии промышленности, создании рабочих мест в стране, то для этого она предпринимает конкретные шаги на своих действующих предприятиях, а уж потом, завоевав доверие общества и властей, получает моральное право браться за новые

проекты. В. Меджлумян обещает, что в Техуте будет построен образцовый комбинат. А что мешает ему довести до образцового состояния принадлежащий ему Алавердский медно-литейный комбинат, который сегодня работает по допотопной технологии? В то же время, пути реконструкции комбината известны. Внедрение технологии, например, по улавливанию и утилизации выбрасываемых в атмосферу веществ позволит получать серную кислоту, серу, а также ряд редких и драгоценных металлов. По официальным данным в течение 2006 года выбросы в атмосферу комбината только сернистого ангидрида составили 26,7 тысяч тонн, в то время, как его гигиеническая норма равна 1,17 тыс.тонн в год, а Министерство охраны природы РА временно разрешило выброс до 15,6 тыс.тонн в год. В том же году комбинат выбросил в атмосферу 12 тонн мышьяка, 104,7 тонн пыли (в виде различных аэрозолей), 41 тонна цинка, 2,9 тонн свинца, 2.9 тонн меди.

На состоявшейся недавно в Алаверды встрече в присутствии нового министра охраны природы, других государственных чиновников и представителей общественных экологических организаций и СМИ, председатель комиссии НС по здравоохранению, социальным вопросам и экологии Ара Баблоян сказал, что сегодня в условиях безработицы очень важно иметь 600 рабочих мест, которые обеспечивает медно-литейный комбинат. Однако если подсчитать, то вряд ли государству выгодно иметь эти 600 рабочих мест и содержать тысячи инвалидов. Поскольку нам нужны эти рабочие места, руководству компании необходимо срочно предпринять меры для приведения производства в соответствие с экологическими нормами.

Для вывода г.Алаверды из нынешнего катастрофического состояния руководство компании "АСР" считает необходимым резко увеличить объемы производства медного концентрата. Только в Техуте на первом этапе планируется производить медный концентрат эквивалентный 30 тыс.тонн черновой меди в год, а затем – удвоить и утроить производство, и только после этого оно станет прибыльным. И только тогда станет возможным внедрение экологически безопасных технологий, в том числе для получения серной кислоты из выбрасываемого сегодня в атмосферу сернистого ангидрида. На мой взгляд, и после резкого увеличения объема производства черновой меди серная кислота не будет производиться, потому что сегодня компания в год производит всего 10-12 тысяч тонн черновой меди, при этом можно было бы получать около 40 тыс.тонн серной кислоты, но руководители компании утверждают, что потребность республики в ней всего около 8 тыс. тонн. Если невозможно реализовать 40 тысяч тонн, куда будут девать гораздо большее количество кислоты? (Заметим, что потребность серной кислоты в Армении не такая низкая. Например, по данным Управления по использованию и мелиорации земель Министерства сельского хозяйства РА в республике сейчас есть более 50 тыс. га солончаковых земель, для восстановления которых необходимо около 3 млн тонн серной кислоты..

Руководители компании откровенно объявляют, что если не расширять объемы производства медного концентрата (здесь нужно понимать эксплуатацию Техутского месторождения), то они закроют комбинат. Что это? Экономический шантаж? А кто должен выполнять подписанные до этого с правительством Армении договоры?

Сегодня ясно видно, что Алавердский медно-литейный комбинат не имеет перспектив, а компания "АСР", по-видимому, намерена вывозить из Армении медный концентрат.

05.07.2007

ՔԱՌԱԿՈՂՄ ԴԱՇԻՆՔ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԵՄ

Պետք է պահպանենք Թեղուտի անտառները

Երբ հայտնի դարձան Լոռվա մարզի Թեղուտ և Շնող գյուղերի մոտակա անտառներում հանքահանում կազմակերպելու «Էյ-Սի-Փի» ընկերության նախագծի լուրջ թերությունները, գլխավորապես ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին չհամապատասխանելը, համոզված էինք, որ բնապահպանության նախարարությունն այդ նախագիծը փորձաքննության չի ընդունի, և այն շրջանառությունից կհանվի, սակայն նախարարությունը, ոտնահարելով ՀՀ օրենսդրությունը, նախագիծն ընդունեց և, առանց փորձաքննություն իրականացնելու, դրան տվեց դրական եզրակացություն:

Այդպիսով պարզ դարձավ բնական համակարգերի ավերման ու ոչնչացման գործում «Վալլեքս գրուպ»-ի կազմում ընդգրկված «Էյ-Սի-Փի» ընկերության և ՀՀ բնապահպանության նախարարության համերաշխությունը: Այդ ժամանակ մենք հույսեր էինք փայփայում, որ զանգվածային լրատվամիջոցները, ճիշտ ու լիարժեք տեղեկատվությամբ, կնպաստեն Թեղուտի հանքավայրի շահագործման կանխմանը: Եվ իրոք, սկզբնական շրջանում խնդրին վերաբերող լուրջ հրապարակումներ ու հաղորդումներ եղան: Սակայն, վերջին կես տարում, գլխավորապես «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա», «Իրավունք», «Հայոց աշխարհ», «Դեղովոյ էքսպրես», «Արմնյուզ», «Արմենպրես» և այլ լրատվամիջոցներ Թեղուտի հանքավայրի շահագործման օգտին միակողմանի տեղեկություն են տարածում:

Նրանց խիստ բեւեռացվածությունն առաձնապես ցայտուն արտահայտվեց սույն թվականի հունիսի 22-24-ին, լրագրողների և բնապահպանական հասարակական կազմակերպությունների համար «Վալլեքս գրուպ» ընկերության միջոցներով Դրմբոնի (Արցախ) հանքավայր կատարված այցելության ընթացքում:

Արցախի հիասքանչ բնությունը, հանքանյութի վերանշակման գործարանի կոկիկ ու գեղեցիկ տեսքը, անթերի կազմակերպված միջոցառումը լրագրողներին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ուղղակի շլացրել էին: Հավանաբար, շատերը կմտածեն, որ Դրմբոնի արտադրության համերաշխ գովաբանումը հետեւանք է միայն նշված տպավորությունների: Սակայն, Արցախ ուղևորվելիս՝ հենց Երևանում արդեն պարզ դարձավ, որ հրավիրված լրագրողներն այդ հանքավայրի մասին միակողմանի, այն էլ՝ գովազդային տեղեկություններ են տարածելու: Եվ իրոք, առանց խորանալու խնդրի էության մեջ, ընկերության մասին միայն գովազդ տարածեցին, դրան զուգահեռ՝ նաև իրականությանը բացարձակորեն չհամապատասխանող տեղեկություններ: Նրանք հրապարակել են, որ Դրմբոնում առկա պոչամբարներն իբր ունեն մեծ հուսալիություն, և չնայած տեղանքի երկրաշարժայնությունն ընդամենը 4.5 բալ է, այդուհանդերձ, պոչամբարների պատվարները կառուցված են երկաթբետոնից և կարող են դիմակայել 9 բալանոց երկրաշարժի, պոչամբարների հատակները հուսալիորեն մեկուսացված են և այլ դատարկ հայտարարություններ:

Ցանկացողը տեղում կարող է համոզվել, որ Դրմբոնում պոչամբարների պատվարները երկաթբետոնից չեն, դրանք հողից կառուցված թմբեր են, և ամենագլխավորը՝ ըստ «Լեռնային Ղարաբաղի հանրապետության և հարակից շրջանների սեյսմիկ շրջանացման քարտեզի» (MSK-64, 1997թ.)՝ տեղանքի երկրաշարժայնությունը 9 բալ է, ավելին՝ Սարսանգի ջրամբարի տարածքով անցնում է երկրաբանական խզվածք: Պոչամբարների հատակների «հուսալիորեն» մեկուսացված լինելը նույնպես հորինվածք է: Բոլորս ականատես եղանք, թե ինչպես նոր շահագործվող պոչամբարում պոչամբարը գրավում է կանաչ տարածքը: Այդտեղից անգամ հատված ծառերի կոճղերն ու արմատները չեն հեռացվել, ինչը նման կառույցների համար անթույլատրելի է (պոչամբարների հարևանությամբ արածում էին կովեր եւ ուրիշ ընտանի կենդանիներ): Այդ երկու պոչամբարներն էլ կառուցված են Սարսանգի ջրամբարի հարևանությամբ եւ վթարի դեպքում մահաբեր թունավոր նյութերը կլցվեն այդ ջրամբարը:

Օրերս, հուլիսի 4-ին բնապահպանության նախարարն Ալավերդու պղնձաձուլական գործարանի հրավիճակին ծանոթանալու նպատակով ստուգայց էր կազմակերպել: Միջոցառմանը հրավիրված լրագրողներին, այս անգամ նույնպես, ընկերությունը գովազդելուց զատ այլ խնդիր չէր հետաքրքրում: Լրագրողներից մեկն էլ առանձնագրույցում ասաց, թե ինքն իբր հրավիրված չէ և եկել է անկողմնակալ վերլուծական հոդված գրելու: Սակայն նրա հրապարակած հոդվածում անկողմնակալության հետքն անգամ չկա. «Համաձայն նախարարության ներկայացուցիչների՝ այցելության առիթից մեկն էլ տարածվող խոսակցություններն են, թե ընկերությունը դեռ թույլտվություն չստացած՝ արդեն սկսել է Թեղուտի անտառի ծառերը հատել: Այսինքն՝ կարիք կա տեղում տեսնելու և համոզվելու, թե որն է իրականությունը: Նախարարի հետ միասին լինելով այնտեղ, որտեղ երկրաբանահետազոտական աշխատանքների համար հորատում էր կատարվում, մենք ո՛չ այդտեղ, ո՛չ էլ անտառամիջյան ճանապարհների հարեւանությամբ, ճանապարհից տեսանելի տարածքներում անտառահատում կամ հանքավայրի շահագործման նպատակով հատված ծառեր չտեսանք» («Հայոց աշխարհ», 06.07.2007 թ.):

Հասարակությանը խնդրից շեղելու փորձված եղանակ:

Այդ լրագրողը մոտ երեք տարի է, ինչ թեղուտի խնդրին վերաբերող բազում հոդվածներ է գրել, լավատեղյակ է հարցին, և հանկարծ պղնձաձուլական գործարանում տեղի ունեցած քննարկման ընթացքում հնչած հույժ կարևոր հարցերը թողնելով՝ ներկայացնում է «նախարարության ներկայացուցիչների» ասածները: Ավելին, բնապահպանության նախարարը մի քանի անգամ հատուկ շեշտեց, որ այցի նպատակը միայն պղնձաձուլարանի գործունեությունը գնահատելն է, իսկ թեղուտ կատարվելիք այցը միայն տեղի բնությունը տեսնելու նպատակով է արվելու, քանի որ թեղուտի խնդիրը շատ լուրջ է ու մեծ արձագանք է ստացել, ուստի պետք է գիտական քննարկումներ կազմակերպենք և միայն դրանից հետո կկարողանանք կարծիք հայտնել:

Հրավիրված մյուս լրագրողները նույնպես բացարձակորեն անտեսեցին այնտեղ հնչած շատ արժեքավոր ելույթներ:

Ցավոք, որոշ հասարակական կազմակերպությունների ղեկավարների ելույթների ենթատեքստում, իսկ երբեմն էլ ուղղակիորեն «հիմնավորվում» է թե՛ Ալավերդու պղնձաձուլարանը նախնադարյան եղանակով գործարկելը, եւ թե՛ թեղուտի հանքավայրի շահագործման անհրաժեշտությունը: Նաև հիշենք, թե մոտ երկու ամիս առաջ թեղուտի հանքավայրի շահագործման «հիմնավորմամբ» «Արմնյուզ» հեռուստաալիքով ինչպիսի ելույթ ունեցավ, օրինակ, իրավաբանական-բնապահպանական հայտնի ՀԿ-ի ղեկավարը:

Ինչպես տեսնում ենք, բնության ոչնչացման եւ մարդու առողջության վնասման գործում բնապահպանության նախարարությանը և «Վալլեքս գրուպ»-ին բացահայտ աջակցում են նաև զանգվածային լրատվամիջոցները և բնապահպանական հասարակական կազմակերպությունները:

Արդյոք նրանք գիտակցու՞մ են, թե ինչ խնդրի շուրջ են ստեղծել այդ գործուն դաշինքը:

Թեղուտի հանքավայրի շահագործումը նախ՝ նախադեպ կղառնա անտառային տարածքները հանքարդյունաբերության տակ դնելուն և ակնհայտորեն կփոխի անտառների նկատմամբ վարվող պետական քաղաքականությունը (հանքահանման նպատակով արտոնագրված ուսումնասիրություններ են կատարվում նաև այլ անտառտարածքներում), և ապա՝ հանքարդյունաբերության հետեւանքով այդտեղ կոչնչանա կյանք ապահովող բնությունը (երկրաբանական հիմքերը, գետերը, անտառային ու համայնքային հողերը, մշակութային հուշարձանները), իսկ առաջացած միլիոնավոր տոննաներով թափոնները, գլխավորապես պոչանքը, օգտագործման համար ոչ պիտանի կղարձեն նաև հարակից տարածքները: Այսինքն՝ այդ դաշինքն ուղղված է բնության և մարդու դեմ:

«Վալլեքս գրուպ» ընկերության պաշտոնյաները թեղուտի հանքավայրի շահագործման անհրաժեշտությունը, Դրմբոնի հանքավայրի գործունեությունը և Ալավերդի քաղաքն էկոլոգիական աղետից դուրս բերելու ծրագիրը դարձնում են մի հանգույց: Ընկերության ղեկավար պարոն Վալերի Մեջլումյանն ասում է, որ թեղուտի հանքավայրի շահագործումն օրինակելի կլինի, ինչպես Դրմբոնում է: Առաջին տարիներին թեղուտում նախատեսում են տարեկան ստանալ 30 հազար տոննա սև պղնձին համարժեք խտանյութ, իսկ հետագա տարիներին արտադրանքը կկրկնապատկվի եւ կեռապատկվի: Ալավերդու պղնձաձուլական գործարանը կարելի է վերակառուցել և էկոլոգիական առումով ընդունելի դարձնել միայն այդ դեպքում, եթե այսօրվա 10-12 հազար տոննայի փոխարեն 100-120 հազար տոննա սև պղնձ արտադրելու երաշխիք ունենանք, իսկ այսօրվա հզորության պայմաններում անհիմաստ է պղնձաձուլարանում բնապահպանական տեխնոլոգիաներ կիրառելը, այն պարզ պատճառով, որ գործարանը կղառնա ոչ

շահութաբեր: Նա հստակորեն ասում է՝ եթե պղնձի խտանյութի (կոնցենտրատի) ծավալը կտրուկ չմեծանա (պետք է հասկանալ՝ եթե թեղուտը չշահագործվի), իրենք ստիպված կլինեն փակել Ալավերդու պղնձածուլարանը և Հայաստանից հեռանալ:

Հարց է ծագում. իսկ ո՞վ պետք է կատարի կառավարության հետ կնքած պայմանագրային պարտավորությունները: Անթույլատրելի է պղնձածուլարանում բնապահպանական տեխնոլոգիաներ տեղադրելու խնդիրը կապել թեղուտի հանքավայրը շահագործելու կամ չշահագործելու հետ: Նաև՝ մոտ 12 տարի առաջ այդ գործարանի վերականգնման առնչությամբ կառավարության հետ կնքված պայմանագրում արդյոք այդպիսի պայման կա՞:

Ինչ վերաբերում է թեղուտի հանքավայրն օրինակելի դարձնելու հավաստիացումներին, ապա, եթե ընկերությունն իրոք անկեղծորեն ցանկանում է երկրում զարգացնել էկոլոգիական առումով տանելի՝ ապագա խոստացող արդյունաբերություն և նոր աշխատատեղեր ստեղծել, ուրեմն առաջին հերթին պետք է իր գործող արտադրություններում լուրջ քայլեր կատարելով՝ ստանա բնակչության և իշխանության վստահությունը, միայն դրանից հետո կարող է բարոյական իրավունք ունենալ մտածել նոր արտադրություններ կազմակերպելու մասին:

«Վալլեքս գրուպ»-ին պատկանող պղնձածուլարանի շահագործման հետևանքով այսօր Ալավերդի քաղաքը, բառիս բուն իմաստով, շնչահեղձ է լինում: Այդ գործարանից 2006 թ. Ալավերդու մթնոլորտ է արտանետվել 26,7 հազար տոննա միայն ծծմբային անհիդրիդ, այն դեպքում, երբ դրա տարեկան հիգիենիկ նորման 1,18 հազար տոննա է: Բնապահպանության նախարարությունն ընկերությանը ժամանակավորապես թույլատրել է տարեկան արտանետել 15,6 հազար տոննա ծծմբային անհիդրիդ (2006 թ.): Այդ քայլով նրան արտոնվել է չվճարել խոշոր տուգանքներ, որպեսզի այդ գումարներով կարողանա բնապահպանական տեխնոլոգիաներ տեղադրելով՝ քաղաքի մթնոլորտ արտանետվող թունավոր նյութերի քանակը համապատասխանեցնել ընդունված նորմատիվներին: Այդ ժամանակը սպառվում է 2008-ի վերջին, սակայն մինչ այժմ ոչ մի միջոցառում դեռևս չի իրականացվել: Ավելին, 2005 թ. համեմատությամբ մթնոլորտ արտանետվող ծծմբային անհիդրիդի քանակն ավելացել է 2546 տոննայով: 2006 թ. գործարանից մթնոլորտ է արտանետվել նաև 12 տոննա մկնդեղ, 104,7 տոննա փոշի (տարբեր աերոզոլների տեսքով), 41 տոննա ցինկ, 2,9 տոննա կապար, 2,9 տոննա պղինձ (նախորդ տարվա համեմատությամբ մթնոլորտ արտանետվող ծանր մետաղների քանակն ավելացել է 23,81 տոննայով): Նշեն, որ պղնձածուլարանից արտանետվող նյութերի՝ այստեղ բերված թվերը համարվում են պաշտոնական, այն դեպքում, երբ այդ թվերը հաշվարկային եղանակով են ստացվում: Այդուհանդերձ, տարիներ շարունակ բնապահպանության նախարարությունը, առանց լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու, հաստատում է գործարանի հաշվետվությունները մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին, երբ հայտնի է, որ ձեռնարկություններն այդ խնդրում համարվում են շահագրգիռ կողմ (Բնապահպանության նախարարությունում անգամ տեղյակ չեն պղնձածուլարանում օգտագործված պղնձի կոնցենտրատի տարեկան քանակի մասին):

Եթե գործունեության առաջին տարիներին պղնձածուլարանի գերնորմատիվային արտանետումներն արտոնում էր բնապահպանության նախարարությունը, ապա 2005 թ. մայիսի 2-ից այդ արտոնությունն արդեն օրենքի ուժ ստացավ՝ Ազգային ժողովը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելով՝ օդային

ավագանի վնասակար նյութերի արտանետումների ժամանակավոր չափաքանակներ սահմանեց:

Ինչպես տեսնում ենք, «Վալլեքս գրուպ»-ի նկատմամբ ՀՀ իշխանության վստահությունն ու բարյացակամությունը սահմաններ չունեն (նույնիսկ զոհաբերում է իր հազարավոր քաղաքացիների առողջությունը, այսինքն՝ նաև ապագան): Հետաքրքիր է իմանալ, թե ընկերությունն ինչպես է արձագանքում այդ բարյացակամությանը: Ընկերության արձագանքը, իմ ընկալմամբ, պարզ է ու հստակ՝ անհեռանկարությամբ և անորոշությամբ՝ «եթե Թեղուտի հանքավայրը շահագործվի», «եթե մետաղների գները շարունակեն բարձրանալ», «եթե շրջափակումը վերանա», «եթե աստված տա», նաև՝ պղնձաձուլարանը փակելու սպառնալիքով:

2001-ին ընկերության ղեկավարի միջոցներով պղնձաձուլական գործարանի հարևանությամբ կառուցվել է սրբատաշ քարից մի գմբեթավոր գեղատեսիլ եկեղեցի: Արդյոք տրամաբանական չէ՞ր լինի այդտեղ ծախսած գումարներն առաջին հերթին ուղղել պղնձաձուլարանում բնապահպանական տեխնոլոգիաներ տեղադրելուն և շահագործելուն, այսինքն՝ Ալավերդի քաղաքի օդային ավազանի հեղձուցիչ վիճակը մեղմելուն: Մինչև ե՞րբ ալավերդցիները, գլխավորապես երեխաները, քնելուց առաջ պետք է հատուկ ղեղամիջոց ընդունեն, որպեսզի մեղմվի հազը եւ կարողանան քնել: Նրանց ի՞նչ ապագա է սպասվում: Ո՞վ պետք է հոգ տանի նրանց մասին:

Փաստորեն, Ալավերդի քաղաքի բնակչության նկատմամբ դրսևորված ամենադաժան վերաբերմունքն արդեն սահմանված է օրենսդրորեն, իսկ եկեղեցու առկայությունը, թերևս, հասկացվի՝ հնազանդություն ու խոնարհում: Արդյոք չի՞ գտնվելու թեկուզ մի անհատ, որ դատարան դիմելով՝ պատասխանատվության կանչի իր և իր զավակների առողջությանը հասցրած վնասի պատասխանատուներին: Ինչպես հայտնի է, վտանգավոր նյութերով հագեցած մթնոլորտի պայմաններում ապրելը կարող է նաև ժառանգական խաթարումների պատճառ դառնալ (Բնության պահպանման մասին ՀՀ օրենսդրության հիմունքներում սահմանվում է. «ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի բնակվել մաքուր շրջակա միջավայրում, իսկ վերջինիս խախտումների դեպքում՝ ստանալ էկոլոգիական աղետյալի կարգավիճակ» (հոդված 11): **«Ձեռնարկությունները պարտավոր են որոժող նորմատիվներին համապատասխան ապահովել բնական միջավայրի պահպանությունը՝ մաքրիչ սարքավորումների, կառուցվածքների և կայանքների անխափան և արդյունավետ աշխատանքը, վնասակար թափոնների վնասազերծումն ապահովելու, էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների և ջրաշրջանառու մատակարարման համակարգեր ներդրելու միջոցով: Արգելվում է շահագործման ընդունել այն օբյեկտները, որոնք չեն ապահովում էկոլոգիական բոլոր պահանջների կատարումը: Այդպիսի օբյեկտները շահագործման ընդունած հանձնաժողովի նախագահը և անդամները ենթակա են վարչական և քրեական պատասխանատվության »**, հոդված 15):

Այսօր Ալավերդի քաղաքի մթնոլորտ արտանետվող ծծմբային անհիդրիդից ծծմբական թթու չարտադրելը Վալեի Մեջլումյանը բացատրում է նաև նրանով, որ տարեկան կստացվի ավելի քան 40 հազար տոննա ծծմբական թթու, որի իրացումը, երկաթգծի բացակայության պարագայում, անհնար է, իսկ Հայաստանում ծծմբական թթվի պահանջարկը տարեկան 10 հազար տոննայից էլ պակաս է: Եթե այդպես է, ապա ինչու՞ է ընկերությունը հայտարարում, որ արդեն գնել է ծծմբական թթվի ստացման 3 միլիոն դոլար արժողությամբ ժամանակակից տեխնոլոգիա: Ինչու՞ գնել և տեղադրել, եթե չպիտի շահագործվի: Նաև՝ եթե ընկերության համար անլուծելի է 40 հազար տոննա ծծմբական թթվի վաճառքը, ապա արտադրության

հզորացման դեպքում ինչպե՞ս կկարողանա իրացնել տարեկան արդեն մի քանի հարյուր հազար տոննա ծծմբական թթուն: Պետք է ասել, որ այդքան սահմանափակ չէ ծծմբական թթվի սպառման ներքին շուկան: Ըստ գյուղատնտեսական նախարարության հողերի օգտագործման ու վերականգնման վարչության տվյալների՝ մեր երկրում ավելի քան 20 հազար հեկտար աղակալված ավալիական և 30 հազար հեկտար երկրորդային աղակալված ավալիական հողեր կան, որոնց վերականգնման համար կպահանջվի մոտ 3 մլն տոննա ծծմբական թթու:

Հայտնի է, որ արտադրություններում թունավոր նյութերի որսման-չեզոքացման-օգտահանման տեխնոլոգիաներ տեղադրելն ու շահագործելը, հիմնականում, նույնիսկ ծախսածածկող չեն: Եթե հետևենք «Վալլեքս գրուպ» ընկերության տրամաբանությանը, ուրեմն աշխարհով մեկ պետք է հրաժարվեն բնապահպանական տեխնոլոգիաների կիրառումից, ինչը կնշանակի կազմալուծել արդյունաբերությունը:

Հիշյալ քննարկման ընթացքում ԱԺ սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանն իր ելույթում ասաց, որ շատ կարևոր է այսօրվա գործազրկության պայմաններում պղնձածուլարանում 600 աշխատատեղ ունենալը, սակայն անհրաժեշտ է լուրջ հաշվարկներով պարզել, թե մեր երկրի համար ձեռնտու է բնակչության առողջության կորուստի հաշվին այդքան աշխատատեղ ունենալը և հետագայում հազարավոր հաշմանդամներ պահելը, թե՞ այդ աշխատատեղերը չունենալը: Նա գործարանի ղեկավարությանը կոչ արեց բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմամբ նորմատիվի հասցնել քաղաքի մթնոլորտ արտանետվող թունավոր նյութեր քանակը և միայն դրանից հետո խոսել արտադրական հզորությունների ընդլայնման մասին:

Ալավերդու պղնձածուլարանի առնչությամբ առկախվում է նաև հետևյալ հարցը. սև պղինձն ինչու՞ է արտահանվում, չէ՞ որ այն ստացվում է մեր բնության ավերման եւ թունավոր նյութերով բնակավայրերի կայուն աղտոտման հաշվին: Ի՞նչն է խանգարում, որ տեղում կազմակերպվի սև պղնձից մաքուր պղնձի և դրան ուղեկցող ոսկու, արծաթի, ռենիումի և հազվագյուտ այլ մետաղների ստացումը, որը, ընդհանրապես, կարելի է մաքուր արտադրություն համարել:

Վերադառնալով Թեղուտի խնդրին՝ նշեմ, որ զարմանք է հարուցում առանձին ներդրողների բևեռվածությունը հանքարդյունաբերության նկատմամբ, առավել ևս մեր իշխանավորների պատրաստականությունը և գրկաբացությունը ամեն մի ներդրման նկատմամբ, երբ հայտնի է, որ լինում են նաև անցանկալի և նույնիսկ վնասաբեր ներդրումներ: Նաև՝ ինչու՞ մանրագնին չեն վերլուծվում նախատեսվելիք ծրագրերի-նախագծերի այլընտրանքային տարբերակները: Օրինակ՝ Թեղուտի դեպքում ինչու՞ չի քննարկվում այդ տարածքում գյուղատնտեսությունը զարգացնելու՝ լուրջ հիմքեր ունեցող տարբերակները, չէ՞ որ ընդամենը երկու տասնամյակ առաջ այդտեղ եղել է շահութաբեր գյուղատնտեսություն: Ինչու՞ չվերականգնել ու չընդլայնել նախկինում եղածը:

Ընդհանուր գործընթացից այն պարզ պատկերն է ուրվագծվում, որ Թեղուտի, Դրմբոնի և պղնձածուլարանի խնդիրները շաղկապված ներկայացնելն ուղղակի նպատակին հասնելու միջոց է, իսկ բուն նպատակը մեկն է՝ հանքարդյունաբերության տակ դնել Թեղուտ և Շնող գյուղերին հարակից անտառներն ու բնական մյուս համակարգերը: Ահա թե ինչ վտանգավոր ծրագրի շուրջ է ստեղծվել հիշյալ քառակողմ դաշինքը:

Պարզից էլ պարզ է, որ «Վալլեքս Գրուպ»-ը ցանկանում է շահագործել Թեղուտի հանքավայրը, փակել Ալավերդու պղնձաձուլական գործարանը, իսկ պղնձի խտանյութը՝ արտահանել:

«Յետք», www.hetq.am, 20.08.2007թ.,

ՕՐԵՆՔՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՅԱՍԱՐՅԱԾ

«Վալլեքս Գրուպ»-ում ընդգրկված «ԷյՍիՓի» ընկերության տնօրեն Գագիկ Արզումանյանի հարցազրույցում («Կփակվի՞, արդյոք, Ալավերդու պղնձաձուլարանը», «Յետք», 03.09.2007 թ.) մեկ անգամ ևս արտացոլվում է ընկերության հիմնական նպատակը՝ շահագործել Թեղուտի հանքավայրը, փակել Ալավերդու պղնձաձուլարանը, արտահանել պղնձի խտանյութը (կոնցենտրատը):

Անտառահատմանը վերաբերող այն հարցին, թե «Ձեր տարածած առաջին տեղեկատվության մեջ եղել է 600 հա», Գ. Արզումանյանը պատասխանում է. «Այո, բայց հետո դրանք ճշորտվել են: Պարզվել է, որ այդ 600 հա անտառային հողում կան նաև տեղեր, որտեղ ծառեր չկան, բացատներ են: Դրանից հետո մի անգամ ճշտվել է, դարձել է 510, հիմա պարզվել է, որ հատվելու է 357 հա: Այսինքն՝ մեզ անհրաժեշտ է լինելու հատել 357 հա անտառ: Այս պահին ունենք ճշորիտ հաշվարկ՝ ծառերի քանակով, տեսակով, բների հաստությամբ, տարիքով: Այդ հաշվարկը ցանկացած անձի կարող ենք տրամադրել, եթե ուզեն, թող օճան ստուգեն»:

Պատասխանից պարզորոշ հասկացվում է, որ Թեղուտի հանքավայրի նախագիծը կազմելուց, շրջանառության մեջ դնելուց հետո է միայն ընկերությանը հայտնի դարձել, որ նշված անտառտարածքում կան նաև բացատներ: Այն դեպքում, երբ նման խնդիրները պարտադրաբար պարզաբանվում են մինչ նախագիծը կազմելը: Յետաքրքիր է, այդ ի՞նչ հաշվարկներ են. եթե առաջին դեպքում ընկերությունը, ասենք, հայտնաբերել է բացատները և 90 հեկտարով փոքրացրել ոչնչացվելիք անտառտարածքը, ապա երկրորդ դեպքում ինչպե՞ս են հիմնավորում ծառածածկ տարածքների արդեն համարյա կրկնակի նվազումը: Տնօրենի այն

ինքնավստահ հայտարարությունը, որ «այս պահին ունենք ճշօրիտ հաշվարկ» և «եթե ուզեն, թող օճան ստուգեն», թերևս պայմանավորված է նրանով, որ նա արդեն գիտի, որ Թեղուտի պահպանության խնդրով շահագրգիռները ստուգումներ կատարելու միջոցներ չունեն, նաև այն, որ եթե անգամ այդ ստուգումները կատարվեն ու նոր կոծկումներ բացահայտվեն, միևնույն է, դա նույնպես չի փոխի իրերի դրությունը, քանզի ընկերությունը կարողանում է նախագծում թույլ տված անգամ կոպիտ խախտումներն ու կեղծիքները չչտկել, այդուհանդերձ վայելել որոշ նախարարների, գուցե և բարձրյալների համակրանքը:

2007 թ. օգոստոսի 25-ին ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանի հետ եղանք Թեղուտի անտառի այն հատվածներում, որտեղ նախատեսվում է իրականացնել հանքահանում-հանքավերամշակում: Այդտեղ հայտնաբերեցինք ԽՍՀՄ Կարմիր գրքում գրանցված Կովկասյան խուրմա (Diospyros Lotus L.) շատ հազվադեպ ծառատեսակը և 1,12 մ կոճղի տրամագծով կաղնի (տեղացիները պնդում են, որ այդտեղ կան ավելի հաստաբուն կաղնիներ), այն դեպքում, երբ «ԷՍԻՓի» ընկերության կազմած նախագծում այդ հազվադեպ ծառատեսակը բացակայում է, իսկ ամենահաստաբուն կաղնու կոճղի տրամագիծն ընդամենը 28 սմ է: Կարծում են՝ այս փաստը նույնպես ուշադրության չի արժանանա...

Այն հարցին, թե վերջին անգամ ե՞րբ է բնապահպանության նախարարությունը Ալավերդու պղնձաձուլարանում ստուգումներ անցկացրել, տնօրենը պատասխանում է. «Նախարարության աշխատակիցների հետ վեճ է եղել հանքաքարում պղնձի պարունակության հետ կապված: Մենք ընդունել ենք նախարարության տեսակետը՝ բնօտարծման վճարները վճարել ենք իրենց ասած քանակներից ելնելով, և դրանով վեճը հարթվել է: Ինչ վերաբերում է պղնձաձուլարանի օրենսդրությանը, պետք է հասկանալ, որ եթե կան բնապահպանական օրենսդրության խախտումներ, ապա այդ խախտումների համար առաջնորդվում ենք օրենսդրությամբ և վճարում ենք օրենսդրությամբ նախատեսված բոլոր վճարները: Օրենքը չի արժեղում սահմանային թույլատրելի չափերից ավելի արտանետումներ, այլ սահմանային թույլատրելի չափերից ավելի արտանետումների դեպքում պահանջում է համապատասխան վճարումներ: Մինչև 2005 թ. հուլիսի 1-ը արտանետումների թույլատրելի սահմանաքանակների օերազանցման համար վճարման ենթակա օումարը եղել է եռապատիկ ավելի, դրանից հետո՝ հնապատիկ կամ տասնապատիկ ավելի՝ կախված օերազանցման չափից»:

Պարզ հասկացվում է, որ պղնձի իրական պարունակությունը թաքցվել է, այսինքն՝ կեղծարարություն (պետական ունեցվածքի շորթման փորձ) է եղել, ինչը բացահայտվելուց հետո ընկերության ղեկավարները վճարել են նախարարության ներկայացուցիչների «ասած քանակներից ելնելով»: Եթե տնօրենը ասում է. «Օրենքը չի արժեղում սահմանային թույլատրելի չափերից ավելի արտանետումներ», ուրեմն պետք է իմանա, որ չկա այնպիսի օրենք, որը թույլատրի տարիներ շարունակ մթնոլորտում թունավոր նյութերի թույլատրելի քանակների տասնապատիկ և ավելիի գերազանցման պայմաններում պահել մի ամբողջ քաղաքի բնակչություն: Այս առնչությամբ մեջբերեմ լրագրողներ Արփի Հարությունյանի և Մարիաննա Գրիգորյանի հոդվածից (www.armenianow.com, 2006թ., N17, ապրիլ). «Առողջապահության նախարարության տրամադրած վիճակագրությունը պարզ արտացոլում է, թե ինչպիսի խնդիրներ են սկսվում 2000 թ. հետո: Եթե 1992թ., երբ գործարանը չէր աշխատում, չի արձանագրվել արատավոր ծննդի ոչ մի դեպք, ապա 2001 թ. Ալավերդիում գրանցվել է բնածին շեղումով 28 դեպք, իսկ 2004թ. այդ թիվն աճել է մոտավորապես 5 անգամ՝ հասնելով 107-ի: «Վերջին մի տարվա ընթացքում հայտնաբերել ենք հիդրոցեֆալիա (երբ ուղեղի փոխարեն պտղի մոտ ջուր է՝ ուղեղի գերշրություն),

անենցեֆալիա՝ գլխի դիմային մասը կա, իսկ ուղեղը չկա, ողնաշարի ճողվածք, «երկու գլխանի» պտուղ (գլխանման պարկ՝ լցված ջրով) և այլ արատներ: Դրանք հիմնականում կյանքին անհամատեղելի արատներ են, և մինչև ծննդաբերությունը արհեստական վիժում է կատարվում»,- ասում է Ալավերդու ծննդատան գլխավոր բժիշկ Ամալյա Ազատյանը: Ըստ վիճակագրության՝ բացի պերինատալ շրջանում առաջացած արատներից ու հիվանդություններից, վերջին մի քանի տարում ավելացել է նաև չարորակ գոյացություններ ունեցող մարդկանց թիվը: Ալավերդու պոլիկլինիկայի տվյալների համաձայն՝ եթե 2002 թ. գրանցվել է 360 դեպք, ապա 2003 թ.՝ արդեն 392, և 2004-ին՝ 411: Գրեթե նույն պատկերն է շնչառական հիվանդությունների պարագայում: Եթե 2001-ին գրանցվել է շնչառական հիվանդություններով մինչև 14 տարեկան 679 երեխա, ապա 2003-ին այդ թիվը կրկնապատկվել է՝ հասնելով 1389-ի: Ըստ Ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտի արդյունաբերական թունաբանության լաբորատորիայի ղեկավար Էմիլ Բաբայանի՝ ինստիտուտի կատարած հետազոտությունները պարզել են, որ Ալավերդու մանկապարտեզներում երեխաները մտավոր ունակություններով 7-10 բալով նորմայից հետ են մնում: Հակառակն է պնդում կոմբինատի ներկայացուցիչ Անդրանիկ Ղամբարյանը. «Դրանք սուտ տեղեկություններ են: Ոչ մեկը չի կարող բացառել, որ արտանետումները կան, բայց դա վնաս չի տալիս: Մարդիկ նախանձից են մնան լուրեր տարածում»: Պղնձածուլական կոմբինատի ղեկավարությունը հավաստիացնում է, որ մոտ ապագայում տեղադրվելու են ֆիլտրեր, որոնք կանխելու են օդային ավազանի աղտոտումը: «2008-ի վերջերին երկու փուլով կգործարկվեն ֆիլտրերը, որոնք կլուծեն էկոլոգիայի խնդիրը: Տեխնիկան բերում են Սլովակիայից: Մի մասը նոր է, մի մասը՝ օգտագործված», - ասում է «ԷյՍիՓի» ընկերության լրատվական բաժնի ղեկավար Թագուհի Կարապետյանը: Մինչդեռ Ալավերդու քաղաքային իշխանության որոշ օղակներ (ովքեր չցանկացան հրապարակել իրենց անունները) փաստում են, որ ներկրվող սարքավորումներն արտադրությունից դեմոնտաժված են և, ըստ էության, խոտան»:

Ըստ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի փաստաթղթի (18.10.2005թ., N25-7/55-1135)՝ 1994 թ. Ալավերդի քաղաքում ծնվածների թիվը կազմել է 273, իսկ մահացածներինը՝ 241: Նույն հիմնարկության տվյալներով՝ 2006 թ. գրանցվել է 179 ծնունդ և 190 մահ...

Ինչ վերաբերում է *եռապատիկ*, *հնգապատիկ* կամ *տասնապատիկ* վճարումներին, ապա բազմիցս նշվել է, որ տարիներ շարունակ ընկերությանն արտոնվել է խոշոր տուգանքներ չվճարել, որպեսզի այդ գումարներով կարողանա քաղաքի մթնոլորտ արտանետվող թունավոր նյութերի քանակը համապատասխանեցնի ընդունված նորմաներին և մաքուր պղինձ ու հարակից մետաղներ ստանա: Ընկերությունը օգտվում է այդ արտոնությունից՝ չի վճարում, սակայն հոգ չի տանում կատարել ստանձնած պարտավորությունները: 2006 թ. ընկերությունը պղնձածուլարանից մթնոլորտ արտանետած թունավոր նյութերի համար 128,1 մլն դրամ բնապահպանական վճար է մուծել, որից 127,9-ը՝ ծծմբային անհիդրիդի (26,7 հազար տոննա), իսկ 0,197-ը՝ 104,7 տոննա տարբեր ծանր մետաղների աերոզուլեր պարունակող անօրգանական փոշու դիմաց (Շվեդիայում նշված քանակի ծծմբային անհիդրիդ օդ արտանետելու համար անհրաժեշտ կլիներ վճարել 54,5 մլն ԱՄՆ դոլար, հասկանալի է, որ եռապատիկ, հնգապատիկ կամ տասնապատիկ հավելյալ վճարների դեպքում անհամեմատ ավելի մեծ թիվ կստացվի): Այդ նույն տարում մթնոլորտ է արտանետվել 12 տոննա մկնդեղ, 41 տոննա ցինկ, 2,9 տոննա կապար, 2,9 տոննա պղինձ: Եվ ի՞նչ է պարզվում. ընկերությունն այդ նյութերը մթնոլորտ արտանետելու համար բնավճար չի վճարել և չի վճարում: Այսպիսի արտոնություններն են, որ «գթասիրտ» օտարների և «հայրենասեր» հայերի մեջ Հայաստանում (թույլ իշխանություն և ոչ խիստ

օրենքներ և դրանք շրջանցելու պայմաններ ունեցող երկրում) ներդրումներ կատարելու բուռն ձգտումներ են առաջացնում: Հազարավոր տարիներ առաջ շումերական առասպելներում Հայաստանը համարվում էր դրախտ, 20-րդ դարի վերջերին թուրքական մամուլը Հայաստանը որակեց անորակ ապրանքների իրացման դրախտ, այժմ էլ Հայաստանը, այսպես կոչված, ներդրողների համար դառնում է գերշահույթ ստանալու դրախտ:

Ընկերության տնօրենն անհեռանկար է համարում պղնձածուլարանի գոյությունը. *«Եթե չկարողանանք երկարաժամկետ լուծումներ □տնել, բացառված չէ, որ ստիպված լինենք 2009 թ. հունվարի 1-ից դադարեցնել պղնձածուլարանի □ործունեությունը»:* Պարզվում է՝ ի սկզբանե պղնձածուլարանի վերակառուցումը և էկոլոգիական նորմերին հասցնելու խոստումներն արվել են միայն նրա համար, որ կարողանան նախնադարյան եղանակով պղնձածուլարան աշխատացնել և խոշոր տուգանքներ չվճարել, ինչպես նաև՝ տիրանալ Թեղուտի հանքավայրին: Նա նաև ասում է. *«Այն պահին, երբ Հայաստանում կունենանք մի քանի տասնյակ հազար տոննա պղնձի արտադրություն, այդ պահին □ուցե արդարացված լինի նոր, հզոր պղնձածուլարանի կառուցումը»:* Ի՞նչ է, նույնիսկ սև պղնձի արտադրածավալների մի քանի անգամ հզորացման դեպքում անգամ ընկերության համար դեռևս հստակեցված չէ՞ ժամանակակից պղնձածուլարան կառուցելու հարցը: Եթե այդպես է, ապա մինչ գործարանի շահագործումն ընկերությունն ինչու՞ էր խոստանում գործարանը հագեցնել ժամանակակից տեխնոլոգիաներով, դրա հետ մեկտեղ արտադրել մաքուր պղինձ, կորզել հարակից մետաղները (ոսկի, արծաթ, ռենիում և այլն), հիմնել պղնձալարերի և պղնձե իրերի արտադրություններ:

Տնօրենն իրավական, տնտեսական ի՞նչ հիմնավորումներ ունի, որ ասում է, թե *«հանդաված եմ, որ այս ընթացքում լայնածավալ աշխատանքներ ենք սկսելու Թեղուտում»*, չէ՞ որ այդ խնդրում առկա են բազում ապօրինություններ:

«Լեռնահանքային արդյունաբերության մեջ էկոլոգիան ի՞նչ տեղ ունի» հարցին Գագիկ Արզումանյանը պատասխանում է. *«Եթե երկիրը □տնվում է ծ□նաժամային վիճակում, անհամեմատ ավելի մեծ է □այթակղությունը՝ անտեսել բնապահպանական խնդիրները և զարկ տալ տնտեսությանը: Այսինքն՝ դա օբյեկտիվորեն հասկանալի է, բայց ես ուրախ եմ նաև, որ □նալով ավելի մեծ ուշադրության են արժանանում բնապահպանական խնդիրները: Ուղղակի մեր միակ խնդիրն այն է, որ դա լինի օբյեկտիվ տեղեկատվության վրա հիմնված»:*

Անընդունելի է *բնապահպանական խնդիրներն անտեսել և զարկ տալ տնտեսությանը:* Հայտնի է, որ էկոլոգիական չափանիշների անտեսումը բերում է այնպիսի ավերածությունների, որոնց հետևանքների վերացման համար կպահանջվեն հսկայածավալ ներդրումներ, իսկ հաճախ էլ դրանք անհնար է շտկել: Իր ասածը թերևս մեղմելու համար նա հավելում է, որ ուրախ է բնապահպանական խնդիրներն ուշադրության արժանանալու համար: Սակայն...

Թեղուտ հանքավայրի նախագծում տեղ գտած խախտումների, կեղծիքների և այլ թերությունների առնչությամբ Հայաստանի կանաչների միությունը 2007 թ. փետրվարի 9-ին Գրողների միության դահլիճում մամուլի ասուլիս կազմակերպեց: Այդտեղ նաև ասվեց, որ բնապահպանության նախարարությունն այդ նախագծին տվել է դրական եզրակացություն: Միջոցառումից անմիջապես հետո ընկերությունը տարածեց հետևյալ հայտարարությունը. *«Հայաստանի Գրողների միության դահլիճում ս/թ փետրվարի 9-ին կայացած՝ «Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերաբերյալ քննարկումների ընթացքում, ինչպես հայտնի դարձավ մամուլի հրապարակումներից, հնչել են իսկությանը չհամապատասխանող ելույթներ: Այս կապակցությամբ «ԷյՍԻՓի» ՓԲԸ բոլոր շահագրգիռ անձանց, այդ*

թվում նաև հիշյալ քննարկումների մասնակիցներին և կազմակերպիչներին, հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների, ինչպես նաև՝ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին հրավիրում է երկխոսության ս/թ փետրվարի 16-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի Գրողների միության դահլիճում» («ՀՀ», 14.02.2007 թ.):

Նշված օրը Գրողների տանը պրն Արզումանյանն ասաց, որ ոչ թե երկխոսություն, այլ մամուլի ասուլիս է լինելու: Ներկաներից մի քանիսի այն պնդմանը, որ հրավիրված ենք քննարկման, և յուրաքանչյուր մեկնաբանությունից հետո Կանաչների ներկայացուցիչը պետք է իր կարծիքը հայտնի, նա պատասխանեց, թե ամենևին անհրաժեշտ չէ լսել Կանաչներին, որովհետև նրանք մեկ շաբաթ առաջ իրենց ասելիքն արդեն ասել են, իսկ «եթե չեք ուզում ասուլիսին ներկա լինել, կարող եք դահլիճից հեռանալ, «դուռը բաց է»»: Նյութը ներկայացնելիս տնօրենը խոսում էր այնպիսի հաղթական կեցվածքով, որ կարծես հերքում է մեր ասածը, սակայն ընկերությանն ուղղված մեր մեղադրանքներից և ոչ մեկը չկարողացավ ժխտել: Կարծում եմ՝ այդ շուրջ ինչ-որ նպատակով էր կազմակերպված, որն ամբողջովին տեսագրեցին իրենց իսկ հրավիրած օպերատորները:

Հարցազրույցում Գ. Արզումանյանն ասում է. «Ես մեծ ցավ եմ ապրում, որ շատ հաճախ տեղեկատվություն է տրվում, օրինակ, Թեղուտի հանքավայրի շահափորձման ծրագրի վերաբերյալ, որը բացարձակապես որևէ առնչություն չունի իրականության հետ»:

Նրա ասած իրականության հետ որևէ առնչություն չունեցող նյութերից է նաև «Ձոհասեղանին են դրված Լոռվա մարզի Թեղուտ և Շնող գյուղերն իրենց հարակից անտառներով» վերլուծականը, որը մինչև հրապարակելն ուղարկել ենք «Վալլեքս գրուպ» և ստացել ընկերության պաշտոնական պատասխանը՝ վերնագրված «Հայաստանի Կանաչների միության դիտողությունների եվ առաջարկությունների պատասխանները Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի մշակման նախագծի վերաբերյալ», որից մեջբերենք քաղվածքներ.

Հարցեր, դիտողություններ, առաջարկներ	«Արմենիան Քափըր Փրոգրամ» (ԷյՍԻՓԻ) ՓԲԸ պատասխանները
<p>1. Հանքարդյունահանումը, էկոլոգիական վնասներ հասցնելուց բացի, սպառնում է նաև Թեղուտ և Շնող գյուղերի բնակիչների՝ իրենց բնօրրանում ապրելուն, որովհետև նրանց խմելու և ոռոգման ջրի միակ աղբյուրը Շնող գետն է, դրա վտակներն էլ սնվում են հանքահանման համար նախատեսված տարածքներից: Եվ այդ գետը կանգնած է թունավորվելու վտանգի առաջ: Իսկ դրա հետևանքը լինելու է այն, որ մարդիկ թողնելու են իրենց տներն ու հեռանան այդ գյուղերից:</p>	<p>Արտադրական նպատակներով ջրերը վերցվելու են Դեբեդ գետից, որը չի կարող ազդել Շնող գետի դեբիտի վրա: Ձեռնարկությունն աշխատելու է լրիվ շրջանառու համակարգով, ինչը բացառում է արտադրական կեղտաջրերի արտահոսքը բաց ջրային օբյեկտներ: Կոմբինատի շահագործման ազդեցությունը Շնող գետի ջրերի վրա կսահմանափակվի գետից 3,7լ/վրկ չափով խմելու ջուր վերցնելով (Շնող գետի միջին տարեկան ծախսը, ինչպես նշված է նախագծի 1.12 աղյուսակում, կազմում է 436,2լ/վրկ): Պետք է գիտակցել, որ Շնող գետի ջրերը, թափվելով Դեբեդ գետը, օգտագործվում են հարևան երկրների (Ադրբեջան, Վրաստան) կարիքների համար: Տնտեսակենցաղային կեղտաջրերը 1.8 լ/վրկ ընդհանուր ծավալով կենսաբանական մաքրումից հետո կթափվեն Շնող գետ՝ Շնող գյուղից ներքև: Ինչ վերաբերում է բնակչության վիճակին, այսօր տարածաշրջանում գործազուրկների թիվը հասնում է 1873-ի: 2001 թվականին նախորդող տարիների ընթացքում բնակչու-</p>

	<p>թյան միգրացիան կազմել է Շնող գյուղից 13,2 տոկոս, Թեղուտ գյուղից -53 տոկոս, (ՇՄԱԳ - աղ. 3.2.4, էջ 90): Առաջարկվող նախագծի իրականացման դեպքում շինարարական աշխատանքների ժամանակ, որոնց տևողությունը 3,5 տարի է, կպահանջվի 1700 աշխատող, իսկ շահագործման ընթացքում՝ 1430 աշխատող: Բացի այդ, կոմբինատին սպասարկելու համար (սնունդ, կենցաղսպասարկում, առևտրական օբյեկտներ, ծառայություններ) լրացուցիչ աշխատատեղեր կստեղծվեն Շնող և Թեղուտ գյուղերում:</p>
<p>2. Հանքարդյունահանման ավարտից հետո ինչո՞վ են զբաղվելու տեղացի աշխատողները:</p>	<p>Հաշվի առնելով հանքավայրի շահագործման ժամանակը՝ տեղացի բնակչությունը 65-70 տարի աշխատանքով ապահովված կլինի:</p>
<p>3. Մեծ թեքության վրա և միլիոնավոր տոննա պոչանքի ճնշման պայմաններում պատվարի և կավի շերտի կայունության ապահովման երաշխիքները հիմնագուրկ և ծիծաղելի են:</p>	<p>Լեռնամետալուրգիայի ինստիտուտի հիդրոտեխնիկ-ճարտարագետները նախագծել են թե՛ Հայաստանի, և թե՛ նախկին ԽՍՀՄ մի շարք մեծածավալ պոչամբարներ, որոնք հաջողությամբ շահագործվում են մինչև օրս: Նախագիծը կատարված է միայն անհրաժեշտ հաշվարկների և գործող նորմերի հիման վրա:</p>
<p>4. Կարելի՞ է, արդյոք, հետագայում պոչամբարի տարածքում աճած խոտն օգտագործել որպես անասնակեր:</p>	<p>Պոչամբարի հետագա ռեկուլտիվացիայից հետո կկատարվեն համապատասխան հետազոտություններ:</p>
<p>5. Պոչամբարը գտնվում է բնակավայրերից բարձրադիր վայրում, ջրագոյացման-ջրամատակարարման հանգույցում, անտառածածկ-բարեբեր վայրում, բարձր թեքության վրա և գետի հունում: Թվարկվածներից յուրաքանչյուրը բացառում է այդ վայրում պոչամբար կառուցելը:</p>	<p>Պակասաջուր գետի ջրերը ջրհեռ կառույցներով (պատվար, ջրատար) տեղափոխվում են մինչև Շնող գետը: Ջրատարը ներառում է նաև Պակասաջուր գետի վտակների ջրերը, այնպես որ պոչամբարի առկայությունը չի խանգարում ջրագոյացման և ջրամատակարարման հարցերին: Ընդհանրապես, պոչամբարները լեռնային վայրերում տեղավորվում են գետերի հուններում:</p>
<p>6. Հանքավայրի շահագործման ծրագրի իրականացումը կհանգեցնի պոչամբարի պարունակությունից ստորջրյա ջրերի աղտոտման:</p>	<p>Պոչամբարը կունենա երկու պատնեշ, որոնց միջև ընկած տարածքը կծառայի ներծծվող ջրերի հավաքման համար: Այդ ծավալն ամբողջությամբ լինելու է մեկուսացված կավի շերտով, ինչը կբացառի պոչամբարից ներծծված ջրերի արտահոսքը շրջակա միջավայր, իսկ կուտակված ջրերը կվերադառնան շրջանառու համակարգ: Բացի այդ, կկատարվի պարբերական մոնիտորինգ ջրի աղտոտումը բացառելու նպատակով:</p>
<p>7. Պոչամբարի կավային շերտը մշտապես մնալու է կայուն, թե՞ ժամանակի ընթացքում խաթարվելու է: Ինչպիսի՞ն է լինելու դրա ջրամեկուսացման ունակությունը: Արդյո՞ք վթարի դեպքում մեծ արագությամբ</p>	<p>Պոչամբարը պոչանքներով նախագծով նախատեսված տեխնոլոգիայով լցվում է, պարզեցված ջրերը կոլեկտորով հեռացվում և օգտագործվում են շրջանառու ջրամատակարարման համակարգում: Պոչամբարի պատվարը կամաց-կամաց գետի հունով վերև է բարձրանում, իսկ ներքևի մասում պատվարը ջրազրկվում և ամրանում է: Պատվարի</p>

արտահոսող խյուսը չի պատռի պատճենը:	ամրությունը և անվտանգությունը հաշվարկվում են. պոչամբարում խյուսը հանդարտ նստեցվում է, և այդտեղ մեծ արագությունները բացառվում են: Ինչ վերաբերում է կավային շերտի ջրամեկուսացման աստիճանին, ապա դրա անցողականությունը գործնականում մոտ է 0-ին:
8. Հանքը փակելուց հետո Պակասաջուր գետի հունը կքայքայվի, և այն կվերադառնա իր իսկական հուն՝ ճեղքելով պոչամբարի մարմինը, ինչն աղետալի կլինի Դեբեդի հովտի համար:	Հանքը փակելուց հետո պոչամբարը մնում է իր տեղում, շահագործվում են ջրհեռ կառուցվածքները: Պոչամբարը շահագործման ընթացքում մաս-մաս (սկսած ներքևից) ծածկվում է հողի շերտով, և խոտ է ցանվում (կատարվում է ռեկուլտիվացիա), և դա շարունակվում է պոչամբարի լրիվ մակերեսով:
9. Հանքահանման ավարտից հետո պոչամբարի և լցակույտերի անվտանգությունը ապահովելու համար ի՞նչ ժամանակահատվածում և ի՞նչ քանակությամբ ֆինանսներ են պետք:	Պոչամբարի և լցակույտերի շահագործման 65-70 տարիներից հետո միայն կդիտարկվեն այս հարցերը:
10. Նախագծում և բնապահպանական բաժնում բերված 260 տեսակի միջատները վերաբերում են Տավուշի մարզում Դիլիջանի տարածքում գտնվող Թեղուտ գյուղի մոտակայքի անտառին, այլ ոչ թե Լոռվա Թեղուտի տարածքին: Կատարվել է կեղծիք:	Տավուշի մարզի Դիլիջանի տարածքի անտառները և Լոռվա մարզի Թեղուտի տարածքի անտառները միմյանց շարունակություն են և, բուսաբանների հավաստմամբ, պատկանում են նույն ֆլորիստիկ շրջանին:
11. Ոչնչացվելիք ձկնաշխարհին հասցվելիք վնասը գնահատվել է 130 կգ և ընդամենը 175 հազ. դրամ, որը կենդանական աշխարհին հասցվող ամբողջ վնասն է:	Ձկների քանակը հաշվարկված է կերային բազայի հիման վրա, որը ՇՄՈՂ գետի վերին հոսանքի և նրա վտակների համար որոշվել է փաստացի տվյալների հիման վրա (ՇՄԱԳ - էջ 84, աղ. 3.1.-25):

Ինչպես տեսնում ենք, հարցերին տրված են շրջանցող, խնդրից շեղող, իսկ որոշ դեպքերում էլ՝ անհեթեթ պատասխաններ:

Ոչ միայն այս հարցազրույցում, այլ տեղեկատվական այլ միջոցներով տարածված նյութերում ընկերությունը ներկայանում է որպես Հայաստանի տնտեսության զարգացման և բնության պահպանության ջատագով:

Դժբախտաբար, ընկերության տարածած հրապարակումներն ու հայտարարությունները հիմնականում մնում են անպատասխան, այն պարզ պատճառով, որ ընկերության տեսակետը, կարելի է ասել նաև՝ շահերը պաշտպանում են միակողմանի քարոզչությամբ լցված «պատասխանատու» լրատվամիջոցները:

Բազում քննարկումներից, բանավեճերից և առկա փաստաթղթերից շատ պարզ պատկեր է կերտվում: Ընկերությանն ուղղակի արտոնվել է Թեղուտի հանքավայրին վերաբերող չհիմնավորված, թերի ու կեղծ տվյալներ պարունակող նախագիծ կազմել,

նոսնահարել քաղաքի բնակչության կյանքն ու ապագան՝ նախնադարյան եղանակով շահագործել Ալավերդու պղնձաձուլարանը, բնապահպանական վճարները հիմնականում չնուծել, չկատարել պղնձաձուլարանի վերակառուցման և մյուս պարտավորությունները, հետագայում արտահանել պղնձի խտանյութը (կոնցենտրատը): Այսինքն՝ Հայաստանը դարձնել հունք արտահանող երկիր, այն էլ վատթարագույն պայմաններով... Ընդհանրապես, Թեղուտի հանքավայրի և Ալավերդու պղնձաձուլարանի խնդիրներին որոշ չափով խորամուխ լինողները, թերևս, համոզվեն, որ դրանցում, հավանաբար, առկա է կոռուպցիա, այն էլ՝ ամենաբարձր մակարդակով:

«Հետք», www.hetq.am, 19.11.2007թ.

ԹԵՂՈՒՏԻ ԽՆԴԻՐԸ ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆԻ ՋԱՆՔԵՐՈՎ «ՋՐՎԵՑ»

Գաժիկ Աբարյան - Երբ մամուլում հաղորդաբություն հայտնվեց, որ Աժ-ում լսումներ են լինելու Թեղուտի թեմայով, հատկապես հանքավայրի շահագործումը սկսելու մասին կառավարության որոշումից հետո, տպավորություն ստեղծվեց, թե հայրենի ազդեցությունները, թեկուզ ուշացումով, բայց ուզում են անձամբ լսել բնապահպանների առարկությունները՝ հարկ եղած դեպքում ինչ-ինչ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Միջոցառումն, ըստ էության, կարելի է համարել չկայացած, այդ մասին մեր հետ իր տպավորությունները կիսեց Հայաստանի Կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը:

- Ի՞նչ պետք է ասեիք մեր պատգամավորներին, որն այդպես էլ չասվեց:

- Բնապահպանության նախարարությունը «Վալեքս» ընկերությանը տվել է արտոնագիր Թեղուտի հանքավայրի ուսումնասիրության համար: Ասեմ, որ մի մեծ թերություն կա արտոնագրի հարցում: Բանն այն է, որ և արտոնագիր տվողն է բնապահպանության նախարարությունը, և այդ ուսումնասիրության հաստատողը, և այդ ուսումնասիրության հիման վրա կազմած նախագիծն ընդունողը, և փորձաքննություն անցկացնողը, և եզրակացություն տվողը: Այս ընթացակարգում, Թեղուտի հանքավայրի նախագծի առումով, բնապահպանության նախարարությունը օրենսդրական և պարտավորությունների կատարման բազմաթիվ խախտումներ է կատարել: Նախ պետք է նախագիծն ընդհանրապես չընդունվեր, քանի որ նախագիծը լրջագույն թերություններ ունի, և երկրորդ՝ փորձաքննությունն անցկացնելին օրենսդրորեն սահմանված կարգով: Այսինքն՝ վերլուծելին այսօրվա և հեռահար ազդեցությունները, օգուտ-վնասները և այլն: Ըստ Թեղուտի նախագծի կոչնչանան բուսատեսակներ, վայրի կենդանիներ, կխախտվեն-կվերանան ջրագոյացման ու ջրաբաշխման բնական համակարգեր և ընդհանրապես կոչնչանա բնական մի հզոր համակարգ: Նախագիծը կազմված է օրենքների խախտումներով: Այն պետք է

պարունակի ծրագիրն ամբողջությամբ՝ այնինչ ընկերությունը ներկայացրել է առաջին ութ տարում բուսականությանը, հողին, ջրին և այլ համակարգերին հասցվելիք վնասի չափերը, իսկ մնացած քսան տարիների համար չեն ներկայացրել՝ ասելով, երբ հանքավայրը կշահագործվի, դրանից հետո միայն ընկերությունը կկազմի ու կներկայացնի նախագիծն ամբողջությամբ, ինչն օրենքի կոպիտ խախտում է: ... Նախագծում գրել են, որ հատվելիք ամենահաստաբուն կաղնին 28 սմ տրամագիծ ունի, բայց անձամբ Արա Բաբլոյանի հետ եղանք թեղուտի հանքավայրում ու չափեցինք 3 մետր 57 սմ պարագիծ ունեցող կաղնի, այսինքն՝ կոճղի տրամագիծը կազմում էր 1 մետր 12 սմ: Բազում են այդպիսի թերհաշվարկները նաև հողի, ջրի, վայրի կենդանիների և այլն:

- Կառավարությունը տեղա՞յ է այս ամենին:

- Կառավարությունն իր որոշումը կայացրել է հիմնվելով նախագծում ներկայացված, հիմնականում, կեղծ ու թերի տեղեկությունների վրա: Այսինքն՝ կան նրանք կառավարությանը խաբել են՝ իրական պատկերը չեն ներկայացրել, կան կառավարությունում կան մարդիկ, ովքեր փորձում են այս հանցավոր ծրագիրն իրականացնել:

- Իսկ ինչքանո՞վ է վստահելի և բարեխիղճ հանքարդյունաբերող ձեռնարկությունը, որին տրվել է արտոնագիրը:

- 1995-96թթ. «Վալեքս գրուպը» գնեց Ալավերդու պղնձածուլական գործարանը, բայց ներդրումային իր պարտավորությունները չկատարելով քաղաքը հասցրեց ողբերգական վիճակի: ... Աչքի առաջ բնակչությունը ոչնչանում է, բայց նույն ձեռնարկությանը հանքավայրեր են հանձնվում, 17 Հայաստանի Հանրապետությունում, 40-ը՝ Արցախում:

- Ո՞րն է այս ողբերգության պատճառը:

- Այն, որ գործարանն աշխատում է առանց մաքրման կայանի ու բոլոր վնասակար նյութերը արտանետվում են մթնոլորտ: Ըստ ստանձնած պարտավորությունների՝ ընկերությունը պետք է կառուցեր ժամանակակից գործարան, որսար և օգտահաներ թունավոր արտանետումները, ստանար մաքուր պղինձ և հարակից քանկարժեք ու հազվագյուտ մետաղները: Սակայն գործարանն աշխատեցնում են նախնադարյան, բարբարոս եղանակով: Եվ ամբողջ թունավոր արտանետումները, առանց որևէ որսման, մղվում են մթնոլորտ ...

- Խորհրդարանական լսումների ժամանակ կարողացա՞ք այս բոլորը հասցնել պատգամավորներին:

- Լսումներ, որպես այդպիսին, չեղան: Եղել է միակողմանի քարոզչություն: Ձեկույցներ են ունեցել բնապահպանության նախարարը, նախկին նախարար Վ. Այվազյանը, Արա Բաբլոյանը, «Վալեքս գրուպի» գործադիր տնօրեն Գագիկ Արզումանյանը և այլն: Հակառակ որևէ կարծիք չներկայացվեց: Ձեկույցման փոխարեն մի քանիսին՝ հինգ րոպեանոց ելույթի հնարավորություն տվեցին և այն էլ վերջում, երբ դահլիճում 2-3 պատգամավոր էին մնացել:

- Ո՞վ էր լսումների կազմակերպիչը:

- Արա Բաբլոյանի հետ երբ գնացինք Թեղուտ, դրանից հետո նա առաջարկեց կազմակերպել լսումներ, ես համաձայնեցի: Բայց լսումներից երեք օր առաջ նա ասաց, որ հասարակական կազմակերպությունները զեկույց ներկայացնելու

հնարավորություն չեն ունենա: Սկզբում շատ ուրախ էի՝ հավատալով նրա բարի համբավին, բայց փաստորեն նրա ջանքերով ստեղծվեց մի անմաքուր փաստաթուղթ մի անմաքուր գործի կցելու համար:

«Ժամանակ երևան», 27.11.2007թ.

**ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՅԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԲԱՑԱՌԻԿ ԳԵՐԱԿԱ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅ ԶԷ, ԱՅԼԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է**

2007թ. նոյեմբերի 1-ին ՀՀ կառավարությունը «Թեղուտի հանքավայրի ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասեր տրամադրելու մասին», ինչպես նաև «Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» որոշումներ (N1278-Ն, N1279-Ն) է կայացրել:

Համաձայն N1278-Ն որոշման, 1490,801 հեկտար (1207,55-ը՝ անտառային) հողերը փոխադրվել են արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակություն ունեցող հողերի կատեգորիայի, իսկ N1279-Ն որոշումով՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող գյուղատնտեսական նշանակության 81,483 հա հողերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ:

ՀՀ կառավարությունը փոխելով 1572,284 հեկտար հողերի կարգավիճակը, արտոնել է «Վալլեքս գրուպ»-ի մեջ ընդգրկված «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը՝ շահագործել Թեղուտի հանքավայրը:

Փորձենք պարզել, թե կառավարության նշված որոշումները՝ գիտական, իրավական, տնտեսական ի՞նչ հիմքեր ունեն, և թե արդյո՞ք Թեղուտի հանքավայրի շահագործումն իրոք հանրային շահ է հետապնդում:

Այդ որոշումների համար հիմք են հանդիսացել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կազմած՝ Թեղուտի հանքավայրի Նախագիծը («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» և «Աշխատանքային նախագիծ», հետայսու՝ ՇՄԱԳ և Նախագիծ, համապատասխանաբար), և զլխավորապես այդ նախագիծն ինչպես բնապահպանության նախարարության կողմից տրված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական եզրակացությունը:

Մինչ այդ փաստաթղթերի քննարկումը, անհրաժեշտ ենք համարում, նախ անդրադառնալ հանքարդյունաբերական թափոնների ոլորտում վարվող պետական քաղաքականության այն խնդրին, որն իրոք հայ ժողովրդի ներկայի ու ապագայի համար կանխորոշիչ նշանակություն ունի:

Հանքարդյունաբերական թափոններ

«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածը սահմանում է. «Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի սահմանված կարգով տեղադրման (պահման) համար վճարի դրույքաչափերն են՝

- առաջին դասի վտանգավորության թափոններ - 48000 դրամ,
- երկրորդ դասի վտանգավորության թափոններ - 24000 դրամ,
- երրորդ դասի վտանգավորության թափոններ - 4800 դրամ,
- չորրորդ դասի վտանգավորության թափոններ - 1500 դրամ,
- ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող և հողածածկույթի քանդման ու շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների) - 600 դրամ,
- լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոններ - 0 դրամ»:

Նախ նշենք, որ այս սահմանումը նաև ծածկագիր է, այն իմաստով, որ «լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոններ» ասելով՝ պետք է հասկացվի հանքարդյունաբերության հետևանքով առաջացող՝ մակաբացման («դատարկ») ապարներ և պոչանք: Հայտնի է, որ պոչանքը և մակաբացման ապարները պարունակում են բուսակենդանական աշխարհի համար խիստ վտանգավոր նյութեր՝ ծանր մետաղներ, որոնք ունեն սաղմնաթունավոր, մուտագեն, իմունային համակարգը վնասող հատկություն, առաջացնում են ժառանգական խաթարումներ և այլաբնույթ հիվանդություններ: Այդ թափոնները՝ մակաբացման ապարները և պոչանքը, միմյանցից հիմնականում տարբերվում են նրանով, որ պոչանքը փոշիացված-ակտիվացված է, պարունակում է քիմիական լրացուցիչ միացություններ և հեշտությամբ է տարածվում:

Ի՞նչ հիմնավորմամբ է հանքավայրերը շահագործողներին արտոնվում իրենց արտադրած թափոնները (այն էլ խիստ վտանգավոր նյութեր պարունակող, այսինքն՝ թունավոր թափոնները) շրջակա միջավայրում տեղադրելու դիմաց չվճարել, երբ նշված արտոնությունն այն գլխավոր գործոնն է, որ հանքերին տեր դարձածների համար շահութաբեր է դարձնում անգամ մետաղների շատ ցածր պարունակությամբ հանքավայրերի շահագործումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է. «Օրենքի ործողությունը չի տարածվում հանքարդյունահանող կազմակերպությունների մակաբացման շերտի ապարների վրա: Սույն մասով նախատեսված թափոնների ործածության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ այլ օրենքներով և իրավական ակտերով»:

Սակայն այս դրույթը սովորական խաբկանք է: Իրականում մակաբացման շերտի ապարների գործածության հետ կապված հարաբերությունները որևէ օրենքով չեն կարգավորվում: Ավելին՝ նաև որևէ օրենքով չեն կարգավորվում հանքարդյունաբերական ամենավտանգավոր թափոնները՝ «պոչանքները»: Այսինքն՝ ընկերությունների, իմա՝ առանձին անհատների շահերին ծառայող այդ սահմանումը, հավանաբար, արված է միայն նրա համար, որ մարդկանց ուշադրությունը խնդրից շեղվի: Այս և խնդրի հետ կապված մյուս անտրամաբանական մոտեցումներից կարելի է եզրակացնել, որ հանքարդյունաբերական թափոնները հարկման դաշտից հեռացնել-հանելը կատարվում է մեր երկրի օրենսդիր և գործադիր մարմինների հետևողական ու համերաշխ գործունեությամբ:

Երկրորդ, խորհրդային իշխանության օրոք հանքարդյունաբերական թափոններ պահեստավորելու համար վճարներ սահմանված չէին, բայց դա հենց այդպես էլ պետք է լիներ, քանզի պետությանն էին պատկանում բնական պաշարներն ու դրանց շահագործման մենաշնորհը, և պետությունն էլ լուծում էր նշված թափոնները մեկուսացնելու, օգտահանելու և մյուս խնդիրները:

Փոխվել է հասարակարգը, փոխվել են սեփականության ձևերը, նաև՝ իրերի դրությունը: ՀՀ պետությունը գրկվել է, կարելի է ասել՝ ինքնակամ հրաժարվել է իր իսկ բնական հարստությունները շահագործելու իրավունքից:

ՀՀ իշխանավորները դրամաշնորհային, վարկային, մարդասիրական օգնության և այլ կարգի փաստաթղթերի ստորագրման-վավերացման արդյունքում, օրինակ, հանքարդյունաբերության ոլորտում տիրոջ կարգավիճակը կորցրել են և կարելի է ասել՝ ձեռք են բերել համարյա դիտորդի կարգավիճակ: Սակայն Միջազգային հեղինակավոր կազմակերպություններից մեդալներ են ստանում և արժանանում նրանց գովեստին:

Այժմ ՀՀ կառավարությունը ոչ միայն նոր հանքավայրեր չի շահագործում, այլև, հիմնականում, օտարերկրյա ընկերություններին է հանձնում շահագործվող հանքավայրերը: Օրինակ, Քաջարանի պղնձամոլիբդենային, Սոթքի ոսկու և այլ հանքավայրերը:

Հանքարդյունաբերությունը դարձել է ընկերությունների և անհատների մենաշնորհ, սակայն թափոնների կառավարման խնդրում չի փոխվել նախկին կարգը: Թափոնների երկարաժամկետ կառավարման խնդիրն ինչպես կար, այնպես էլ մնացել է պետության վրա: Իսկ պետությունն ինչպե՞ս կկարողանա իրականացնել հսկայածավալ ֆինանսական, տեխնիկական միջոցներ և մարդուժ պահանջող այդ խնդիրը, երբ հանքարդյունաբերությունից առաջացած շահույթին հիմնականում տիրանում են շահագործողները: Նույն պատկերն է նաև տնտեսության մյուս ճյուղերում: Ասվածից կարելի է անել այն հետևությունը, որ նշված օրենքի՝ հանքարդյունաբերական թափոններին վերաբերող սահմանումը հիմնավորված չէ, հակասում է Հայաստանի Հանրապետության շահերին, հետևաբար, փոխվելու հրատապ անհրաժեշտություն ունի:

Բնական պաշարների նկատմամբ իր անհեռատեսությամբ ՀՀ օրենսդիրներից ետ չի մնում նաև մեր Երկրի կառավարությունը: ՀՀ կառավարությունը հանքարդյունաբերությամբ զբաղվողներից պահանջվող բնօգտագործման վճարները նվազեցրել է: Եթե 1993 թվականին այդ վճարը, օրինակ, պղնձամոլիբդենային հանքավայրերի համար կազմում էր իրացված գնի 6 տոկոսը, ապա այժմ՝ 1,3 տոկոսը, այսինքն՝ 4,6 անգամ պակաս: Դժբախտաբար, ՀՀ իշխանությունները չեն ցանկանում ընդօրինակել աշխարհով մեկ, իհարկե որոշ բացառություններով, ընդունված այն կարգը, երբ պետություններն առանձնակի հոգատարություն են ցուցաբերում սեփական բնական պաշարները խնայողաբար և արդյունավետ օգտագործելու և պահպանելու խնդիրներում: Օրինակ, Չիլիում հանքահանմամբ զբաղվողները պետությանը մոտ 2,5 անգամ ավելի շատ շահութահարկ են վճարում, քան տնտեսության այլ ճյուղերում:

Հիմնավորված չէ նաև մակաբացման ապարները ոչ վտանգավոր, իսկ պոչանքը միայն չորրորդ դասի վտանգավորության թափոն համարելը (Նախագծի 39-րդ էջում կարդում ենք. «Պոչերը հրդեհավտանձ չեն և պատկանում են վտանգավորության 4 դասին»): Առայժմ մեզ չի հաջողվել ճշտել, թե այդ ո՞ր օրենքով կան ենթաօրենսդրական ակտով է սահմանված պոչանքների՝ վտանգավորության չորրորդ դասին պատկանելը): Նշենք, որ թափոնների ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը հանդիսանում է ՀՀ բնապահպանության նախարարությունը: Այդ նախարարության իրավասությունն է՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի սահմանումը (Թափոնների մասին ՀՀ օրենք, հոդված 8):

Ակնառու է, որ հանքարդյունաբերական թափոններն իրենց վտանգավորության աստիճանին համապատասխան չդասելը և դրանք համապատասխան վայրերում լցնելու դիմաց բնապահպանական վճարներ չպահանջելը, փաստորեն, նշանակում է հափշտակել պետության-ազգային ունեցվածքը:

Օրենսդրորեն սահմանված այդ կարգը ճանապարհ է հարթում օգտակար հանածոների շատ ցածր պարունակությամբ հանքավայրերի շահագործման համար,

ինչն ակնհայտորեն կբերի փոխկապակցված աղետալի ու կործանարար հետևյալ երևույթների՝

- օգտակար հանածոների պաշարների արագ սպառման,
- բնական համակարգերի լայնածավալ ավերման, դրանց կայուն աղտոտման և ոչնչացման,
- ջրագոյացման համակարգերի ավերման և վերացման, ինչպես և ջրերի աղտոտման և դրանց որակական հատկանիշների վատացման,
- վարելահողերի, անտառների, այգիների, արոտավայրերի կորստի, ինչպես նաև պահպանված տարածքների աղտոտման և անօգտագործելի դառնալուն,
- ավանդական երկրագործության գոյություն ունեցող մշտակայուն աշխատատեղերի նվազեցման և վերացման, գյուղատնտեսական մթերքի որակական հատկանիշների վատացման և արտադրական ծավալների նվազեցման,
- հողի բերրիության անկման,
- աղքատության խորացման և ծավալման,
- կենդանիների, այդ թվում՝ մարդկանց հիվանդացությունների աճի,
- բնակչության արտագաղթի,
- պետության հիմքերի թուլացման ...

Կարծում ենք, մեր Երկրի շահերից չի բխում նաև բնապահպանական վճարներից մասնահանումներ կատարելու կարգը: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը սահմանում է. *«Արմենիան Քափրը Փրոփրամ, Ջանփգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, Ափարակի պղնձամոլիբդենային կոմբինատ, Դինո փոլո մայնին քամփնի, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ, Արարատցեմենտ, Միկա-ցեմենտ, Հրազդան ՋԷԿ, Երևան ՋԷԿ, Գաջեփործ, Գաջ ՓԲ ընկերությունների, Արմենիան մոլիբդեն փրոդաքշն ՍՊԸ, Մաքուր երկաթ, Ասկեփրուպ և Չարենցավանի Ձուլակենտրոն ԲԲ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարներից մասնահանումներ կատարվում և առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների փորձուներությունը թողնում է վնասակար ազդեցություն»:*

Փաստորեն, ընկերություններին արտոնվում է ոչ միայն տրիլիոնավոր դրամի հարկեր չվճարել, այլև նրանց է հանձնվում ՀՀ քաղաքացիների վրա ազդեցության որոշ լծակներ: Հետաքրքիր է, ի՞նչ հիմնավորմամբ ու տրամաբանությամբ է կառավարության այս ֆունկցիան հանձնվում մեր Երկրում տնտեսական գործունեություն վարող ընկերություններին: Չէ՞ որ այդպիսի կարգը բերում է ընկերությունների ազդեցության ոլորտի ընդլայնմանը՝ բնակչության վրա ճնշում գործադրելուն, ինչպես նաև մարդկանց մտածելակերպում ստրուկի հոգեբանության ամրագրմանը: Դժբախտաբար, ձևավորվել է «պետություն պետության մեջ»՝ քայքայիչ ու կործանարար համակարգը:

Բոլորին է հայտնի, որ հանքահանման-հանքավերամշակման գործունեությամբ զբաղվում են և կարող են զբաղվել միայն մեր Երկրի օրենսդրական և պետական կառավարման համակարգի լծակներին տիրապետողներից արտոնություն ստացած հարուստները, ինչպես նաև նշված ոլորտում վարվող քաղաքականությունը ձևավորող ու թելադրող արտաքին ուժի նպատակների իրականացման մասնակիցները:

Հանքարդյունաբերության ոլորտում վարվող՝ գիտականորեն չհիմնավորված, մեր ազգային շահերին հակասող, հավանաբար և նպատակայնորեն հորինված այսպիսի քաղաքականությունը շահեկան է միայն առանձին արտոնյալ անհատների և հայ ժողովրդի ստրկացումը ցանկացողների համար:

Ըստ Թեղուտի հանքավայրի նախագծի տվյալների, 25 տարվա ընթացքում վերամշակվելու է 175 մլն տոննա հանքաքար, որի ծավալային կշիռը 2,65 գ/սմ³ է,

իսկ մակաբացման գործակիցը 0,664 խմ/տոննա է (այսինքն՝ ամեն մի տոննա հանքանյութ հանելիս, առաջանալու է 0,664 խմ մակաբացման ապար): Եթե մակաբացման ապարների միջին ծավալային կշիռն ընդունենք 2,4 (ըստ մասնագետների, կարելի է վերցնել 2,5-2,6), ապա այդ դեպքում մեկ տոննա հանքաքար հանելիս կառաջանա 1,59 տոննա մակաբացման ապար: Դա նշանակում է, որ նշված տարիներին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը շրջակա միջավայր է թափելու 278 մլն տոննա (116,2 մլն խմ) մակաբացման ապարներ, 172,8 մլն տոննա պոչանք (պոչանքը կազմում է հանքաքարի 98,75%-ը):

Կյանքի համար մեծ վտանգ ներկայացնող պոչանքի և մակաբացման ապարների դիմաց եթե անգամ վճարվի հիշյալ օրենքի սակագներով (մակաբացման ապարները հինգերորդ, այսինքն՝ ոչ վտանգավոր, իսկ պոչանքը՝ չորրորդ դասի թափոններ), ապա 278 մլն տոննա մակաբացման ապարների համար վճարվելիք գումարը կկազմի 166,8 մլրդ դրամ, իսկ 172,8 մլն տոննա պոչանքի համար՝ 259,2 մլրդ դրամ: Գումարային 426 մլրդ դրամ (1,42 մլրդ դոլար, դրամի փոխարժեքի 2007թ. դեկտեմբերի տվյալներով՝ մեկ դոլարը 300 դրամ): Իրենց վտանգավորությունից ելնելով՝ եթե պոչանքը համարվի առաջին, իսկ մակաբացման ապարները երկրորդ դասի վտանգավոր թափոններ, ապա այդ դեպքում՝ 14,96 տրիլիոն դրամ (49,86 մլրդ դոլար):

Հավանաբար կգտնվեն մարդիկ, ովքեր թափոնների դիմաց պահանջվող գումարները մեծ կհամարեն, սակայն մեր կարծիքով, դրանք չնչին են՝ Դուքանաձոր, Պակասաջուր (կամ Թեղուտ, Խառատաձոր), Կռունկ լեռնային գետակների հունների-կիրճերի ավերման, ոչնչացման, դրանց ջրերի աղտոտման, Փիջուտ, Շուտ և Գուլաբի լեռնային գետակների խաթարման, ինչպես նաև Շնող և Դեբեդ գետերի աղտոտման դիմաց փոխհատուցում համարվելու համար:

Նախագծում մակաբացման ապարները համարվում են ոչ վտանգավոր թափոններ, սակայն, ի հակադրություն դրան, նույն նախագծի 41 էջում գրված է. «*Հետաօայտում այս հողը (բացահանքի և լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի տարածքներից տեղահանվելիք բերրի հողը) կօտարծվի պոչանքարի և լցակույտի (մակաբացման ապարների) տարածքի մակերեսը մինչև 30-50 սմ հզորությամբ հողաշերտով ծածկելու համար: Սա կկանխարգելի ծանր մետաղներով հարուստ հանքանյութի հողմնահարումը և քանու միջոցով շրջակա տարածքներ տարածումը*»:

Այժմ մեր երկրում, առանց որևէ հարկման՝ տարեկան տասնյակ միլիոնավոր տոննաներ մակաբացման ապարներ ու պոչանքներ են թափվում կենսոլորտ, հիմնականում, գետերի հուններ:

Այս ամենը ասվում է միայն նրա համար, որ ցույց տրվի, թե Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերությամբ զբաղվողներն օրենսդրորեն ստացած արտոնություններով ի՛նչ ծավալների գումարներ չեն մուծում պետական գանձարան, և եթե օրենսդրական փոփոխություններ չլինեն, հետագայում էլ նույնպես չեն մուծի:

Ըստ Նախագծի, Թեղուտի հանքավայրում հանքաքարի հաստատված պաշարները կազմում են 459 մլն տոննա, մակաբացման նույն գործակցի (0,664) դեպքում կառաջանա 731,5 մլն տոննա (304,7 մլն խմ) մակաբացման ապարներ, պոչանքը կկազմի 453 մլն տոննա: «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության պատվերով Թեղուտի հանքավայրի ուսումնասիրություն կատարած կանադական «Strathkona Mineral Services Ltd» ընկերության տվյալներով, հանքաքարի պաշարները կարող են լինել նախկինում հաստատված պաշարներից 15 տոկոսով ավելի: Եթե իրոք դա ճիշտ է և հաշվարկային 527,8 մլն տոննա հանքաքարն ամբողջությամբ օգտագործվի, ապա մակաբացման նույն գործակցի դեպքում կառաջանա 841 մլն տոննա (350 մլն խմ) մակաբացման ապար և 521 մլն տոննա պոչանք:

Համեմատության համար նշենք, որ մեր Երկրում մինչև 2003 թվականը հանքարդյունաբերության հետևանքով առաջացած պոչանքները կազմում էին ընդամենը 186 մլն խմ (Л. А. Манукян, Безопасная эксплуатация хвостохранилищ горных предприятий Армении, Ереван, 2003, էջ 48-49):

Ամփոփելով այս բաժինը՝ ցանկանում ենք հարցն ուղղել օրենսդրորեն լիազորված համապատասխան մարմիններին. արդյո՞ք հանքարդյունաբերական թափոնները շրջակա միջավայրում տեղավորելու համար արտոնյալ կարգ սահմանելն ուղղակիորեն չի նշանակում իրավական հիմքեր ստեղծել պետության-ազգային ունեցվածքը կողոպտելու-հափշտակելու համար:

Սակայն դա սովորական կողոպուտ չէ: Օրինակ, միայն Թեղուտի խնդրին խորամուխ լինողը հեշտությամբ կհանգզվի, որ այստեղ յուրաքանչյուր չնչին շահույթի համար Հայաստանի Հանրապետությանը պատճառվելու է միլիարդավոր, նույնիսկ տրիլիոնավոր դրամի նյութական վնաս: Այստեղ տեղին է հիշատակել՝ «դոյակը հրդեհելով մեկ բաժակ սուրճ եփելու» հայտնի խոսքը:

Վերադառնալով քննարկվող խնդրին, անհրաժեշտ է նշել, որ Թեղուտի հանքավայրի շահագործումն անթույլատրելի համարելու առնչությամբ բազում հողվածներ են հրապարակվել, ուստի չկրկնվելու համար այստեղ կբերվեն Նախագծում առկա, հիմնականում այն թերությունները, որոնք հիշյալ հրապարակումներում չեն լուսաբանվել կամ մասնակիորեն են լուսաբանվել (Թեղուտի խնդիրը համեմատաբար մանրամասն ներկայացված է «Ձոհասեղանին են դրված Լոռվա մարզի Թեղուտ և Շնող գյուղերն իրենց հարակից անտառներով» հողվածում, «Գարուն», 2007թ., N 3-4, էջ 33-50):

Հակիրճ՝ ՀՀ կառավարության նշված որոշումների համար հիմք հանդիսացած՝ Թեղուտի հանքավայրի նախագծի, այդ նախագծին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված փորձագիտական եզրակացության, ինչպես նաև ՀՀ կառավարության քննարկվող որոշումների (N1278-Ն և N1279-Ն) մասին:

1. Որոշ նկատառումներ Թեղուտի հանքավայրի նախագծի վերաբերյալ

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կազմած Թեղուտի հանքավայրի նախագիծը չի ներառում ծրագրի գործողություններն ամբողջությամբ, օրինակ՝ 25 տարվա հաշվով բերվում են հանքաքարի, մակաբացման ապարների, արտադրական ու կենցաղային թափոնների, ծախսվելիք ջրի, վառելիքի, կորզվելիք պղնձի, մոլիբդենի և ուղեկից մետաղների ծավալները, սակայն հողի խախտման-ոչնչացմանը, բուսականությանը, կենդանական աշխարհին, ջրային պաշարներին և համայնքային հողերին հասցվելիք վնասները ներկայացվում են միայն 8 տարվա հաշվով: «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը հավաստում է, որ առաջին փուլի աշխատանքներին զուգահեռ կկազմվի ու կներկայացվի մնացած 17 տարիների ընթացքում հողերին, կենսաբազմազանությանը և այլ բաղադրիչներին հասցվելիք վնասների վերջնական չափը:

Նշված բաղադրիչներին հասցվելիք վնասի իրական ծավալների կոծկումը և նախագիծը մաս-մաս ներկայացնելը նաև նրբորեն մշակված քայլ է այն առումով, որ եթե սկսվեն հանքավայրի շահագործման աշխատանքները, ապա գործընթացը կստանա անկասելի և կունենա անշրջելի բնույթ:

Հողեր

Նախագծում լցակույտերի (մեծ խտություններով ծանր մետաղներ պարունակող մակաբացման ապարների) տակ մնալիք հողատարածքը 107,4

հեկտար է, որից վնասի հատուցումն առաջին փուլով նախատեսված 52,4 հեկտարի հաշվով ներկայացված է 3,877 մլն դրամ (մեկ հեկտարը՝ 74 հազար դրամ կամ 185 ռուբլի, մեկ քառ. մետրը՝ 7,4 դրամ):

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ոչ միայն հողերին վերաբերող հաշվարկներում, այլ նաև Նախագծում տնտեսական վնասի գնահատումը հիմնականում կատարել են հնացած մեթոդական ձեռնարկներով, ինչպես և այսօրվա գները համեմատության մեջ են դրել 1984թ. գների հետ՝ մեկ ռուբլուն մեկ դոլար հաշվարկով, երբ դրանց գնողունակությունները կտրուկ տարբեր են, համեմատելի չեն: Օրինակ՝ 1984 թվականին մեկ ռուբլով կարելի էր գնել 50 լրագիր կամ 20 անգամ երթևեկել քաղաքային ավտոբուսով, այն դեպքում, երբ այժմ մեկ դոլարին համարժեք դրամով կարելի է գնել միայն 3 լրագիր կամ 3 անգամ երթևեկել քաղաքային ավտոբուսով:

Համեմատության համար նշենք, որ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքով՝ նույն անտառային ֆոնդի հողերում արդյունաբերական թափոններ տեղադրելու դեպքում յուրաքանչյուր քառակուսի մետրի հաշվով վնասի հատուցումը սահմանված է 10 հազար դրամ, այսինքն՝ մեկ հեկտարինը՝ 100 մլն դրամ: Եթե նույնիսկ նշված սակագնով հաշվարկենք, ապա առաջին փուլում լցակույտերի տակ մնալիք 52,4 հեկտարի համար վնասի հատուցումը կկազմի 5,24 մլրդ, իսկ երկրորդ փուլը ներառյալ (107,4 հեկտար)՝ 10,74 մլրդ դրամ:

Լցակույտերի, այսինքն՝ մեծ խտություններով ծանր մետաղներ պարունակող մակաբացման ապարների տակ մնալիք անտառային հողատարածքներին հասցվելիք վնասն անհամեմատ ցածր է գնահատվել նույնիսկ այդպիսի հողերում ապօրինի խոտհնձի դեպքում սահմանված տնտեսական վնասից: Այսպես, վերը նշված օրենքով՝ անտառային ֆոնդի հողերում ապօրինի խոտհնձի հետևանքով վնասված յուրաքանչյուր հեկտարի համար սահմանվում է 300 հազար դրամի վնասի հատուցում:

Նախագիծը կազմողները, փաստորեն, անտառային հողերը ծանր մետաղներ պարունակող թափոնների տակ մշտապես թաղելը 1351 անգամ ավելի պակաս են գնահատել, քան նույն անտառային հողերում արդյունաբերական թափոններ լցնելու համար պահանջվող վճարն է, և 4 անգամ պակաս, քան անտառային ֆոնդի հողերում կատարած ապօրինի խոտհնձի հետևանքով պատճառած վնասը:

- Նախագծում պոչամբարի համար հատկացված տարածքը 214 հեկտար է, որից առաջին փուլով նախատեսված 54 հեկտարի հաշվով տնտեսական վնասը ներկայացված է 12,096 մլն դրամ (մեկ հեկտարը՝ 224 հազար դրամ կամ 650 ռուբլի, մեկ քառ. մետրը՝ 22,4 դրամ): 54 հեկտարի հաշվով նույնիսկ արդյունաբերական թափոններն անտառային ֆոնդի հողերում լցնելու վերը բերված սակագներով հաշվելիս՝ վնասը կկազմի 5,4 մլրդ դրամ, իսկ 214 հեկտարի հաշվով՝ 21,4 մլրդ դրամ: Ինչպես տեսնում ենք, ամենավտանգավոր նյութերից մեկի՝ պոչանքի համար հատկացվելիք անտառային հողերն ավելի քան 446 անգամ ավելի ցածր են գնահատված, քան արդյունաբերական թափոններն անտառային ֆոնդի հողերում լցնելու դեպքում և ավելի քան 1,3 անգամ պակաս, քան ապօրինի խոտհնձի դեպքում է:

- Բացհանքի համար նախատեսված 240 հեկտարից առաջին փուլով նախատեսված 65-ի համար վնասը ներկայացված է 1,82 մլն դրամ (մեկ հեկտարը՝ 28 հազար դրամ, կամ 70 ռուբլի, մեկ քառ. մետրը՝ 2,8 դրամ), երբ անգամ անտառային ֆոնդի հողերում արդյունաբերական թափոններ տեղադրելու հաշվարկով (մեկ հեկտարի համար 100 մլն դրամ) այն կկազմի 6,5 մլրդ դրամ, իսկ 240 հեկտարի հաշվով՝ 24 մլրդ դրամ: Այսինքն՝ բացհանքի հետևանքով ոչնչացվելիք անտառային տարածքը 3571 անգամ պակաս է գնահատվել, քան այդպիսի տարածքում

արդյունաբերական թափոն լցնելու համար օրենքով սահմանված վնասի հատուցումն է: Բացահանքի համար նախատեսված տարածքն ավելի քան 10 անգամ ցածր է գնահատվել նույնիսկ ապօրինի խոտհնձի դեպքում սահմանված տնտեսական վնասից:

Բացահանքի համար նախատեսված 240 հեկտար տարածքը բնաջնջվելու է ընդհանրապես: Այդ անտառածածկ բարեբեր տարածքը վերածվելու է շուրջ 600 մետր խորությամբ ունեցող խոռոչի, որը ակնհայտորեն հարակից անտառների և տարածքների համար կունենա իր չափազանց բացասական ազդեցությունը:

Հանքաքարի վերանշակման գործարանի և անհրաժեշտ այլ օբյեկտների կառուցման համար հատկացված տարածքների տնտեսական վնասը Նախագծում ներկայացված է՝ մեկ հեկտարի հաշվով 12 հազար դրամ (մեկ քառակուսի մետրը՝ 1,2 դրամ), արհեստական լճակինը՝ 8 հազար դրամ (մեկ քառակուսի մետրը՝ 0,8 դրամ): Այն դեպքում, երբ արհեստական լճակի տակ հատկացված 5 հեկտար տարածքում, ըստ Նախագծի հատվելու է 26461 ծառ, որից 125 տանձենի, 2488 կաղնի, 292 հաճարենի, 5300 սոճի և այլն: Այդտեղ ոչնչացվելու է նաև տնկարանը: Նախագծի 65 էջում կարդում ենք. «Աշխատողների համար նախատեսվում է ստեղծել հան□ստյան □ոտի Կռունկ □ետի կիրճում: Այդտեղ կստեղծվի 5 հա մակերեսով արհեստական լիճ, որի ափին կտեղավորվեն կոտեջներ»: Ոչնչացնել ավելի քան 26 հազար ծառ, ինչպես նաև հարյուր հազարավոր մատաղատի ծառեր ու թփեր, բուսատեսակներ, որպեսզի ակտիվ հեղեղատների գոտում՝ բնակավայրերի բարձրադիր միջում, կառուցվի արհեստական լճակ՝ ըստ էության, բնակչության և պետության ուսերին թողնելով դրա անվտանգության և հավանական վթարի հետևանքով առաջանալիք խնդիրները, սա, մեր կարծիքով, բնության ու մարդու նկատմամբ դրսևորած ցինիզմ է ու դաժանություն:

Անտառային հողերում լճակ և դրա ափին կոտեջներ կառուցելու ծրագիրը հիշեցնում է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանի այն գաղափարը, որ Հայաստանի Հանրապետությունում «էլիտար» զբոսաշրջությանը զարկ տալու նպատակով պետք է Երևանի մոտ արհեստական ծով կառուցվի ("Под Ереваном надо построить искусственное море", "ДЭ", 29.06.2007):

Նախագծում ծրագրի իրականացման առաջին փուլում հողերի խախտումից հասցվելիք ընդհանուր վնասը ներկայացված է 12,13 մլն դրամ (էջ 72), այնինչ «Հողերի խախտումից հասցված վնասի հաշվարկ» արյուսակի բաղադրիչները գումարելիս ստացվում է 19,13 մլն դրամ, այսինքն՝ 7 միլիոնով պակաս է ցույց տրված: Այս սխալը արտացոլվել է Նախագծի մնացած բոլոր հաշվարկներում: Ի հարկե դա աննշան է, տրիլիոնավոր դրամի թերհաշվարկների համեմատությամբ:

Նախագծի առաջին փուլի համար նախատեսված 284,4 հեկտար ավերվելիք և ոչնչացվելիք անտառային հողերին հասցվելիք վնասը եթե հաշվարկվի միայն անտառային ֆոնդի հողերում արդյունաբերական թափոններ տեղադրելու հաշվարկով, ապա այդ դեպքում կկազմի 28,44 մլրդ դրամ, իսկ 699,4 հեկտարի հաշվով՝ 69,94 մլրդ դրամ: Այդպիսի հողերում ապօրինի խոտհնձի՝ օրենքով սահմանված սակագներով 284,4 հեկտարի հաշվով տնտեսական վնասը կկազմի 85,32 մլն դրամ, իսկ երկրորդ փուլի հետ մեկտեղ, այսինքն՝ 699,4 հեկտարի հաշվով՝ 209,82 մլն դրամ:

Ի դեպ, նույնիսկ Նախագծի հատորների միջև անհամապատասխանություն կա. օրինակ՝ 7-րդ հատորում հանքարդյունաբերություն իրականացնելու համար պահանջվող տարածքը 669,4 հեկտար է (էջ 72), իսկ 9-րդ հատորում՝ 790 հեկտար (էջ 6):

- Գյուղատնտեսական հանդակների օտարումից (հանքարդյունաբերության նպատակով ճանապարհներ, շինություններ կառուցելու համար) հասցվելիք վնասի

հաշվարկում՝ 57 հեկտար վարելահողի, 48 հեկտար արոտավայրի և 5 հեկտար այգիների օտարման տարեկան տնտեսական վնասը Նախագծում ներկայացված է 123,8 մլն դրամ (յուրաքանչյուր հեկտար վարելահողի դիմաց վճարվելիք գումարը 36,2 հազար դրամ է, արոտավայրերինը՝ 10,2 հազար դրամ, այգիներինը՝ 49,4 հազար դրամ): Սակայն հաշվարկային բանաձևից պարզ երևում է, որ նշված 110 հեկտարի հողատերերը որպես փոխհատուցում ստանալու են ոչ թե 123,8 մլն, այլ միայն 2,8 մլն դրամ: Մնացած 121 միլիոն դրամն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը ծախսելու է իր համար հողեր գնելու, հանքահանում-հանքավերամշակումը ավարտելուց հետո կառուցած ճանապարհներն ու շինությունները քանդելու-կազմաքանդելու, հողերի ռեկուլտիվացիայի, հողի տեղափոխման, վառելանյութ գնելու համար: Թվարկածները հաշվարկային բանաձևի մեջ են տեղադրել «ռեկուլտիվացիայի ծախսեր» անվամբ գործակցով, որին տվել են 1,1 մլն դրամի արժեք (եջ 76): Այդ նույն «տրամաբանությամբ» կարելի էր, օրինակ, հանքավայրի տարածքում իրականացվելիք ծառահատումների, հանքաքարի հանման ու վերամշակման համար պահանջվող ֆինանսական ծախսերը նույնպես հաշվառել այստեղ սպասվելիք տնտեսական վնասի մեջ...

Ծայրահեղ կողմնակալություն և միտումնավորվածություն: Նախագիծը կազմողները, բնական համակարգերին հասցվելիք վնասը, իրենց նպատակին հասնելու համար, միլիոնավոր անգամ փոքր են ներկայացրել, իսկ այս դեպքում էլ, հավանաբար, հանրության շրջանում բարերար երևալու համար, տնտեսական վնասը այլևայլ գործակիցներով քողարկելով, աշխատում են մեծ ներկայացնել:

Ինչպես տեսանք, Նախագծում մեկ հեկտար այգուց տարեկան ստանալիք եկամուտ-շահույթը ներկայացված է 49,4 հազար դրամ, այն դեպքում, երբ Թեղուտի բնակիչներից մեկը 2007թ. 0,2 հեկտարից ստացել է՝ 300 կգ դդում, 140 կգ լոբի, 150 կգ վարունգ, 300 կգ լոլիկ, 50 կգ սոխ, 500 կգ կարտոֆիլ, 2000 կգ խնձոր, 150 կգ սալոր, 100 կգ տանձ, 1500 կգ խոտ (նշված մթերքների արժեքը շուկայական գներից համեմատաբար ցածր գներով կազմում է ավելի քան 600 հազար դրամ: Մեկ հեկտարի հաշվով այն կկազմի 3 մլն դրամ), ինչպես նաև՝ խաղող, ճակնդեղ, գազար, կանաչեղեն, իսկ 5 փեթակից՝ 150 կգ մեղր:

Ջուր

Շնող գետի վրա նախատեսվում է կառուցել խմելու ջրի ջրամբար, սակայն Նախագծում բացակայում են այդ ջրամբարի ջրատնտեսական հաշվարկները: Բացակայում են նաև այդ ջրամբարի ջրի որակի կանխատեսվող փոփոխությունների և դրա՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը: Չեն կատարված նշված ջրամբարից բաց թողնվելիք բնապահպանական հոսքի հաշվարկները:

Նախագծում բացակայում է հանքավայրի շահագործումից հետո պոչամբարի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների և պահանջվող ծախսերի հաշվարկները:

Որպես օրինակ, բերենք Շնող գյուղից ուղիղ գծով մոտավորապես 5 կմ հեռավորության վրա, Նահատակ կիրճում, Մեծ Այրում և Գոճկան գյուղերի հարևանությամբ գտնվող պոչամբարը: Այն կառուցելիս, նախ, կիրճի ջրհավաքի ձևավորման սկզբնամասում տեղադրվել է պատվար: Այդտեղ նաև բետոնյա ջրատար է կառուցվել, որպեսզի գոյացող ջրերը տեղափոխվեն պոչամբարից ներքև: Նշված ջրատարը պարբերաբար մաքրվել ու գործել է, երբ հանքահարստացման գործի պատասխանատուն Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատն էր: Սոտ 30 տարի առաջ այն հանձնվեց Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկային, և այդ ժամանակներից առ այսօր նշված ջրատարը չի մաքրվել և չի գործել: Հեղեղումների հետևանքով ջրատարն ամբողջությամբ լցված է հողով և խճերով, որտեղ այժմ աճում են ծառեր ու թփեր (մոտ 800 մետր երկարություն և 4 մետր լայնություն ունեցող այդ ջրատարը հեշտությամբ կարելի է մաքրել տեխնիկայի միջոցով, ինչպես արվում էր

ժամանակին): Տասնամյակներ շարունակ կիրճի ձևավորման սկզբնամասում գոյացող ջրերը հոսում, լվանում, ակոսում են Նահատակ կիրճում տեղադրված նշված պոչամբարը, իսկ ներքևում այգիներ են, Քարակոփ բնակավայրն է և ապա՝ Դեբեդ գետը: Այժմ, բացի նշված արտահոսքերից, ոչնչով չծածկված այդ պոչամբարից արտանետվող փոշին աղետալի վիճակ է ստեղծել, գլխավորապես հարևանությամբ գտնվող բնակավայրերի համար: Այդ պոչամբարում տեղավորված է 1,2 մլն խորանարդ մետր պոչամբ: Նշենք, որ Նահատակ կիրճում կառուցված պոչամբարի նախագծում նախատեսված է պոչամբի լիովին մեկուսացում՝ պոչամբարի ռեկուլտիվացիան, այսինքն՝ հողի շերտով ծածկելը և այդտեղ համապատասխան բուսականություն աճեցնելը...

Ըստ Թեղուտի հանքավայրի Նախագծի՝ ավերվելու են Շնող գետի վտակները (Կռունկը, Դուքանաձորը, Խառատաձորը), դրանց հուները լցվելու են մակաբացման ապարներով և պոչամբով, որի հետևանքով ծանր մետաղներով և այլ թունավոր նյութերով աղտոտվելու են Շնող գետի ջրերը՝ դառնալով օգտագործման համար ոչ պիտանի, խաթարվելու են նաև նույն Շնողի մյուս 3 վտակները (Փիջուտը, Շևուտը, Գուլաբին):

Շնող գետը Թեղուտ և Շնող գյուղերի տնտեսական, ոռոգման և խմելու ջրի աղբյուրն է: Այդ առումով, նախագծում անտեսված են ՀՀ կառավարության 2003թ. N1110-Ն որոշման պահանջները, որտեղ ասվում է, որ նման դեպքերում տեղի բնակչության ջրամատակարարումը պետք է ապահովվի այլ աղբյուրներից, որի համար անհրաժեշտ են համապատասխան միջոցառումների և ֆինանսական ծախսերի հաշվարկները:

Նախագծում անտեսված են նաև աղտոտված ջրերի օգտագործումից սպասվելիք բացասական հետևանքները (մուտացիա, ժառանգական խաթարումներ, հիվանդություններ) և դրանց հետ կապված վնասների հաշվարկները:

Անհավանական է Նախագծում բերված կեղտաջրերի 98%-ով մաքրումը կամ մաքրված կեղտաջրերի որակի ցուցանիշների համընկնումը գետի ֆոնային ցուցանիշներին: Աղյուսակ 4.2.6-ում զարմանալի ճշտությամբ համընկնում են աղտոտող նյութերի հաշվարկային և թույլատրելի սահմանային արտահոսքերի մեծությունները: Այդ բոլորը դժվարացնում է նյութի ընկալումը և կասկած է հարուցում բերված վերջնական եզրակացությունների նկատմամբ:

Բուսականություն

ՇՄԱԳ-ում և Նախագծում ասվում է, որ «նշված տարածքում Կարմիր գրքում գրանցված ծառատեսակներ չկան», սակայն այդ երկու փաստաթղթերը շրջանառության մեջ դնելուց հետո կազմված՝ «Թեղուտի հանքավայրի բնապահպանական կառավարման պլան»-ի մեջ բերված են այլ տվյալներ: Այսպես, այդ փաստաթղթի՝ «Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի համար նախատեսված տարածքում հանդիպող հազվագյուտ, անհետացող և ռելիկտային բուսատեսակները» աղյուսակում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բազմաթիվ ծառատեսակներ և թփատեսակներ (թխկի դուրեկան, թխկի Տրաուտվետտի, ընկուզենի հունական, գիհի բազմապտուղ, գիհի գարշահոտ, գիհի կազակական, կենի հատապտղային, կաղնի ծաղկատերևավոր, սոճի կովկասյան, բալենի անտառային, բալենի մահալեբյան, թզենի, խուրմա կովկասյան, ունաբ, տխլենի սովորական, արջատխլենի, խաղող անտառային և այլն):

Այդ աղյուսակում առկա են նաև այլ բուսատեսակներ, որոնք նույնպես բացակայում են ՇՄԱԳ-ում և Նախագծում՝ պիստակենի բթատերև, փոշնի կովկասյան, թեղի փետրածյուղավոր, խնձորենի արևելյան, կեչի Լիտվինովի, կաղնի վրացական, կաղնի արևելյան, կաղնի ամառային, ուռենի սպիտակ, ուռենի ոսկեգույն, ուռենի բոսորագույն, լորենի կովկասյան, թխկի բարձրլեռնային, թխկի հիրիկանյան, թխկի վրացական, թխկի դաշտային, թխկի հացիատերև, կաղամախի,

արոսենի գլոգովինի, արոսենի սովորական, գիհի վիրգինյան, գիհի բազմապտուղ, գիհի գաճաճ, գիհի սրատերեփուկավոր, ռոբինյան կեղծ ակացիա, սոճի դրինյան, թխկենի սովորական, հացենի կանաչ, ծիրանենի սովորական, սալորենի-ալոջ, տանձենի ուռատերև, տանձենի կովկասյան, փոշնի կովկասյան, փշատենի նեղատերև, նշենի Ֆենցլիի, զկեռ սովորական, չիչխան դժնիկային, մամուխ, բալենի ալեհեր, ցախակեռաս կովկասյան, ցախակեռաս վրացական, դժնիկ պալասի, դժնիկ սովորական, գերամաստի, բռինչ սովորական, կարագանա ծառանման, չմենի սովորական, պայթակենի սովորական, արոսենի սովորական, ճապկի, սկունպիա, հաղարջենի ոսկյա, ասպիրակ աղեղնաեզր, տամարքիս, մասրենի, կծոխուր սովորական, իլենի ելունդավոր, կիպրոս սովորական, խլոպուզ միրգուկայի, վարդկակաչ վայրի և այլն:

ՇՄԱԳ-ում և Նախագծում ներկայացված են միայն 11 դեղաբույս և 9 ուտելի բույս, այն դեպքում, երբ նույն՝ «Արմենիան Քափր Փրոգրամ» ընկերության կազմած՝ Թեղուտի հանքավայրի բնապահպանական պլանում առկա է 58 դեղաբույս և 78 ուտելի բույս:

Ըստ ՇՄԱԳ-ի տեքստի, հատվելու է 127 հազար ծառ (60400 խմ բնափայտ), այն դեպքում, երբ այդ նույն փաստաթղթի տվյալների (աղյուսակներ՝ 8.4.2, 8.4.3, 8.4.4, 8.4.5, 8.4.6 և 8.4.7) հաշվարկները ցույց են տալիս, որ այդտեղ առկա է 170883 ծառ (60859 խմ բնափայտ): ՇՄԱԳ-ում և Նախագծում բերված համապատասխան աղյուսակներում բացակայում է 53333 խնձորենու (որից 43333-ը 26 սմ կոճղի տրամագծով) հատումից գոյանալիք բնափայտը: Եթե այդ ծառերից գոյանալիք փայտանյութը ընդունենք մոտ 25 հազար խորանարդ մետր, ապա այսօրվա շուկայական գներով դրա արժեքը նույնիսկ որպես վառելիք կկազմի մոտ 500 մլն դրամ, որը նույնպես բացակայում է վնասի հատուցման հաշվարկներում: Նշված 43333 խնձորենու հատումից առաջանալիք տնտեսական վնասը ներկայացված է 584,995 մլն դրամ, այն դեպքում, երբ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքով սահմանված սակագներով վնասը կազմում է 866,66 մլն դրամ, այսինքն՝ **281,665** միլիոն դրամով պակաս է ներկայացվել:

Նախագծում բացակայում է ոչ միայն 53333 խնձորենիներից, այլև մյուս պտղատու ծառերից և պտղատու թփերից տարեկան ստացվող բերքի քանակը և հասցվելիք վնասի չափը: ՇՄԱԳ-ում 36 սմ կոճղի տրամագծով վայրի տանձենին զնահատվել է մեկ հազար դրամ, այն դեպքում, երբ ըստ օրենսդրորեն ընդունված սակագների, այդ ծառի հատման վնասը կազմում է 31500 դրամ (նույնպես չնչին գումար): Նախագծում բացակայում է ՇՄԱԳ-ում ներկայացված «Երկրորդ հերթի դատարկ ապարների լցակույտի տակ հատկացված տարածքի ծառահատումների հաշվեգնահատման ամփոփագիր» աղյուսակը (8.4.4), ըստ որի, հատման ենթակա են 10585 հատ 32-50 սմ կոճղի տրամագծով հաճարենիներ, 36 սմ կոճղի տրամագծով 23 տանձենի և այլն:

Նախագծում խախտվելիք-ոչնչացվելիք տարածքներում հատվելիք ամենահաստաբուն կաղնու կոճղի տրամագիծը ներկայացված է 28 սմ, այն դեպքում, երբ այնտեղ կան մեկ մետրը գերազանցող կաղնիներ: Տնտեսական վնասը զնահատելիս անտեսվել են ոչնչացվելիք մոտ 2 մլն 1-8 տարեկան մատաղատի ծառեր: «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքով՝ *մինչև 5 տարեկան բնական ծառում ունեցող մատղաշ ծառերի ոչնչացման կամ աճի դադարեցման աստիճան վնասման դեպքում՝ յուրաքանչյուր հեկտարի համար* սահմանված է 450 հազար դրամ, իսկ 6-10 տարեկանի դեպքում՝ 575 հազար դրամ: Այդ նույն օրենքով՝ մինչև 4 սմ կոճղի տրամագծով հատված կամ ոչնչացման և աճի դադարեցման աստիճանը վնասման դեպքում՝ յուրաքանչյուր միավորի համար վնասի հատուցումը կազմում է 4500 դրամ: Այս սակագներով 2 մլն մատաղատի ծառերին հասցվելիք վնասը կկազմի 9 մլրդ դրամ:

Վնասի գնահատումն չի կատարված նաև հարյուր հազարավոր թփերի ոչնչացման, ինչպես նաև՝ ուտելի բույսերի, դեղաբույսերի, հատապտուղների, սնկերի համար: «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքով՝ թփերին հասցվելիք վնասը հաշվարկվում է յուրաքանչյուր թփի հաստությամբ, ինչպես ծառերի պարագայում: Եթե հատվելիք-ոչնչացվելիք թփերի քանակը ընդունենք 400 հազար, այդ դեպքում օրենքով սահմանած ամենացածր սակագնով (յուրաքանչյուր միավորի համար 4500 դրամ), հաշվի չառնելով Կարմիր գրքում գրանցվածների համար սահմանված վնասի տասնապատիկը, վնասը կկազմի 1,8 մլրդ դրամ: Այդ նույն օրենքում ասվում է. «*ՀՀ Կարմիր քարտեզում օրանցված, ինչպես նաև բնության հուշարձանի կարգավիճակ ունեցող ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է սույն կետի «ա» և «բ» ենթակետերում բերված սակագների տասնապատիկի չափով*» (հոդված 5): ...

Նախագծում ծառահատումների հետևանքով հասցվելիք վնասը կազմում է ընդամենը 1,92 մլրդ դրամ:

Պետք է նկատի ունենալ, որ ապօրինի հատված ծառերի փոխարեն կարող են աճել նոր ծառեր, իսկ իրականացվելիք նախագծի շրջանակներում հիմնականում ոչնչացվելու են ծառերի և մյուս բույսերի աճելավայրերն իրենց երկրաբանական հիմքերով, հետևաբար այս պարագայում ծառերի հատման համար պետք է մի քանի կարգ բարձր վնասի հատուցում պահանջվի:

Վայրի կենդանիներ

Ինչպես արդեն ասվել է, ըստ Նախագծի՝ ավերվելու են Շնող գետի վտակները՝ Կռունկ, Դուքանաձոր, Խառատաձոր գետակները, խաթարվելու են նույն գետի մյուս վտակները՝ Փիջուտը, Շևուտը, Գուլաբին, որի հետևանքով ջրային կենսաբազմազանության վտանգման և կորստի դիմաց տարեկան տնտեսական վնասը ներկայացված է ընդամենը 175 հազար դրամ՝ 130 կգ ձկնատեսակների հաշվով:

Նախագծի «Ձկնատնտեսական հանդակների օտարացումից հասցված վնասը» բաժնում կարդում ենք. «*Ներկա պարագայում Թեղուտի կոմբինատի շինարարության հետևանքով հասցվելիք նյութական վնասի հաշվարկը եզրափակվում է միայն ձկան արդյունաբերական պաշարների տնտեսական արժեքով և միայն Շնող գետով և նրա վտակներով... Ձկան կենսազանգվածի 60%-ը կազմում է կապույտը, 20%-ը՝ Քռի բեղուն, 10%-ը՝ կարմրախայտը, 10%-ը Քռի լերկածուկը և հայկական տառեխը: Յուրաքանչյուր մեկ կիլոգրամ կողակը արժի 500 դրամ, կապույտը 1000, կարմրախայտը 8000 դրամ, այլ տեսակի ձկները՝ 500 դրամ: Հաշվարկները ցույց են տալիս, որ հատակային կենդանիների միջին կենսազանգվածը հավասար է մոտ 7,5 ք/քմ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ Շնող գետի և նրա վտակների տարածքում մոտ 130 կգ ձուկ, 175000 դրամ ընդհանուր արժողությամբ» (էջ 75-76):*

Անհասկանալի է, թե ինչու է հասցվելիք նյութական վնասի հաշվարկը եզրափակվում միայն ձկան արդյունագործական պաշարների տնտեսական արժեքով, այն դեպքում, երբ հենց նույն նախագծում ասվում է, որ ոչնչացվող-վնասվող տարածքներում առկա են միջատների ..., սողունների 10, երկկենցաղների 2, թռչունների 86, ձկների 5, կաթնասունների 55 տեսակներ: Այդ կենդանիներից շատերը գրանցված են Հայաստանի և Միջազգային Կարմիր գրքերում:

Նաև՝ այն տպավորությունն է ստեղծվում, որ Նախագծի հեղինակները չգիտեն, որ ոչ թե կիլոգրամով, այլ հատով է հաշվարկվում ձկնաշխարհին հասցվելիք վնասի գնահատումը: «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով

կենդանական և բուսական աշխարհին պատճառած վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառած վնասի հատուցման սակագներն են ... այլ կենդանատեսակների ապօրինի որսի և (կամ) ոչնչացման դեպքում յուրաքանչյուր միավորի (անկախ տարիքից) համար՝ օտի իշխան կարմրախայտ՝ 5000 դրամ, այլ տեսակի ձկներ՝ 1000 դրամ»:

Նախագծում բերված տվյալներով՝ նշված գետերում տարեկան կարելի է որսալ 78 կգ կապույտ, 26 կգ բեղլու, 13 կգ կարմրախայտ և 13 կգ լերկաձուկ և հայկական տառեխ: Ըստ մասնագետների, որսման ենթակա սեռահաս ձկների հաշվով՝ թվարկած ձկնատեսակները տարեկան կլինեն հետևյալ քանակությունների՝ կապույտը մոտ 1300 հատ, բեղլուն՝ 500, կարմրախայտը՝ 130, լերկաձուկը և հայկական տառեխը՝ 700 հատ: Այդ դեպքում կարմրախայտի համար վճարը, օրենքով սահմանված սակագնով, կկազմի 650 հազար դրամ, իսկ մյուս 2500 ձկների համար՝ 2,5 մլն դրամ: Այսինքն՝ տարեկան ավելի քան 3 մլն դրամի փոխարեն նախագծում ներկայացրել են 175 հազար դրամ:

Ըստ նույն մասնագետների՝ քննարկվող ջրային համակարգում կարելի է ընդունել, որ յուրաքանչյուր սեռահաս ձկան հաշվով նվազագույնը առկա է 2000 մանրաձուկ: Այդ դեպքում նշված ջրային համակարգում պետք է որ լինի 260 հազար կարմրախայտ և 5 մլն այլ ձկներ: Այդ հաշվարկով կարմրախայտի վնասի հատուցման վճարը կկազմի 1,3 մլրդ դրամ, իսկ մյուս ձկներինը՝ 5 մլրդ դրամ: Այսինքն՝ նախագծում բերված 130 կգ ձկնատեսակների ոչնչացումից սպասվող տնտեսական վնասը ոչ թե տարեկան 175 հազար դրամ է, այլ՝ 6,3 մլրդ դրամ: Տեղի ձկնորսների տվյալներով՝ տարեկան որսվում է ավելի քան 100 կգ կարմրախայտ, 400-500 կգ կապույտ և այլն: Այդ հաշվարկով միայն կարմրախայտին հասցվելիք տարեկան վնասը կկազմի 3 մլրդ դրամ:

Նախագծի 19-րդ էջում կարդում ենք. «Բոլոր օրանցված միջատների թրթուրները մտնում են Դեբեդ օտի ջրհավաք ավազանում բնակվող ձկնատեսակների կերային բազայի կազմի մեջ»: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարելի է ասել, որ նախագծում ձկների կերային բազայի հաշվարկները ճիշտ չեն կարող լինել այն առումով, որ արդեն հայտնի է դարձել, որ Թեղուտի հանքավայրի տարածքում, քննարկվող նախագծի շրջանակում միջատների ուսումնասիրություններ չեն կատարվել, այլ Դիլիջանի մոտակայքում գտնվող Թեղուտ գյուղի անտառների միջատների ցանկը մտցվել է Լոռվա մարզի Թեղուտի հանքավայրի նախագծի մեջ և ներկայացվել որպես այդ տարածքի անտառներում միջատների ուսումնասիրության արդյունք:

Պետք է նկատի ունենալ, որ Շնող գետն ու իր վտակները հանդիսանում են կարմրախայտի համար ձվադրավայր, հետևաբար դրանց ավերման և ջրի քիմիական կազմի փոփոխման հետևանքով այդ ձկնատեսակն այդտեղ ընդհանրապես կվերանա (Նախագիծ, էջ 19, «Հետազոտությունների ընթացքում Շնող օտում և նրա վտակներում օրանցվել են այս օտավազանում ամենատարածված ձկնատեսակներ՝ կարմրախայտ, Քռի բեղլու, Քռի կողակ կամ կապույտ: Այս տեսակները արափահու, քարքարոտ հատակով օտերի բնակիչներ են: Բազմացման ժամանակ կարմրախայտը սեպտեմբեր հոկտեմբերին, Քռի կողակը՝ հուլիսին, Քռի բեղլուն՝ հուլիս-օգոստոսին բարձրանում են օտերի ակունքները»):

Ինչպես տեսնում ենք, այդ գետակները ձվադրավայր են ոչ միայն կարմրախայտի, այլև մյուս ձկնատեսակների համար:

Այս ավազանում ձկնատեսակներին հասցվելիք վնասը չի կարելի համեմատել ապօրինի որսի հետևանքով առաջացած վնասի հետ, այն առումով, որ Թեղուտի հանքավայրի նախագծի իրականացման դեպքում ոչնչացվելու են նշված ձկնատեսակների գենոֆոնդերն ընդհանրապես:

- Բերենք, Նախագծում նշված, Թեղուտի հանքավայրի տարածքում հայտնի որոշ կենդանիների որսի կամ ոչնչացման դեպքում օրենսդրորեն սահմանված (Օրենք «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին», հոդված 3) յուրաքանչյուր միավորի սակագները. գորշ արջ՝ 1 մլն դրամ, կովկասյան ջրասանույր՝ 500 հազար, անտառային կատու՝ 200 հազար, մանուլ՝ 200 հազար, առաջավորասիական ընձառյուծ՝ 3 մլն, բեզուարյան այծ՝ 3 մլն, վայրի հնդկահավ՝ 125 հազար, անդրկովկասյան սահնօձ՝ 30 հազար, միջերկրածովյա կրիա՝ 20 հազար դրամ (Այս կենդանիները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում), ինչպես նաև լուսան՝ 200 հազար, վայրի խոզ՝ 200 հազար, այծյամ՝ 250 հազար դրամ և այլն:

- Նախագծում նշվում է, որ Թեղուտի հանքավայրում և հարակից տարածքներում գրանցված են 86 թռչնատեսակ, որից 7-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, այն դեպքում, երբ նշված վայրում հայտնի են 208 թռչնատեսակ (Մ. Ադամյան, Դ. Քլեմ, «Հայաստանի թռչունները», ԱՄՆ, 2000թ.), որից 28-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (սպիտակափող սոխակ, իրանական կապտափող սոխակ, կապույտ քարակեռնեխ, խայտաբղետ քարակեռնեխ, սևավիզ քարաթռչնակ, սև ագռավ, ճուռականման շահրիկ, սև փայտփոր, հայկական ոլոր, ոտնացուպիկ, մոխրագույն կռունկ, կովկասյան մայրեհավ, կասպիական հնդկահավ, աղավնաբազե, սովորական մանրաբազե, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, սև անգղ, գառնանգղ, քարարծիվ կրետակեր, եվրոպական տյուվիկ, մարգագետնային մկնաբազե, մոխրագույն բադ, լայնաքիթ բադ, գերեզմանարծիվ, սապսան, ճահճային մկնաճուռակ): Թռչնաբան Մ. Ադամյանի տեղեկացմամբ՝ վերջին տարիների ուսումնասիրությունների տվյալներով կազմվում է Հայաստանի նոր Կարմիր գիրքը, որի մեջ թռչնատեսակների քանակը կարող է ավելանալ մոտ երեք անգամ:

Մթնոլորտային արտանետումներ

Նախագծում «Վնասակար նյութերի արտանետման քանակը ճանապարհներից և բեռնատարներից հանքաքարը և դատարկ ապարը մեքենաներով տեղափոխելու ընթացքում» հաշվարկի նույն բանաձևում (էջ 46) նյութի մակերևութային շերտի խոնավության գործակիցը ներկայացված է երկու արժեքով՝ 0,4 և 0,7 (առանց որևէ պարզաբանման), այն դեպքում, երբ բանաձևի բացատրականում այն ունի 0,7 արժեքը: Ինչպես նաև նույն բանաձևում մթնոլորտ մուտք գործող փոշու բաժնեմասը արտահայտող գործակիցը բացատրականում 0,1 է, բանաձևում՝ 0,001, այսինքն 100 անգամ փոքր (Այդ գործակիցը ընդհանրապես բացակայում է «Дополнение к временной методике по расчету выбросов вредных веществ в атмосферу, Москва, 1984, стр. 9): Ակնառու է արտանետումների քանակի նվազեցման միտումը, որն էլ իր հերթին բերում է դրանցից սպասվող վնասի փոքրացմանը:

Այսպիսով, Նախագծում Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում բուսական ու կենդանական աշխարհին, հողերին, ջրերին, օդային ավազանին և այլ օբյեկտներին հասցվելիք վնասը կազմում է ընդամենը **2,07 մլրդ դրամ**: Իրականությանը չհամապատասխանող այդ չնչին գումարն իր մեջ նաև ներառում է հանքավայրի շահագործումն ավարտելուց հետո կառուցված ճանապարհների ու շինությունների քանդման-վերացման, ընկերության համար հողերի գնման և վերականգնողական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական ծախսերը:

Նկատված թերհաշվարկները ցույց տալով, ոչ թե նպատակ ենք հետապնդում, որպեսզի օրենքով նախատեսված վնասի հատուցումն իրականացվի և հանքավայրը

շահագործվի, այլ դրանով միայն ցանկանում ենք ցույց տալ, թե որոշ դեպքերում ինչ որակի նախագծեր են կազմվում և դրանց ինչպիսի գնահատական ու ընթացք է տրվում: Քանզի վնասի հատուցում չի լինելու: Նախագծում կարդում ենք. «Տնտեսական վնասը բնութագրում է ձեռնարկության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Չնայած որ տնտեսական վնասը հաշվարկվում է պայմանորեն և **վճարման ենթակա չէ**, նա թույլ է տալիս նահատել ձեռնարկության ործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» (էջ 67):

Տպավորություն է ստեղծվում, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը և հանքարդյունաբերությամբ զբաղվող մյուս ընկերությունները խորհրդային Չայաստանի իրավահաջորդներ են համարվում:

Խորհրդային իշխանության օրոք իրականացվելիք ծրագրերի օգուտ-վնասների վերլուծություն-գնահատումն արվում էին միայն նրա համար, որպեսզի պարզեին, թե ինչքանով է հիմնավորված տվյալ ծրագրի իրականացումը: Այդ ժամանակ, մեր ունեցած բոլոր հարստությունները Չայաստանի խորհրդային հանրապետության սեփականությունն էին, հետևաբար և վնասի հատուցման անհրաժեշտություն չկար: Կարծում ենք, ընկերություններին վնասի հատուցումից ազատելը՝ ՀՀ պետության հանդեպ ուղղակի վնասարարություն է:

- Նախագծում թերի են ներկայացված կամ բացակայում են հանքի շահագործման հետևանքով բնական համակարգերին հասցվելիք սոցիալական, առողջապահական, տնտեսական, էկոլոգիական և այլ ոլորտներին սպառնացող երկարատև ազդեցության վնասները: Նաև հաշվի չի առնված ավերվելիք-ոչնչացվելիք տարածքների հետ կապված առողջապահական, ուսուցողական-դաստիարակչական, հոգեբանական, մշակութային, գեղագիտական նշանակության կորուստները:

- Նախագծում անտեսված է Շնող և Թեղուտ գյուղերի, ինչպես նաև հանքավայրի մոտակայքում գտնվող մյուս բնակավայրերի ապագան: Ելնելով փորձից, ինչպես հանքերի շահագործման ընթացքում, այնպես էլ դրանից հետո, գլխավորապես հանքարդյունաբերության թափոնների պատճառով, հանքահանման ու դրա հարակից տարածքները շարունակաբար աղտոտվելու են կայուն աղտոտիչներով և ի վերջո դառնալու են ապրելու համար ոչ պիտանի:

- Նախագծում մետաղների կորզման արդյունավետությունը (պղնձինը՝ 85%-ով, մոլիբդենինը՝ 70%-ով) ցածր է և չի համապատասխանում աշխարհում հայտնի ներկայիս չափանիշներին:

«Հաշվեկշռային պաշարների բնութագիրը» աղյուսակում (3.1) բերված են տարբեր մակարդակներով ուսումնասիրված հանքաքարերի երեք զանգվածներ (էջ 23): Առաջին զանգվածի 5,448 մլն տոննա հանքաքարում պղնձի պարունակությունը 0,376%, մոլիբդենը՝ 0,0215% է, իսկ ոսկու պարունակությունը յուրաքանչյուր մեկ տոննայում՝ 0,6 գրամ, քանակը՝ 4776,2 կգ, արծաթինը՝ 31,7 գրամ, քանակը՝ 303,8 կգ, ռենիումինը՝ 5,6 գրամ, քանակը՝ 44,8 կգ, այն դեպքում, երբ մեր հաշվարկներով այդտեղ առկա է 3268,8 կգ ոսկի, 172701 կգ արծաթ, 30509 կգ ռենիում, այսինքն՝ ոսկու քանակը մեծացված է, իսկ արծաթի և ռենիումի քանակները հարյուրավոր անգամ փոքր են ցույց տվել: Երկրորդ զանգվածում՝ 72,6 մլն տոննա հանքաքարում պղնձի պարունակությունը 0,337% է, մոլիբդենինը՝ 0,0234%: Երրորդ զանգվածում՝ 381 մլն տոննա հանքաքարում պղինձը՝ 0,358%, մոլիբդենը՝ 0,0212%: Սակայն բնապահպանության նախարարության երկրաբանության վարչությունում պահպանվող դեռևս խորհրդային իշխանության տարիներին կատարված Թեղուտի հանքավայրին վերաբերող հաշվետվություններում ընդհանուր հանքանյութում

մոլիբդենի պարունակությունը չի գերազանցում 0,017%-ը, պղնձի պարունակությունը 50-60 մլն տոննայում մոտ 0,45% է, իսկ մնացած պաշարներում այն չի գերազանցում 0,25%-ը: Մեծ հավանականությամբ ներկայիս խառնաշփոթը ստեղծվել է միայն նշված 50-60 մլն տոննա հանքաքարը օգտագործելու համար...

- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կողմից կազմված Նախագծում միմյանց են գումարվել մեկ տարվա և ընդհանրապես ոչնչացվելիք օբյեկտին հասցվելիք վնասները ...

- Իրավական խախտումներից է նաև այն, որ «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը» և «Աշխատանքային նախագիծը» կազմվել են «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության սեփականությունը հանդիսացող Լեռնամետալուրգիայի ինստիտուտում:

Վերը բերված և բազում այլ փաստերի պարտադրանքն է, որ մեկ անգամ ևս անդրադարձանք կիսավարտ, անճշտություններ, թերիաշվարկներ, կեղծիքներ և այլ թերություններ պարունակող և օրենսդրությանը չհամապատասխանող Նախագծին, որը կայացած իրավական դաշտի պայմաններում, բնականաբար, շրջանառության մեջ չէր դրվի և քննարկման առարկա չէր դառնա:

2. ՀՀ բնապահպանության նախարարության գործելակերպը

ՀՀ բնապահպանության նախարարությունն օրենքով սահմանված կարգով պետք է ուսումնասիրեր և վեր հաներ Նախագծում տեղ գտած թերությունները, սակայն անտեսելով օրենսդրական պահանջները, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կազմած Թեղուտի հանքավայրի նախագիծն ընդունել է և առանց փորձագիտական ուսումնասիրություն կատարելու դրան տվել է դրական եզրակացություն: Բազմիցս հրապարակումներում ցույց է տրվել, որ այդ եզրակացությունը իրավական ու գիտական հիմքեր չունի, հետևաբար և չի կարող պաշտոնական փաստաթուղթ համարվել:

Բնապահպանության նախարարությունն անտեսել կամ արհամարհել է նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի, օրինակ, հետևյալ սահմանումները.

«1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր ործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարելել և կամ նվազաույնին հասցնել հայեցակարի և նախատեսվող ործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարացման վրա:

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը ելնում է՝ առողջության, բնականոն ապրելու և ստեղծաործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքից. բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օտաործման պահանջներից. էկոլոիական համակարերի հավասարակշռության և բնության մեջ ոյություն ունեցող բույսերի և կենդանիների բոլոր տեսակների պահպանման անհրաժեշտությունից, նկատի ունենալով ներկա և ապաա սերունդների շահերը:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը հիմնվում է՝ իտական հիմնավորվածության, օրինականության, որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքների վրա» (Հոդված 2):

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Թեղուտի հանքավայրի նախագծին տված եզրակացությունն ուսումնասիրողները հեշտությամբ կհանդգնեն,

որ նախարարությունը այստեղ բերված երեք կետերում էլ չի կատարել օրենքի պահանջները՝

1) չի կանխորոշել նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը և դրա կանխարգելման ուղղությամբ պահանջվող անելիքները,

2) անտեսել է բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման, ինչպես նաև նշված կետում բերված մյուս պահանջները,

3) նրա կողմից կատարված փորձաքննությունում բացակայում են գիտական հիմնավորվածության, օրինականության, ինչպես նաև որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքները:

Այդ նույն օրենքը նաև սահմանում է. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության խնդիրներն են՝

- վերլուծել նախատեսվող օործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքային բոլոր սահմանափակումները.

- քննատել նախատեսվող օործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վտանգավորության աստիճանը.

- ստույգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող օործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունը ինչպես շահաօործման և իրականացման օործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ.

- ապահովել բնական պաշարների արդյունավետ, բանական օտաօործումը.

- արգելել շրջակա միջավայրի վրա անդառնալի վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած նախատեսվող օործունեություն, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված. ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը փորձաքննության բոլոր փուլերում» (Հոդված 3):

Նախորդ հրապարակումներում արդեն ասվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը թեղուտի հանքավայրի նախագծի փորձաքննությունն իրականացնելիս լիովին անտեսել է նաև այս հոդվածի պահանջները: Օրինակ, չի վերլուծել նախատեսվող գործունեության այլընտրանքային սահմանափակումները, չի գնահատել նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները, չի ապահովել բնական պաշարների արդյունավետ ու բանական օգտագործումը և այլն:

Ուռնահարված է նաև նշված օրենքի 5-րդ հոդվածի այն պահանջը, որ փորձաքննությունն առնվազն պետք է ընդգրկի այլընտրանքային լուծումներ, այդ թվում՝ զրոյական գործողության այլընտրանքը (նախատեսվող գործողության բացառումը), դրանց համեմատական վերլուծությունը և առավել ընդունելի տարբերակի ընտրությունը:

- Դեռևս պարզված չէ, թե բնապահպանության նախարարությունն ինչ հիմնավորմամբ է անտառածածկ տարածքում հանքահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու արտոնագիր տվել: Բացակայում են նաև վերը նշված լեռնային գետակների հուները թունավոր թափոնների պահեստարաններ դարձնելու գիտական հիմնավորումը հաստատող փաստաթղթերը:

- Բնապահպանության նախարարությունը չի կատարել թեղուտի հանքավայրի նախագծի՝ օրենքով սահմանված հասարակական լսումներ կազմակերպելու իր պարտավորությունը: Քննարկվող նախագծին վերաբերող լսումները, հիմնականում, կազմակերպել է շահագրգիռ կողմը: Առանց բացառության, բոլոր լսումները (նաև՝ Ազգային ժողովում կազմակերպվածը) կրել են միակողմանի քարոզչության բնույթ՝ հոգուտ հանքավայրի շահագործման:

- Բնապահպանության նախարարությունը միաժամանակ իրականացնում է թե՛ գործադիր, թե՛ վերահսկիչ գործառույթներ՝ հանքավայրերի ուսումնասիրությունների

արտոնագրեր է տալիս, ընդունում է այդ ուսումնասիրությունների արդյունքները, դրանք հաստատում է, իրականացնում է դրանց բնապահպանական փորձագիտական ուսումնասիրությունը և վերջնական եզրակացություն տալիս: Վերջինս ըստ էության հանդիսանում է հանքավայրի շահագործման թույլտվության գլխավոր փաստաթուղթը:

Բնապահպանության նախարարությունն իր բոլոր պաշտոնական հայտարարություններում և տարբեր մակարդակների քննարկումներում՝ Թեղուտի հանքավայրի շահագործման հարցում հստակ և անթաքույց շահագրգռվածություն է ցուցաբերում: Նույնիսկ դժվար է գնահատել, այդ խնդրում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունն է ավելի շահագրգիռ, թե՞ ՀՀ բնապահպանության նախարարությունը: Եվ ընդհանրապես, բնապահպանության նախարարության գործունեության մեջ բնապահպանական քաղաքականությունը համարյա բացակայում է, այդ նախարարությունն ավելի շուտ հիշեցնում է բնության դեմ կոշտ, նույնիսկ՝ թշնամական դիրք ընդունած բնօգտագործման-չարաշահման գերատեսչություն:

3. ՀՀ կառավարության որոշումների հիմնավորվածությունը

ՀՀ կառավարությունը Թեղուտի հանքավայրի շահագործման որոշումը կայացնելիս հաշվի չի առել կամ նրա տեսադաշտից դուրս է մնացել այն, որ Թեղուտի հանքավայրի նախագիծը թերի է, պարունակում է օրենսդրական և այլ կարգի կեղծիքներ ու խախտումներ: Իսկ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Նախագծին տրված փորձագիտական եզրակացությունն իրավական փաստաթուղթ չի կարելի համարել:

Այսպիսով, նշված հակաիրավական փաստաթղթերը հիմք են դարձել ՀՀ կառավարության N1278-Ն և N1279-Ն որոշումների կայացման համար:

N1278-Ն որոշմամբ՝ 1490,801 հեկտար հողեր (որից 1207,55-ը՝ անտառային) փոխադրվել են արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակություն ունեցող հողերի կատեգորիա: Որոշման մեջ ասվում է. «13. ...Թույլատրել ՀՀ **օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծերին** համապատասխան՝ շուրջ 357 հեկտար անտառային ծածկույթի հատումը:

14. Սույն որոշման մեջ նշված պետական սեփականություն հանդիսացող հողամասերն առանց մրցույթի՝ 50 տարի ժամկետով, հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասարեցված վճարով տրամադրել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ՝ հանքավայրի շահագործման նպատակով (բացահանքի, հարստացուցիչ ֆաբրիկայի, օժանդակ այլ կառույցների կառուցումը և այլն) օտարործելու համար, այդ թվում՝

1) կառուցվելիք բացահանքի տակ ընկնող 200,9 հեկտարը՝ վարձակալության իրավունքով,

2) հարստացուցիչ ֆաբրիկայի և օժանդակ այլ կառույցների տակ ընկնող 274,526 հեկտարը՝ կառուցապատման իրավունքով:

16. 2) Անտառի հատումներից մթերված բնափայտի իրացումից ռոյալցած միջոցներն ուղղել անտառկառավարման պլանով նախատեսված համալիր միջոցառումների իրականացմանը:

24. 3) Թեղուտի հանքավայրի նկատմամբ ունեցած հանքային իրավունքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի փոխանցելու դեպքում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ իրավունք ունի առանց սեփականատիրոջ համաձայնության նույն անձին փոխանցելու նաև ... վարձակալության իրավունքով իր օտարործմանը տրամադրված հողերի նկատմամբ օտարործման իրավունքը»:

Ինչպես տեսնում ենք, Թեղուտի հանքավայրի նախագիծը համարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, այն դեպքում, երբ

բացահայտված է Նախագիծը օրենսդրական կոպիտ խախտումներով հաստատման փաստը, ինչը բուռն քննարկումների առարկա է դարձել:

Պարզաբանման կարիք ունի, թե ի՞նչ է նշանակում՝ կառուցվելիք բացահանքի տակ ընկնող 200,9 հեկտարը վարձակալության իրավունքով 50 տարի ժամկետով ընկերությանը հանձնելը:

Նախ, բացահանքը չի կառուցվում, այն գոյանում է ավերման հետևանքով, և ապա, վարձակալության տալ ասելով հասկացվում է, որ համապատասխան ժամկետն ավարտվելուց հետո տվյալ տարածքը վերադարձվում է, սակայն այս դեպքում վերադարձնելու ոչինչ չի մնում, քանզի այդ տարածքը բնաջնջվելու է, ընդհանրապես: Այդ տարածքի փոխարեն առաջանալու է շուրջ 600 մետր խորությամբ խոռոչ, մեր ընկալմամբ՝ մահաշունչ, որոշ բարձրաստիճան պաշտոնյաների ընկալմամբ՝ «զբոսաշրջության համար գրավիչ»:

Ըստ Նախագծի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության գործունեությունը տևելու է 29 տարի (4 տարի՝ շինարարական աշխատանքներ, 25 տարի՝ շահագործում), սակայն Կառավարության հետ կնքած գործարքը 50 տարով է: Անհասկանալի է, թե ինչու գործունեության ավարտով չի սահմանափակվում նաև ընկերության հետ կնքած պայմանագիրը:

Որոշման մեջ հողերը դասվում են «պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի» և «ՀՀ օլիգատոնտեսության նախարարության «Հայանտառին» ամրացված անտառային հողերի»: Արդյո՞ք «Հայանտառին» ամրացված հողերը պետական սեփականություն չեն համարվում:

Որոշման այն դրույթը, որ «թուլլատրել շուրջ 357 հեկտար անտառային ծածկույթի հատումը», մեր կարծիքով, իր մեջ միտումնավորություն է պարունակում: Պարզ երևում է, որ փորձ է արվում անտառին հասցվելիք վնասը հնարավորինս փոքր ներկայացնել: Անհասկանալի է, թե ի՞նչ տրամաբանությամբ, Որոշման մեջ ավերվելիք և ոչնչացվելիք անտառային տարածքից հանվել են *թփուտները, բացատները, անտառային նշանակության այլ հողերը*: Եթե միայն ծառահատումներն են ներկայացվում, ապա ինչո՞ւ է դա ձևակերպվում՝ *անտառային ծածկույթի հատում*: Նախագիծ կազմողները երբեմն իրենց շահերից բխող՝ կողմնակալ մոտեցում են դրսևորում, որը օրենքով սահմանված կարգով պետք է որ կանխվի պետականորեն հատուկ լիազորված մարմինների կողմից: Սակայն խնդիրը անհամեմատ բարդ լուծում է պահանջում, երբ նշված կողմնակալ մոտեցումն արտացոլված է կառավարության որոշման մեջ: Արդյոք կա՞ մի մասնագետ, ով ըստ բուսատեսակների՝ անտառային տարածքների տարանջատումը և անտառային համակարգում դրանցից յուրաքանչյուրի՝ կարևոր և ոչ կարևոր լինելու դասակարգումը կարող է հիմնավորված համարել, ինչպես դա արված է ՀՀ կառավարության քննարկվող որոշման մեջ: Օրինակ, Խառատանոց գետի կիրճը, որտեղ ըստ Նախագծի լցվելու է միլիոնավոր տոննաներ պոչանք, հիմնականում ծածկված է բազմապիսի թփուտներով: Արդյո՞ք այդ թփուտները իրենց հողապաշտպան, ջրագոյացման ու ջրապաշտպան և այլ նշանակությամբ, ինչպես նաև անտառային կենդանիների համար պակաս կարևոր նշանակություն ունեն , քան ծառածածկ տարածքներն են:

Մենք տեղյակ ենք, որ Թեղուտի հանքավայրի նախագիծը կազմելիս՝ հաշվի չեն առել «Հայանտառի» կարծիքը, երբ «Հայանտառը» հանդիսանում է անտառների բնագավառում պետականորեն լիազորված մարմին: Մամուլի հրապարակումներից հայտնի դարձավ, որ կառավարության նշված որոշումը կայացնելիս նույնպես անտեսվել է «Հայանտառի» կարծիքը:

Տարակուսանք է առաջացնում նաև այն, որ Որոշման մեջ նշվում է, թե անտառի հատումներից մթերված բնափայտի իրացումից գոյացած միջոցները պետք է ուղղել անտառկառավարման պլանով նախատեսված համալիր միջոցառումների

իրականացնանք: Եթե ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի պլանով նախատեսված նշված միջոցառումները, ապա ի՞նչու է կապվում ծառահատումների հետևանքով գոյանալիք միջոցների հետ: Հավանաբար դա արվում է այն ենթատեսքով, որ իբր նշված միջոցառումները չեն իրականանա, եթե Թեղուտի հանքավայրը չչահագործվի:

Գործընթացը ցույց է տալիս, որ կարծես խաչ է դրվում Հայաստանի Հանրապետության անտառների վրա: Այսպես՝ անտառածածկ տարածքներում առկա են ընդերքի բնական պաշարներ, հանքարդյունաբերության թափոնների համար վճարներ սահմանված չեն, հանքարդյունաբերությամբ զբաղվողները և առհասարակ բոլոր ներդրողները մեր երկրում ցանկալի են և գործում է «ներդրողներին խանգարողները կպատժվեն» կարգախոսը: Անտառների նկատմամբ ոտնձգությունը միայն դրանով չի սահմանափակվում՝ ՀՀ կառավարությունը անտառային ֆոնդի նաև ոչ անտառածածկ հողերի կարգավիճակը փոխելով, օտարում է անտառային համակարգից, այսինքն՝ անտառածածկ տարածքների նվազման հետ մեկտեղ, նաև սահմանափակում է անտառների հետագա ընդլայնման հնարավորությունը:

Պակաս ուշագրավ չէ Թեղուտի հանքավայրի խնդրին վերաբերող N1279-Ն որոշումը. «Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահափորձման **նախագիծը** ... ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող օյուղատնտեսական նշանակության 81,483 հեկտար հողերի նկատմամբ ճանաչել բացառիկ՝ օերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1. սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շահը օերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի որ՝
 - ա. ծրագիրն ընդերքօտափորձման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն,
 - բ. ծրագրի իրականացումը կապահովի ՀՀ արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ,
 - գ. ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը,
 - դ. ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար, քանի որ ծրագրի իրականացման շրջանակներում էապես բարելավվելու է տարածաշրջանի՝ ենթակառուցվածքներով ապահովվածությունը (ծրագրի շրջանակներում կառուցվելու են նոր ճանապարհներ, անցկացվելու են օազամատակարարման, կենտրոնացված ջրամատակարարման և էներգամատակարարման համակարգեր), որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել համայնքային, միջհամայնքային և տարածաշրջանային զարգացման նոր ծրագրեր»:

Փաստորեն, հողատարածքները սեփականատերերից օտարելու և այդտեղ բացառիկ, հանրային գերակա շահ ճանաչելու համար հիմք է հանդիսացել այն նախագիծը, որը ինչպես արդեն ասվել է, օրենսդրական կոպիտ խախտումներով է կազմված, պարունակում է լուրջ թերություններ, իսկ դրան տրված փորձագիտական եզրակացությունն էլ հիմնազուրկ է:

ա) Դժվար է հաշտվել Որոշման այն դրույթի հետ, թե իբր Թեղուտի ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն:

Այժմ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում տարեկան վերանշակվում է 9,5 մլն տոննա հանքաքար, շահագործվում են նաև Լիճքավազ Թեյի, Տերտերասարի, Ագարակի, Կապանի, Շահումյանի, Ալավերդու, Շամլուղի, Ախթալայի, Սոթքի, Մեղրածորի և այլ հանքավայրերը: Բնական համակարգերի բնական օգտագործումից ելնելով, կարելի է ասել, որ մեր ընդհանուր շահերը պահանջում են, որ թվարկած հանքավայրերում հանքահանումը պետք է

սահմանափակվի, սակայն նոր հանքավայրեր են շահագործվում, դրանց թվում՝ Թեղուտի հանքավայրը:

Մեր կարծիքով, համապետական նշանակություն ունի Թեղուտի անտառների, վարելահողերի, այգիների, արոտավայրերի և ընդհանրապես բնական համակարգերի պահպանությունն ու այսօրվա վիճակում դրանց բնական օգտագործումը, այլ ոչ թե դրանց չհիմնավորված շահագործումը, փաստորեն ավերումը, աղտոտումը և ոչնչացումը:

բ) Համոզիչ չէ Որոշման այն դրույթը, թե իբր ծրագրի իրականացումը կապահովի ՀՀ արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ:

Իրոք, հանքավայրի շահագործման դեպքում, 25 տարների ընթացքում պղինձ, մոլիբդեն, թանկարժեք ու հազվագյուտ մետաղներ պարունակող խտանյութերի (կոնցենտրատների) արտահանման ծավալները կմեծանան, սակայն արդյո՞ք դա տնտեսապես հիմնավորված է և շահեկան մեր երկրի համար: Մետաղների խտանյութերի արտահանումը չպետք է նույնացվի արդյունաբերական ապրանքների արտադրության ու արտահանման հետ: Մետաղների խտանյութերի դեպքում՝ ճիշտ կլինի ասել՝ բնական պաշարների-հանքահումքի արտահանում: Համեմատության համար ասենք, որ խտանյութերի արտահանումը շատ ավելի վտանգավոր հետևանքներ է ծնում, քան հանքանյութը բնական վիճակում արտահանելն է, քանի որ հանքանյութի արտահանման դեպքում երկրում չեն գոյանա հանքարդյունաբերական մահաբեր թափոնները:

Որոշման մեջ նշված արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների աճը, պարզ է, որ կատարվելու է ապրելու համար անհրաժեշտ տարածքների նվազեցման և բնական չվերականգնվող պաշարների չարաշահման հաշվին: Օրինակ, Թեղուտի հանքավայրի շահագործման հետևանքով հողատարածքների և ջրային համակարգերի կորստի և ավերման հետ մեկտեղ, հանքարդյունաբերական թափոնների տարածմամբ աստիճանաբար օգտագործումից դուրս են գալու նաև հարակից հողային և ջրային համակարգերը...

Ակնհայտ է, որ այս կետում նույնպես բացառիկ, գերակա հանրային շահ չի նկատվում:

գ) Անդրադառնանք Որոշման այն դրույթին, թե իբր ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը:

Նախագծում (հատոր 9, էջ 14) ասվում է, որ տարեկան մաքուր շահույթը կազմելու է 32,86 մլն դոլար: Պարզ է, այդ շահույթը պատկանելու է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությանը, իսկ շահույթի 20 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությանը (հասկանալի է, որ դա կարող է լիարժեք իրականացվել, եթե հարկման վրա հսկողությունն ուժեղացվի և չարաշահումներ չլինեն): Սակայն, արդյո՞ք այդ 20 տոկոսը պետք է ամրապնդի մեր երկրի տնտեսական անվտանգությունը:

Ավելի քան 3000 գյուղատնտեսական կայուն աշխատատեղերին կորուստ պատճառելով, բնակության կենարար միջավայրն ավերելով, աղտոտելով, ոչնչացնելով, բարեբեր տարածքներն ապրելու համար ոչ պիտանի դարձնելով՝ ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելով, տարեկան խոստացված 6-7 մլն դոլարին համարժեք դրամ բյուջեն ավելացնելով, երկրի բնական պաշարներն արագընթաց սպառման տանելով ոչ միայն հնարավոր չէ երկրի տնտեսական անվտանգությունն ամրապնդել, այլև վստահորեն կարելի է ասել, որ այդպիսի գործելակերպը ժամանակավոր տնտեսական կեղծ դրական տեղաշարժ ունենալով հանդերձ, ակնհայտորեն բերելու է տնտեսության թուլացման և քայքայման:

Եթե խնդիրը մեր երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանն է վերաբերում, ապա ոչ թե համաժողովրդական-պետական հարստությունը պետք է հանձնվի օտարերկրյա ընկերություններին և նրանցից սպասվի շահույթի 20 տոկոսը

(որը տարբեր պատրվակներով միշտ չէ, որ մուծվում է), այլ ՀՀ կառավարությունը պետք է տեր կանգնի իր սեփական ունեցվածքին, հանքավայրերն ինքը շահագործի և պետական բյուջեն հարստացնի ոչ թե նշված տոկոսներով, այլ հանքավայրերի շահագործումից առաջացած ամբողջ շահույթով: Դրա հետ մեկտեղ, հանքարդյունաբերություն ասելով, գլխավորապես փոքր տարածք ունեցող Հայաստանի Հանրապետության համար, պետք է հասկացվի ոչ թե միաժամանակ բազմաթիվ հանքավայրերի հապճեպորեն շահագործում, մետաղների խտանյութերի արտահանում, այլ՝ հանքանյութի տարեկան օգտագործման չափավորում, հիմնական և ուղեկցող մետաղների և այլ օգտակար նյութերի հնարավորինս լիարժեք կորզում, ժամանակակից չափանիշներին համապատասխանող մաքուր մետաղների ստացման արտադրությունների հիմնում:

Եթե խնդիրը մեր Երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանն է վերաբերում, ապա մեր Երկրում հանքահանությանը զբաղվողներին անհապաղ պետք է զրկել հանքարդյունաբերական թափոնները համապատասխան վայրերում թափելու դիմաց բնապահպանական վճար չմուծելու հիմնազուրկ արտոնությունից: Միայն այդ քայլով հնարավոր կլինի կանխել Հայաստանի Հանրապետության տարածքը խոշորածավալ ավերումից ու աղտոտումից: Այդպիսի քաղաքականության պայմաններում օգտակար հանածոների ցածր պարունակության հանքավայրերը չեն շահագործվի և կվերանա մեր Երկրում ծավալվող «հանածոների տենդը»: Իսկ եթե հանքարդյունաբերական թափոնները դասվեն իրենց վտանգավորության աստիճանին համապատասխան և անհեռանկարորեն չլցվեն գետերի հունները, կիրճերը, ապա օգտակար հանածոների օգտագործումն իրոք կբերվի իրավական դաշտ և կհամապատասխանեցվի մեր Երկրի շահերին:

դ) Հիմնավորված չէ նաև Որոշման այն դրույթը, թե իբր ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Շնորհ, Թեղուտ և մոտակա բնակավայրերի բնակիչները վաղ գարնանից մինչև ուշ աշուն օգտվում են շրջակա բնության բարիքներից (ուտելի բույսեր և դեղաբույսեր, սնկեր, հատապտուղներ, մրգեր և այլն), ինչից կզրկվեն Թեղուտի հանքավայրը շահագործելու դեպքում ոչ միայն տարածքների ավերման-ոչնչացման, այլև հիմնականում տարածքների աղտոտման պատճառով: Կցանկանալինք իմանալ. այդ ո՞ր բնակավայրերն են, որոնց սոցիալական վիճակը բարելավվել է իրենց տարածքներում կամ հարևանությամբ գտնվող հանքավայրերի շահագործման հետևանքով: Օրինակ, այդ տարածաշրջանի Շամլուղ և Ախթալա ավաններն անցյալ դարի 60-ականներին համարվել են տեղի ամենաբարեկեցիկ բնակավայրերը: Այդտեղ հանքահանում, հանքավերամշակում սկսելիս խոստանում էին, որ նշված բարեկեցությունը կկրկնապատկվի ու կեռապատկվի: Սակայն այսօր այդ բնակավայրերն արդեն քայքայվում են: Նույնը կարելի է ասել մյուս հանքավայրերի և դրանց թափոնների, գլխավորապես պոչամբարների հարևանությամբ գտնվող բնակավայրերի մասին:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը չնչին գումարներով (մեկ քառակուսի մետրը 30-40 դրամ) գնում է այդ երկու գյուղերի բնակիչների վարելահողերն ու այգիները: Փաստորեն, գյուղացին կորցնում է իր ապրուստի հիմնական միջոցը և ավանդական աշխատանքը, ինչը պայմաններ է ստեղծում տարածքը լքելու համար:

Նոր աշխատատեղեր ստեղծելով՝ սոցիալական վիճակը բարելավելու խոստումները նույնպես հիմնավորված չեն: Ըստ Նախագծի, ստեղծվելու է 1432 ժամանակավոր աշխատատեղ (տարեկան միջին աշխատավարձը 2400 դոլար, «Աշխատանքային նախագիծ, հ. 9, էջ 14»), սակայն տարածքների աղտոտման պատճառով աստիճանաբար կվերանան այժմ գոյություն ունեցող վերը նշված ավելի քան 3000 մշտական աշխատատեղերը:

Նաև՝ հանքարդյունաբերական աշխատանքներում 1432 մարդ ներգրավելու համար «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը 257 մլն դոլար վարկ է վերցրել, այսինքն՝ յուրաքանչյուր աշխատատեղի հաշվով ավելի քան 172 հազար դոլար է ծախսվելու: Հետաքրքիր է իմանալ, թե ՀՀ կառավարությունն իր բյուջեից ինչ միջոցներ է հատկացնում Շնոդ և Թեղուտ բնակավայրերում առկա ավելի քան 3000 աշխատատեղերը պահպանելու և դրանց արդյունավետությունը մեծացնելու համար:

Հայտարարելուց զատ, պետք է նաև հիմնավորվի, թե այդ որ խնդրո՞ւմ է, որ նշված ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից: Վստահորեն կարելի է ասել, որ այդպիսի շահ գոյություն չունի:

Արդյո՞ք «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը հուսալի գործընկեր է

ՀՀ կառավարության նշված որոշումների կայացումը զարմանք է հարուցում նաև այն առումով, որ «Վալլեքս գրուպ»-ի մեջ ընդգրկված «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը տապալել է կառավարության հետ ավելի քան 10 տարի առաջ կնքած իր պայմանագիրը. չի կատարել Ալավերդու պղնձածուլարանը ժամանակակից չափանիշներով գործարկելու, քաղաքի մթնոլորտ արտանետվող նյութերից ծծմբական թթու կամ գիպս ստանալու, անօրգանական փոշին (հիմնականում ծանր մետաղների աերոզոլներ), մկնդեղը, կապարը, ցինկը, պղինձը և այլն որսալու, օգտահանելու, նշված և այլ նյութերի արտանետումները գործիքային եղանակով չափելու, մաքուր պղինձ և ուղեկցող թանկարժեք ու հազվագյուտ մետաղները տեղում ստանալու ստանձնած պարտավորությունները:

Նշված պարտավորությունների կատարումը խթանելու համար ՀՀ կառավարությունը Ընկերությանը տարիներ շարունակ արտոնել է բնապահպանական վճարները միայն մասնակիորեն վճարել:

Այդուհանդերձ, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության գործունեությունն Ալավերդի քաղաքում աղետալի իրավիճակ է ստեղծել: Այստեղ անհրաժեշտ ենք համարում մեջբերում կատարել «Արմենիանալու» ինտերնետային շաբաթաթերթից (www.armenianow.com, 2006թ., N17, ապրիլ). «Առողջապահության նախարարության տրամադրած վիճակագրությունը պարզ արտացոլում է, թե ինչպիսի խնդիրներ են սկսում 2000թ. հետո: Եթե 1992թ., երբ գործարանը չէր աշխատում, չի արձանագրվել ոչ մի արատավոր ծնունդի դեպք, ապա 2001թ. Ալավերդիում գրանցվել է բնածին շեղումով 28 դեպք, իսկ 2004թ. այդ թիվն աճել է մոտավորապես 5 անգամ՝ հասնելով 107-ի: «Վերջին մեկ տարվա ընթացքում հայտնաբերել ենք հիդրոցեֆալիա (երբ ուղեղի փոխարեն պտղի մոտ ջուր է՝ ուղեղի գերջրություն), անենցեֆալիա՝ գլխի դիմային մասը կա, իսկ ուղեղը չկա, ողնաշարի ճողվածք, «երկու գլխանի» պտուղ (գլխանման պարկ լցված ջրով) և այլ արատներ: Դրանք հիմնականում կյանքին անհամատեղելի արատներ են և մինչև ծննդաբերությունը արհեստական վիժում է կատարվում», - ասում է Ալավերդու ծննդատան գլխավոր բժիշկ Ամալյա Ազատյանը: Ըստ վիճակագրության, բացի պերինատալ շրջանում առաջացած արատներից ու հիվանդություններից, վերջին մի քանի տարում ավելացել է նաև չարորակ գոյացություններ ունեցող մարդկանց թիվը: Ալավերդու պոլիկլինիկայի տվյալների համաձայն՝ եթե 2002թ. գրանցվել է 360 դեպք, ապա 2003թ. արդեն 392 և 2004-ին՝ 411: Գրեթե նույն պատկերն է շնչառական հիվանդությունների պարագայում: Եթե 2001-ին գրանցվել է շնչառական հիվանդություններով մինչև 14 տարեկան 697 երեխա, ապա 2003-ին այդ թիվը կրկնապատկվել է՝ հասնելով 1389-ի: Ըստ Ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտի արդյունաբերական թունաբանության լաբորատորիայի ղեկավար Էմիլ Բաբայանի, Ինստիտուտի կատարած հետազոտությունները պարզել են, որ Ալավերդու

մանկապարտեզներում երեխաները մտավոր ունակություններով 7-10 բալով նորմայից ետ են մնում: Հակառակն է պնդում կոմբինատի ներկայացուցիչ Անդրանիկ Ղամբարյանը. «Դրանք սուտ տեղեկություններ են: Ոչ մեկը չի կարող բացառել, որ արտանետումները կան, բայց դա վնաս չի տալիս: Մարդիկ նախանձից են մնան լուրեր տարածում»: Պղնձածուլական կոմբինատի ղեկավարությունը հավաստիացնում է, որ մոտ ապագայում տեղադրվելու են ֆիլտրեր, որոնք կանխելու են օդային ավազանի աղտոտումը: «2008-ի վերջերին երկու փուլով կգործարկվեն ֆիլտրերը, որոնք կլուծեն էկոլոգիայի խնդիրը: Տեխնիկան բերում են Սլովակիայից: Մի մասը նոր է, մի մասը՝ օգտագործված», - ասում է «ԷյՍիՓի» ընկերության լրատվական բաժնի ղեկավար Թագուհի Կարապետյանը: Մինչդեռ Ալավերդու քաղաքային իշխանության որոշ օղակներ (ովքեր չցանկացան հրապարակել իրենց անունները) փաստում են, որ ներկրվող սարքավորումներն արտադրությունից դեմոնտաժված են և, ըստ էության, խոտան»:

Հավելենք. ըստ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի տվյալների, 2006 թվականին յուրաքանչյուր ալավերդցուն բաժին է հասել 1659 կգ թունավոր նյութեր, հիմնականում ծծմբային անհիդրիդ, նաև մկնդեղ, ցինկ, կապար, պղինձ, մոլիբդեն և այլն: Այդքանը միայն անշարժ աղբյուրներից: Համեմատության համար նշենք, որ այդ թվականին, ոչ մաքուր մթնոլորտ ունեցող Երևան քաղաքի յուրաքանչյուր բնակչին բաժին է հասել 2,3 կգ վնասակար նյութեր: «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը 1997-2006 թվականներին Ալավերդու պղնձածուլարանում արտադրել է համապատասխանաբար՝ 286, 2789, 535, 6840, 4955, 4670, 6259, 9470, 9882, 8792 տոննա պղինձ: Բերենք նաև որոշ տվյալներ Ալավերդի քաղաքի ծննդի և մահվան վերաբերյալ: 1994թ. ծնվածներ՝ 273, մահացածներ՝ 241, 1995թ. ծնվածներ՝ 239, մահացածներ՝ 212, 1996թ. ծնվածներ՝ 253, մահացածներ՝ 234, 1997թ. ծնվածներ՝ 234, մահացածներ՝ 177, 1998թ. ծնվածներ՝ 216, մահացածներ՝ 197, 1999թ. ծնվածներ՝ 185, մահացածներ՝ 186, 2000թ. ծնվածներ՝ 208, մահացածներ՝ 206, 2001թ. ծնվածներ՝ 196, մահացածներ՝ 185, 2002թ. ծնվածներ՝ 205, մահացածներ՝ 185, 2003թ. ծնվածներ՝ 219, մահացածներ՝ 219, 2004թ. ծնվածներ՝ 204, մահացածներ՝ 190, 2005թ. ծնվածներ՝ 201, մահացածներ՝ 180, 2006թ. ծնվածներ՝ 179, մահացածներ՝ 195:

«Վալլեքս գրուպ»-ը, իմա՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը բնապահպանական խնդիրների նկատմամբ պատշաճ վերաբերմունք չի դրսևորում նաև Արցախում: Օրինակ, Դրմբոնի հանքավայրը շահագործելիս պոչամբարները տեղադրել է Սարսանգի ջրամբարի անմիջական հարևանությամբ, առանց հատակի մեկուսացման...

Անհասկանալի է, թե ՀՀ կառավարությունն ի՞նչ հիմնավորմամբ է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության հետ նոր գործարքներ կնքում...

Նաև՝ եթե մինչ Թեղուտի հանքավայրին տիրանալը «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը խնդրին վերաբերող քննարկումներում և մամուլի հրապարակումներում հայտարարում էր, որ Ալավերդու պղնձածուլարանում թվարկած միջոցառումների իրականացումը հնարավոր կլինի միայն Թեղուտի հանքավայրի շահագործումից հետո, ապա ՀՀ կառավարության N1278-Ն և N1279-Ն որոշումները կայանալուց հետո ընկերությունն արդեն հայտարարում է, որ փակելու է պղնձածուլարանը, իսկ պղնձի խտանյութն արտահանելու է, քանզի սպասվում է բնական գազի գնի բարձրացում, ինչը կմեծացնի պղնձի ինքնարժեքը: Ընկերությունն այս անգամ էլ արդեն շրջանառության մեջ է դրել փակվելիք պղնձածուլարանի փոխարեն այլ ձուլարան կառուցելու վարկածը, իբրև աշխատատեղ ստեղծելու և մաշված սարքավորումներն ու մեքենաները ձուլելու նպատակով: Հարց է առաջանում՝ արդյո՞ք այդ դեպքում գազ չի ծախսվելու:

Եվս մեկ խնդիր: «Առավոտ» օրաթերթը (12.12.2007թ.) գրում է. «Օրերս «ՎՏԲ» բանկը «ACP» ընկերությանը մոտ 300 մլն դոլարի վարկ տրամադրեց՝ Թեղուտի

հանքավայրի շահաօրժման համար: Մեր տեղեկություններով, մինչ այս օրո՞ւր չէր «ACP»-ն վարկ ստանալու համար բանակցություններ էր վարում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, սակայն անկախ միջազգային փորձաօճետի ուսումնասիրություններից հետո բանկը հրաժարվել է վարկը տալ: Ըստ մեր աղբյուրի, թեև անկախ փորձաօճետը Թեղուտի շահաօրժումը ֆինանսական առումով դրական է օճահատել, սակայն բնապահպանական խնդիրների և հասարակական կազմակերպությունների բարձրացրած աղմուկի պատճառով հրաժարվել է ֆինանսավորել: «ACP» ընկերության ղեկավար Գաօիկ Արզումանյանը «Առավոտին» պարզաբանեց, որ եվրոպական բանկի հետ բանակցություններ են եղել ոչ թե Թեղուտի հանքի շահաօրժման, այլ Ալավերդու պղնձածուլական օրժարանի համար: Սակայն օրժարքը տեղի չի ունեցել Ադրբեջանի կառավարության բանկին բողոք ներկայացնելու պատճառով: ... Անկախ փորձաօճետի առնչությամբ էլ պարոն Արզումանյանն ասաց. «Թեղուտի համար Եվրոբանկը որևէ անկախ փորձաօճետ չի ներօրավել»:

Մեր ձեռքի տակ է «Initial Environmental, Social, Health and Safety Review, Armenian Copper Programme, Armenia, July 2006, WSP» 47 էջանոց փաստաթուղթը, որի 4-րդ էջում կարդում ենք. «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը WSP ընկերությանը պատվիրել է իրականացնել հյուսիսային Հայաստանում իր օրժումնեության բնապահպանական, անվտանգության, առողջապահական և սոցիալական բարձր մակարդակի օճահատում: Ծրագիրը նախորդել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ընկերությունում նախատեսվող ներդրումներին և ուսումնասիրել է չորս հիմնական ոլորտ՝ օրժարանի որպես ամբողջություն, սահմանված պահանջներին համապատասխանության ներկա աստիճանը, ծուլարանի համար օազերի թաց մաքրման համակարգի նախատեսվող կառուցումը, Ալավերդու և Թեղուտի երկու հանքավայրերում նախատեսվող աշխատանքները»:

Այդ աշխատությունում առկա է Թեղուտի հանքավայրին վերաբերող բաժինը և նշված է աշխատանքներին մասնակիցների ցանկը (Ռ. Պապոյան, Գ. Բաբայան, Ա. Եգորյան, Ա. Առաքելյան, Ա. Նաջարյան, Ս. Երիցյան, Հ. Ավագյան), իսկ ՀՀ եկած անկախ փորձագետը David Symons-ն է:

Տպավորություն է ստեղծվում, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը՝ ի դեմս Ռուսաստանի քաղաքացի Վալերի Մեջլումյանի, Հայաստանի Հանրապետությունում բացառիկ արտոնություններ ունի: Չի կատարում ստանճնած պարտավորությունները, սակայն ՀՀ կառավարությունը նրա հետ տնտեսական գործունեության նոր պայմանագրեր է կնքում: Ավելին, ՀՀ նախագահի հրամանագրով (14.10.2003թ.) Վ. Մեջլումյանն ընդգրկվել է ՀՀ ընդերքօգտագործման խորհրդատվական հանճնաժողովի կազմում, այն դեպքում, երբ նա ՀՀ քաղաքացի չէ և մեր Երկրի հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեություն է ծավալում, այսինքն՝ այդ հարցում շահագրգիռ անճ է:

Այստեղ նաև ցանկանում ենք մեր մտահոգությունն արտահայտել քննարկվող Նախագծին առնչվող մի կարևոր խնդրի վերաբերյալ: Ըստ Նախագծի՝ Թեղուտի հանքավայրի բաժնետոմսերի 81 տոկոսը պատկանում է Լիխտենշտեյնում գրանցված Vallex F. M. Establishment ընկերությանը, իսկ 19-ը՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությանը՝ ի դեմս Ռուսաստանի քաղաքացի Վալերի Մեջլումյանի: Զարմանք է հարուցում, որ այդ ծրագրի բաժնետոմսերի մեծամասնության տերը մինչ այսօր տեսադաշտում չի երևում, հայտնի չէ նրա մասին որևէ փաստ, նրա ով լինելը: Նաև անհասկանալի է, թե ինչո՞ւ ծրագրի հետ կապված բոլոր հոգսերն իր վրա է վերցրել բաժնետոմսերի միայն հիմնգերող մասի տերը՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը, որը դիմել և ստացել է հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության արտոնագիրը, կազմել ու ներկայացրել է Նախագիծը և դրա հետ

կապված պաշտոնական և ոչ պաշտոնական բոլոր գործողություններում հանդես է գալիս միայն ինքը:

Ամփոփում

ՀՀ կառավարության N1278-Ն որոշումը պատմական որոշում է, սակայն վատագույն իմաստով, քանզի այդ որոշմամբ փաստորեն փոխվում է անտառների նկատմամբ վարվող պետական քաղաքականությունը և հիմք է դրվում Հայաստանի անտառների ոչնչացման գործընթացին՝ այն առումով, որ ՀՀ անտառածածկ տարածքներում հիմնականում առկա են օգտակար հանածոներ:

ՀՀ կառավարության որոշման մեջ թեղուտի հանքավայրի նախագիծը համարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, այն դեպքում, երբ բացահայտված է Նախագիծը օրենսդրական կոպիտ խախտումներով հաստատման փաստը: Այդ նույն նախագիծը հիմք է հանդիսացել թեղուտի հանքավայրի շահագործման և հողատարածքները սեփականատերերից օտարելու և այդտեղ բացառիկ՝ հանրային գերակա շահ ճանաչելու համար:

Նախագծում տնտեսական վնասի գնահատումը հիմնականում կատարել են հնացած մեթոդական ձեռնարկներով, ինչպես և այսօրվա գները համեմատության մեջ են դրել 1984թ. գների հետ՝ մեկ ռուբլուն մեկ դոլար հաշվարկով, երբ դրանց գնողունակությունները կտրուկ տարբեր են և համեմատելի չեն:

Թեղուտի հանքավայրի բաժնետոմսերի մեծամասնության տերը մինչ այսօր տեսադաշտում չի երևում, հայտնի չէ նրա մասին որևէ փաստ, նրա ով լինելը:

ՀՀ բնապահպանության նախարարությունն անտեսելով օրենսդրական պահանջները «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կազմած, լուրջ թերություններ ունեցող թեղուտի հանքավայրի նախագիծն ընդունել է և առանց փորձագիտական ուսումնասիրություն կատարելու, դրան տվել է դրական եզրակացություն:

ՀՀ բնապահպանության նախարարությունը թեղուտի հանքավայրի նախագծի կապակցությամբ չի կատարել օրենքով սահմանված պահանջները. չի կանխորոշել նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը և դրա կանխարգելման ուղղությամբ պահանջվող անելիքները, անտեսել է բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջները: Կատարված փորձաքննությունում բացակայում են գիտական հիմնավորվածության և օրինականության, ինչպես նաև որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքները:

Բնապահպանության նախարարությունը, առանց հիմնավորման, անտառածածկ տարածքում հանքահանման նպատակով ուսումնասիրություն կատարելու արտոնագիր է տվել: Բացակայում են նաև լեռնային գետակների հունները թափոնների պահեստարաններ դարձնելու հիմնավորումը հաստատող փաստաթղթերը:

Համապետական նշանակություն ունի թեղուտի անտառների, վարելահողերի, այգիների, արոտավայրերի և ընդհանրապես բնական համակարգերի պահպանությունն ու այսօրվա վիճակում դրանց բանական օգտագործումը, այլ ոչ թե դրանց չհիմնավորված շահագործումը, փաստորեն՝ ավերումը, աղտոտումը և ոչնչացումը:

ՀՀ կառավարության նշված որոշումների կայացումը զարմանք է հարուցում նաև այն առումով, որ Վալլեքս գրուպի մեջ ընդգրկված «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը չի կատարել ՀՀ կառավարության հետ կնքած պայմանագիրը՝ Ալավերդու պղնձածուլարանը ժամանակակից չափանիշներով գործարկելու, քաղաքի մթնոլորտ արտանետվող նյութերից ծծմբական թթու կամ գիպս ստանալու, անօրգանական փոշին, մկնդեղը, կապարը, ցինկը, պղինձը և այլն որսալու,

օգտահանելու, նշված և այլ նյութերի արտանետումները գործիքային եղանակով չափելու, մաքուր պղինձ և ուղեկցող թանկարժեք ու հազվագյուտ մետաղները տեղում ստանալու ստանձնած պարտավորությունները:

Համոզված ենք, որ Թեղուտի խնդիրը, որպես պետական անվտանգության նշանակություն ունեցող առանձնահատուկ խնդիր, բազմակողմանի ու մանրազնի կուսումնասիրվի և արդյունքում նշված որոշումները չեղյալ կհամարվեն, ինչպես նաև կվերանայվեն ՀՀ օրենքների մեջ տեղ գտած, օրինակ, հանքարդյունաբերությանը վերաբերող անընդունելի այն սահմանումները, որոնք բխում են միայն առանձին անհատների շահերից և վնասաբեր են մեր երկրի համար:

25.12.2007թ.

հեռ. 281411, էլ. փոստ armgreen@ipia.sci.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն. Ընդերքի ոլորտում վարվող քաղաքականությունը կործանարար է Հայաստանի համար	2
Ջոհասեղանին են դրված Լոռվա մարզի Թեղուտ և Շնող գյուղերն իրենց հարակից անտառներով	7
Опасные игры	34
Քառակողմ դաշինք՝ բնության ու մարդու դեմ	37
Օրենքն ու բարոյականությունը՝ արհամարհված	43
Թեղուտի խնդիրը Արա Բաբլոյանի ջանքերով «ջրվեց»	50
Թեղուտի հանքավայրի շահագործումը ոչ միայն հանրային շահ չէ, այլև հանրության դեմ ուղղված գործողություն է	52